


Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՍԱՐՄԱՆԱԴՐՎԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԶԵՂԱԿՐԿ ԲՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՐ



«Նժար» իրատ., 2002

Պատրաստվել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից հաստատված թեմատիկ ծրագրի հիման վրա: Երաշխավորվել է տպագրության նույն խորհրդի եւ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի կողմից:

**Հարությունյան Գ. Գ.** – իրավ. գիտ. դոկտ., ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի նախագահ

### **ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՂՈՒԹՅՈՒՆ**

Խմբագիր՝ Վ. Յովհաննիսյան – իրավ. գիտ. թեկն., Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության խորհրդի նախագահ

«Սահմանադրական վերահսկողություն» առարկան 1997 թվականից դասավանդվում է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում եւ հանրապետության մի շարք այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ներկայում այն խորացված ուսուցանվում է հատկապես մագիստրատուրայում սովորողների համար: Սույն ուսումնական ձեռնարկը, հաշվի առնելով նախկինում այդ նապատակով հրատարակված աշխատանքները, ինչպես նաև առարկայի դասավանդման փորձը, ամբողջական ու համակարգված ներկայացնում է սահմանադրական վերահսկողությանը եւ, մասնավորապես, սահմանադրական արդարադատությանը Վերաբերող նյութը՝ սահմանադրականության զարգացման ներկայիս ձեռքբերումների հիման վրա, ուսումնական ծրագրերին համապատասխան եւ ուսանողին մատչելի ձեռով:

Հատուկ ուշադրություն է դարձվել ուսուցման ակտիվ մեթոդին՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին մասնակից դարձնելու բանավիճային հարցերի քննարկմանը, սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման միտումների եւ տարբեր երկրներում դրանց դրսեւումնան առանձնահատկությունների համեմատական վերլուծության միջոցով:

Զերնարկն օգտակար կարող է լինել նաև սահմանադրական իրավունքի, իրավունքի տեսության եւ փիլիսոփայության, քաղաքագիտության հարցերով հետաքրքրվող եւ հասարակության զարգացման տարբեր հիմնահարցերով զբաղվող ընթերցողների լայն շրջանակի համար:

- Նախաբան**  
Գլուխ I  
Գլուխ II  
Գլուխ III  
Գլուխ IV  
Գլուխ V  
Գլուխ VI  
**Հավելված (Սխեմաներ)**  
Գրականության ցանկ

## ՆԱԽԱԲԱՆ

Իրավական, ժողովրդավարական պետության պետական իշխանության համակարգում բացառիկ կարեւոր տեղ եւ դեր ունի սահմանադրական վերահսկողությունը: Հասարակության բնականոն զարգացման համար անհրաժեշտ է նախ. ծեւավորել պետական իշխանության գործուն համակարգ՝ ապահովելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների հստակ տարանջատումը եւ, անհրաժեշտ օսպումների ու հակալշխոների համակարգի գործադրմանը՝ դրանց ներդաշնակ աշխատանքը: Երկրորդ՝ էական է, որպեսզի այս հարցում հասարակական համաձայնությունը դիմական օրենքի նորմերի ուժ ստան: Երրորդ՝ որպես անհրաժեշտ եւ բավարար պայմանների հիմնական բաղադրիչներից է եւ այն, թե գործնականում, հարափոփոխ հասարակական պրակտիկայում ինչպե՞ս է պահպանվում Սահմանադրությանը ծեռք բերված հասարակական համաձայնությունը՝ կենսագոյի հիմնական նպատակների, սկզբունքների ու հարաբերությունների շուրջ:

Հասարակագիտության բնագավառի յուրաքանչյուր մասնագետի, առավել եւս իրավաբանի համար անչափ կարեւոր է հասու լինել հասարակության զարգացման իրավական կարգավորման ամբողջ համակարգին՝ հարաբերությունների բնույթի ճանաչում, օրենքի ընդունում, դրա գործադրում եւ համակարգի աշխատանքի վերահսկում՝ գործառությների անքակտելի կապի ու միասնության մեջ:

Սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս որպես հնարավորություն եւ միջոց՝ Սահմանադրության գերակայության ապահովման ճանապարհով հասարակության զարգացմանը կայուն դիմամիզմ հաղորդելու համար:

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ներկա խնդիրներն իրավաբան կադրերից պահանջում են խոր գիտելիքներ իրավունքի տեսության, իրավունքի փիլիսոփայության, սահմանադրական իրավունքի, համեմատական իրավունքի եւ այլ բնագավառներում, որն անհրաժեշտ է նաև սահմանադրական վերահսկողության համակարգի համակողմանի ուսումնասիրման եւ այս ոլորտում միջազգային փորձին հաղորդակից դաշնալու համար: Դա պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով, որոնցից հարկ է առանձնացնել.

Նախ՝ անցումային հասարակություններում համակարգային վերափոխումները պահանջում են այն իրականացնել վերահսկելի հունով՝ թույլ չտալով քառոս ու անկառավարելիություն:

Երկրորդ՝ ժողովրդավարական հասարակական հարաբերությունները ենթադրում են սահմանադրական ճանապարհով իրավունքի գերակայության եւ օրենքի իշխանության հաստատում, սահմանադրական կարգի հուսալի պաշտպանություն:

Երրորդ՝ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգն ամբողջ աշխարհում 20-րդ դարի ծնունդ է եւ նոր երեւույթ հասարակական հարաբերությունների կառավարման բնագավառում: Այն դեռեւս ակտիվ որոնումների ու նոր զարգացումների փուլում է գտնվում:

Չորրորդ՝ սահմանադրական արդարադատությունն առանձնահատուկ դեր ունի մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, առանց որի վերջինս չի կարող երաշխավորված ու ամբողջական բնույթ ունենալ:

«Սահմանադրական վերահսկողություն» դասընթացի սույն ձեռնարկի նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրելու եւ ճանաչելու ընդիանրապես սահմանադրական վերահսկողության եւ, մասնավորապես, սահմանադրական արդարադատության դերը պետական իշխանության համակարգում, ծանոթանալու սահմանադրական արդարադատության ծեւերին, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմններին, դրանց կազմավորման, լիազորությունների իրականացման կարգին ու առանձնահատկություններին:

Դասագրքում մատչելի ձեւով պարզաբանվում են դատական սահմանադրական վերահսկողության ամերիկյան եւ եվրոպական համակարգերի ընդիանրություններն ու տարբերությունները, բնութագրվում են դրանց զարգացման պատճեական փուլերը, ներկայացվում են սահմանադրական արդարադատության օբյեկտներն ու սուբյեկտները, վերլուծվում են սահմանադրական դատարանների փոխհարաբերությունները պետական իշխանության տարբեր ինստիտուտների հետ:

Դասընթացը ներկայացվում է համեմատական վերլուծության սկզբունքով՝ ներառելով բազմաթիվ երկրների փորձը, որն ունի ոչ միայն լայն ճանաչողական նշանակություն, այլև զգալի չափով դյուրացնում է նյութի յուրացումը:

Զերծարկում հատուկ տեղ է հատկացվել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության առանձնահատկություններին ու այս համակարգի հետագա զարգացման խնդիրներին:

Հաշվի առնելով առարկայի հնգամյա դասավանդման փորձը Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ինչպես նաև հեղինակի կողմից նախկինում պատրաստված ուսումնաօժանդակ նյութերի ամբողջականացման անհրաժեշտությունը, սույն ձեռնարկում հաշվի են առնվել այս ոլորտում գիտության եւ պրակտիկայի վերջին ընդհանրացումները, առաջարկվող սխեմաների ու պրոբլեմային հարցադրումների միջոցով ուսանողները նյութը կուսումնասիրեն ակտիվ բանավեճի, տարբերակների համադրման ու ծիշտ լուծումների որոնման միջոցով։ Դա հատկապես խիստ անհրաժեշտ է նագիստրատուրայում սովորող ուսանողների հետ տարվող աշխատանքի համար։

«Սահմանադրական վերահսկողություն» ձեռնարկը մեծապես կօգնի ուսանողներին լրացնելու գիտելիքները սահմանադրական իրավունքի բնագավառում, դառնալու լիարժեք ու բանիմաց մասնագետ։

## ԳԼՈՒԽ I. ՍԱՐՄԱՆԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿՐՈՒՄԸ

### 1.1. «Սահմանադրական վերահսկողություն» հասկացությունը: Սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ

Սահմանադրական վերահսկողություն հասկացությունն անմիջականորեն առնչվում է Սահմանադրության եւ սահմանադրութեն ամրագրված նորմերի ու սկզբունքների պահպանման, այդ հարցում պետական իշխանության տարբեր մարմնների լիազորությունների միջեւ սահմանված հաշվեկշռի ապահովման, ինչպես նաև մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ապահովման խնդրին։ Այլ կերպ, սահմանադրական վերահսկողության գլխավոր առաքելությունն է ապահովել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, պահպանել իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռը եւ երաշխավորել Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը։ Իրավական պետության գլխավոր բնութագրին մեկը հենց երկիր Հիմնական օրենքի գերակայության ապահովումն է։ Իր հերթին, Սահմանադրությունը պետք է խարսխված լինի մարդկանց բնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ժողովրդավարության, արդարության ու քաղաքացիական համերաշխության սկզբունքների վրա։ Պետական իշխանության բոլոր մարմինների գործողությունները պետք է համապատասխանեն սահմանադրական նորմերին ու սկզբունքներին, որոնք գործում են անմիջականորեն։ Այդ է պահանջում նաև ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը, որում ամրագրված է։ «Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն։ Օրենքները կիրառվում են միայն պաշտոնական իրապարակումից հետո։ Մարդու իրավունքներին, ազատություններին են պարտականություններին վերաբերող չիրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն։» Սահմանադրության գերակայության ապահովման սկզբունքի հետեւողական կենսագործումը ենթադրում է։ Նախ՝ բուն Սահմանադրության մեջ ամրագրել ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն սահմանադրական նպատակների, սկզբունքների ու նորմերի ներդաշնակություն ու ամբողջականություն, պետական իշխանության հստակ ու հավասարակշռված տարանջատում, հակակշռների ու զապունների արդյունավետ համակարգ։ Երկրորդ՝ ծեւավորել սահմանադրական վերահսկողության գործուն համակարգ, որում հստակեցված լինեն սահմանադրական վերահսկողության եւ հսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի կոնկրետ լիազորություններն ու պարտականությունները։ Երկրի ներսում յուրաքանչյուր իրավահարաբերություն պետք է իրականացվի սահմանադրութեն ամրագրված նորմերի, սկզբունքների ու նպատակների շրջանակներում։ Դա պետք է հուսալիորեն վերահսկվի ու պաշտպանվի։ Այդ խնդիրը կարող է լուծվել միայն սահմանադրական վերահսկողության գործուն համակարգի միջոցով։ Առանց դրա հնարավոր չէ ապահովել հասարակության բնականոն զարգացում, հասարակության ու դրա անդամների շահերի ներդաշնակում, ծեւք բերված մարդկային արժեքների համակարգված պահպանում ու լրացում։ Առավել ընդհանուր բնորոշմամբ, սահմանադրական վերահսկողությունը հասարակության կենսագոյն համընդհանուր ճանաչում գտած ու հաստատագրված կանոնների պահպանության երաշխիքն է։ Դարց

է առաջանում, ի՞նչ բնույթ է ունեցել հասարակական վարքի հիմնական կանոնների պահպանան վերահսկողությունը, երբ բացակայել է Սահմանադրությունը: Հաճախ բերվում է Անգլիայի օրինակը, որտեղ ծեւական առումով չկա սահմանադրական վերահսկողության հատուկ մասնագիտացված համակարգ: Սակայն, արդյո՞ք դա նշանակում է, որ ընդհանրապես բացակայում է վերահսկողության որպես հասարակական հարաբերությունների կանոնակարգված հաշվեկշի պահպանան միջոց: Այս հարցերին պատասխանելու համար նախ պետք է որոշակի համակարգված, կազմակերպական ծեւի մեջ դրված վերահսկողությունն առանձնացնել չհամակարգված կամ, այսպես կոչված, գործառնական կանոնակարգման չենթարկված վերահսկողությունից: Օրինակ, քրիստոնեության վաղ շրջանում Եկեղեցու պարտականությունների մեջ էր մտնում իշխանությունների նկատմամբ հսկողությունը, որն ավելի շատ բարոյական բնույթ էր կրում: Սա վերաբերում է ոչ միայն Եվրոպական Երկրներին:

Մեր ժողովրդի պատմությունը նույնպես լավագույն վկայում է այդ ճշմարտությունը: Ք. ա. 28-27-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի Արատուա երկիրը Հարավային Միջագետքի հնագույն ժողովրդին՝ շումերական վիպերգերի, Արատուայում ղեկավարումն իրականացնում էին «Էն» (գերագույն քուրմ) տիտղոսը կրող կառավարիչները<sup>1</sup>: Առավել կարեւոր պետական հարցերը՝ պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել եւ այն, Արատուայի գերագույն քուրմը որոշում էր ավագների ժողովի հետ խորհրդակցելով:

Շումերական վիպերգերում աղոտ հիշատակություն կա նաեւ այն մասին, որ այդ օրենքները գրի են առնված եղել պատկերագրերի տեսքով: Այսօր դժվար է ասել, թե այդ ինչ «սուրբ օրենքներ» են գործել Արատուայում, որոնք զարմացրել են հարեւան ժողովուրդներին, սակայն դյուրին է կրահել, որ խոսքը սովորության իրավունքի ամենահին դրսեւորումների մասին է:

Դայ իրավունքի պատմության ճանաչված մասնագետ Խաչիկ Սամուելյանը գրել է. «Ամեն մի սովորույթ անխտիր չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորությունը, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում են պահպանվում են իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող նորմերը<sup>2</sup>»:

Նախնադարյան մարդը, հազարամյակներ շարունակ խնբովին պայքար մղելով իր գոյության համար, մշակել էր համակենցաղային կարգեր, որտեղ, որպես մարդկանց միջեւ հարաբերությունների հիմնական կարգավորիչ, հանդես էր գալիս սերնդես - սերունդ փոխանցվող սովորույթը: Պետական կազմավորումների ի հայտ գալով, վավերացվեցին եւ իրավական կանոնների մեջ ներառվեցին մի շարք սովորություն, որոնք, իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող նորմերի համակեցություն, իրավունքի պատմության մեջ ստացել են սովորութային իրավունք անվանումը՝ ունենալով այն պահպանելու յուրահատուկ համակարգ:

Դայաստանում գործուն դեր են կատարել սովորութային իրավունքի նորմերը: Ինչպես գրում է Խաչիկ Սամուելյանը, «...սովորութական իրավունքի ավանդական դերը հասարակական հարաբերություններում այնքան ուժեղ եւ արմատացած է եղել, որ կարիք չի գգացվել այդ ամենը գրավոր ծեւերի վերածել: Թերեւս, սովորութական իրավունքի այդ ընդհանրացած բնույթին պետք է վերագրել հայ քագավորների օրենսդրական գործունեության սղությունը»<sup>3</sup>:

Սովորութային իրավունքի անշափ հարուստ նյութ է բռվանդակում հայ ազգագրությունը, որը, ցավոք, լայնորեն ուսումնասիրված չէ այդ տեսանկյունից: Ենց միայն մեր էպոսի վերլուծությունը բավարար է սովորութային իրավունքի նորմերի բարնված մի գանձարան բացելու եւ, թերեւս, պատասխանելու այն հարցին, թե ինչու «Սասնա ծռերը», ի տարբերություն այլ ժողովուրդների դյուցազնավեպերի, այդշափ զերծ է սպանությունների ու պատերազմների սարսափազդու տեսարաններից, մարդկային դաժանությունից ու նենգությունից, հեղվող արյան գետերից:

Չչափազանցելով սովորութային իրավունքի նշանակությունը, հարկ է նաեւ նշել հայ Եկեղեցական ժողովների կանոնական որոշումների կատարած կարեւոր դերը: Այդ ժողովները, հատկապես պետականության կորստից հետո, երեմն իրավիրվել են քաղաքական ճգնաժամային պահերին, եւ որոնց, բացի կրոնավորներից, նաև ակադեմիաների, աշխարհիկ դասի այլ ներկայացուցիչներ: Եկեղեցական ժողովների կանոնները շատ անգամ իրավաբանական նորմերի նշանակություն են ստացել, կարգավորել ներքին հասարակական ու արտաքին հարաբերություններ: Մասնավորապես կարելի է նշել Աշտիշատի (365թ.), V դարի (443թ.) Շահապիվանի, 768թ. Պարտավի, 1243թ. Սսի, 1268թ. Զագավանի, 1651թ. Երուսաղեմի Եկեղեցական ժողովների որոշումները, 554, 645, 719 թթ. նշակված Ղվինի կանոններն ու որոշումները, 726 թ. Մանազկերտի կանոնները, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթեւի, Ղովհան Մանդակունու, Ղավիթ Ալավեկառողու եւ այլոց կանոնական

Գրությունները: Այս շարքում առանձնահատուկ տեղ ունի VIII դարի սկզբին Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրը:

Օձնեցին՝ որպես Կաթողիկոս, ի մի բերելով, ամբողջականացրեց իրենից առաջ սահմանված կանոնները, պաշտոնական ծեւ ու վավերացում տվեց մինչեւ այդ ճանաչում գտած կանոնական սահմանումներին:

Հասարակական կյանքի կանոնակարգման ու ազգային կեցության կանոնների վերահսկման գործում եկեղեցու դերն ավելի է ուժեղանում օտարների տիրապետության տարիներին: Դա, մասնավորապես, վերաբերում է սեղուկների տիրապետությանը (11-12-րդ դարեր): Այդ տարիներին եկեղեցուն էր վերապահված բոլոր տիպի հարցերով, այդ թվում՝ քրեական, վճիռներ կայացնելու իրավունքը<sup>4</sup>:

Տեղին է ավելացնել նաև Փափառու Բուլգարի վկայությունն այն մասին, որ Ներսես Կաթողիկոսի կողմից (353-373թք) հրավիրվեց եկեղեցական ժողով եւ մշակվեցին նորմեր, որոնք կարգավորում էին ոչ միայն ներեկեղեցական հարաբերությունները, այլև իշխանավորների ու նրանց հպատակների հարաբերությունները:

Հատուկ կարեւորելու անհրաժեշտություն ունի նաև այն հանգամանքը, որ, սկսած 4-րդ դարից, հայ իրականության մեջ ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ կյանքը կանոնակարգող կանոնախմբերի հիմնական փիլիսոփայությունը եղել է խրատի, բարոյական դատապարտման եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց հանակեցության կանոնների հնարավոր խախտումները: Սա ոչ միայն պատմական բացառիկ կարեւորության հանգամանք է, այլև արժեքավոր դաս մեր ժամանակների համար:

Դայ իրականության մեջ բացառիկ ուշադրության են արժանի իրավական մտքի երկու հուշարձաններ, որոնք միջազգային առումով սահմանադրամական մեջ արժեք են եւ բովանդակում են նաև սահմանադրական վերահսկողության գաղափարի լուրջ սաղմեր: Նախ, խոսքը վերաբերում է VI դարի սկզբին Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ հրավիրված սահմանադրի ժողովի կողմից ընդունված կանոնական Սահմանադրությանը, որի ընդունման գլխավոր խնդիր էր առաջարկվել հասարակության մեջ միաբանության հաստատումը եւ բոլոր աշխարհիկ ու հոգեւոր որոշումները սահմանադրական համաձայնությունից բխեցնելով<sup>5</sup>: Երկրորդը Շահամիր եւ Յակոբ Շահամիրյանների «Որոգայք փառաց» ամբողջական Սահմանադրությունն է, որն առաջին անգամ հրապարակվեց Մադրասում 1788 թվականին, բովանդակում է 521 հոդված, հենվում է բնական իրավունքի սկզբունքների վրա, դասական Սահմանադրության ամբողջական ու իր ժամանակի համար եզակի նմուշ է: Պատահական չեր սահմանադրական իրավունքի միջազգային խոշոր հեղինակություններից մեկի՝ Փրանսիացի պրոֆեսոր Դոմինիկ Ռուսսոյի զարմանքը, երբ 1998 թվականին ժամանակով «Որոգայք փառաց» - ին, որութեաւում գրառեց. այս Սահմանադրության միայն վերնագիրն իրավական մի ամբողջ տեսություն է:

Պատմական այս անդրադարձ միայն մի նպատակ է հետապնդում՝ ցույց տալ, որ հայ իրականության մեջ նույնպես, անկախ այն բանից, պետականությունը ժամանակավորապես կորցրել ենք, թե այն առկա է, հասարակությունն ունեցել է համակարգված գոյնի ու զարգացման իր կանոններն ու դրանք պահպանելու կարգը: Այդ կանոնները, չնայած չեն ունեցել այսօրվա սահմանադրական ծեւակերպումներին բնորոշ հատկանիշներ, սակայն ներկայացել են որպես հոգեւոր կանոններ, որպես բարոյական նորմեր, ընտանեկան ավանդույթներ եւ, վերջապես, ազգային սովորույթների, արժեքների մի ամբողջ համակարգ: Դրանց պահպանումն անհրաժեշտորեն դառնում էր եկեղեցու ու նաև ողջ ժողովորի համախունք պարտականությունը: Իրավիճակն արմատապես փոխվեց, եթք ժողովուրդները սահմանադրութեն ծեւակերպեցին իրենց հասարակական վարչի կանոնները: Հասարակական կյանքի զարգացման տրամաբանական թելադրանքն էր պետական կառավարման համակարգի սահմանադրական եւ օրենսդրական հստակեցումը, իշխանությունների տարածառատումն ու գործունեության ներդրաշնակումը, անհատ եւ հասարակություն հարաբերություններում նոր արժեհամակարգերի արմատապորումը: Նման իրավիճակում անխուսափելիորեն առաջանում է հասարակական համակարգի սահմանադրական վերահսկողության հիմնական կանոնների պահպանման վերահսկողության համարժեք համակարգի՝ սահմանադրական վերահսկողության, անհրաժեշտությունը՝ որպես հասարակության կայունության ու առողջ զարգացման գրավական: Ի՞նչ է իրենից ներկայացնում սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ: Հատ հաճախ գրականության մեջ այս հարցը շրջանցվում է կամ նույնացվում սահմանադրական վերահսկողության դատական համակարգի հետ: Անհրաժեշտ է հատկապես առանձնացնել երկու սկզբունքային հարցադրում: Նախ, սահմանադրական վերահսկողությունը չի սահմանափակվում միայն դատական վերահսկողության շրջանակներում: Այսուեղ նկատի պետք է ունենալ նաև օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործառնական դերը, բարոյական, ազգային ու հոգեւոր արժեքների պահպանման ավանդույթն ու կարգը: Սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների թվում են ոչ միայն

սահմանադրական եւ այլ դատարանները, այլեւ ժողովուրդը, Երկրի Նախագահը (պետության գլուխը), օրենսդիր մարմինը, կառավարությունը: Երկրորդ՝ սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ, որպես տարբեր իրավասություն ունեցող մարմինների գործառույթների բարդ ու միաժամանակ ներդաշնակություն պահանջող համակցություն կարող է գոյություն ունենալ եւ արդյունավետ գործել միայն որոշ նախապայմանների առկայության դեպքում: Դրանցից անհրաժեշտ է ընդգծել հասարակական հարաբերությունների սահմանադրական համակարգվածությունը, հասարակական հարաբերությունների սահմանադրական համակարգվածությունը, վերահսկողության հարաբերակայնությունը եւ այլն: Յետեւությունն այն է, որ ցանկացած հասարակություն, այդ թվում՝ նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաև դրանց պահպանության ու իշխանությունների նկատմամբ վերահսկողության (կամ արգելակների) ամրողական համակարգ: Դրա կարեւոր բաղադրիչներն են եղել հավատը (Եկեղեցին), բարոյական վարքագիր նորմերը, ավանդույթները (հասարակական, ընտանեկան), մեծ կամ փոքր համակարգի առանձնահատկություններով պայմանավորված վարքի կանոնները, իրավական նորմերը եւ այլն: Այս ամենի հետ մեկտեղ, պետության Յիմնական օրենքի ընդունումը թելադրում է մոտեցման նոր կերպ, նոր եղանակ: Վերջինիս էլելու հանգում է նրան, որ սահմանադրական վերահսկողության գործառնական խնդիրներին համապատասխան ծեւավորվում է այն իրականացնող սահմանադրական ինստիտուտ կամ կազմակերպական հատուկ կառուցվածք, որի առաքելությունը սահմանադրական արդարադատության իրականացումն է: Սակայն որա չի նշանակում, որ մինչ այդ գործող ծեւերն ամրողությամբ դադարում են գոյություն ունենալ: Յակառակը, խնդիրը հանգում է նրան, որ յուրաքանչյուր Երկրում, իր բազում առանձնահատկությունների հիմն վրա, վեր հանվեն ու ներդաշնակեցվեն սահմանադրական վերահսկողության իրավական ողջ համակարգի, սովորութային իրավունքի, ապրելակերպի ու ավանդույթների, հոգեւոր ու բարոյական արժեքների պահպանան բոլոր բաղադրամասերը: Միայն այս դեպքում է հնարավոր համակողմանիրեն հաշվի առնել տվյալ հասարակական համակարգի հիմնական բնորոշչիները եւ արմատավորել դրանց պահպանության գործուն ինունիհամակարգ: Գոյություն ունի սահմանադրական վերահսկողություն կամ հսկողություն կատեգորիաների տարբեր մեկնաբանություն: Վերահսկողության դեպքում, օրինակ, վերահսկող սուբյեկտն իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող ակտը: Յսկողությունը պասսիվ բնույթ ունի՝ ուշադրություն իրավիրել կամ առաջարկ անել, իսկ ակտի գործողության կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը այդ ակտով ընդունողի կամ մեկ այլ նարմնի իրավասության հարցն է: Սահմանադրական վերահսկողության եւ հսկողության սուբյեկտների ցանկը բավականին ընդարձակ է եւ դրանց զգալի մասը, սահմանադրուեն կամ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, իրավական ակտերի նկատմամբ իրականացնում է ոչ թե վերահսկողական, այլ՝ հսկողական գործառույթը: Յավելվածի թիվ 6 եւ 7 սխեմաներուն ներկայացվում են սահմանադրական վերահսկողություն եւ սահմանադրական հսկողություն իրականացնող ինստիտուտները: Սահմանադրական արդարադատությունը, որպես դատական սահմանադրական վերահսկողության ինքնուրույն, մասնագիտացված ու ամբողջական համակարգ, դատական սահմանադրական իրավունքի նորմերի եւ սահմանադրական դատավարության միջոցով պահպանում է Սահմանադրության գերակայության ու կայունության պահպանումը, բացահայտում, գնահատում եւ վերականգնում է նախատված սահմանադրական հավասարակշռությունը, երաշխավորում է մարդու եւ քաղաքացի իրավունքների ու իմանական ազատությունների սահմանադրական աշխատանքանությունը: Սահմանադրական արդարադատությունը հասարակության կայուն եւ դիմանմիկ օրգագումանը հաղորդում է նոր որակ, էապես նոր աստիճանի է բարձրացնում սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի պահպաննան, հակակշիռների ու զայտունների գործադրման, քաղաքական առճակատումների իրավական հաղթահարման, հասարակական համաձայնության մթնոլորտի արմատավորման խնդիրների լուծումը: Այս հարցերում վերջին Երկու հայրուրամյակների ընթացքում բացահայտի կարեւոր դեր վերապահվեց դատական սահմանադրական վերահսկողությանը: Վերջինիս էլելու հանգում է նրան, որ արդարադատության առարկա են դառնում նորմատիվ իրավական ակտերն ու պետական իշխանության մարմինների գործողությունները, գնահատվում է դրանց համապատասխանությունը Երկրի Յիմնական օրենքին եւ ապահովվում է այդ ակտերի ու գործողությունների սահմանադրականությունը: Ընդհանրացնելով, կարող ենք ընդգծել, որ սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական նորմերի այն համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողությանը պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները եւ սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում: Այլ կերպ, սահմանադրական արդարադատությունը միջոցով՝ իման ունենալով սահմանադրական իրավունքի եւ սահմանադրական վերահսկողության միջոցով՝ իման ունենալով սահմանադրական իրավունքի եւ սահմանադրական դատավարության իրավանորմերի համակարգը:

## 1.2. Սահմանադրական վերահսկողության եւ սահմանադրական արդարադատության դերը պետական իշխանության իրականացման գործում

Հասարակության բնականոն ու ներդաշնակ զարգացման համար բացառիկ կարեւորության խնդիր է պետական իշխանության գործուն համակարգի առկայությունը, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության մարմինների փոխհամաձայնեցված գործունեության ապահովումը, նրանց լիազորությունների սահմանադրորեն հստակ կանոնակարգումը եւ դրանց իրականացման վերահսկումը:

Իշխանությունների տարանջատումը, առանց որի աներեւակայելի է ժողովրդավարական պետության եւ քաղաքացիական հասարակության գործությունը, միաժամանակ խնդիր է առաջարում՝ անհրաժեշտ զայումների ու հակաշիռների մեխանիզմի գործադրմամբ եւ իշխանության տարրեր մարմինների՝ Սահմանադրությամբ ամրագումած փոխհարարերությունների հաշվեկշի պահպանմամբ, ապահովել պետության եւ հասարակության դիմանիկ ու կայուն առաջընթաց: Գործնական կյանքում այս խնդիրը լուծելի է միայն սահմանադրական վերահսկողության ամբողջական, լիարժեք համակարգի առկայության պայմաններում, որտեղ առանցքային դեր է վերապահում սահմանադրական արդարադատությամբ: Դրանում այսօրվա զարգացած պետականություն ունեցող, ինչպես նաև զարգացման ուղին բռնած շատ երկրներ վաղուց են համոզվել:

Սահմանադրական վերահսկողությունն ունի հարյուրամյակների պատմություն: Դրա բնույթը, իրականացման փիլիսոփայությունը, ձեւերն ու եղանակները, կազմակերպական համակարգերը լուրջ վերափոխումներ են ապրել եւ այսօր էլ գտնվում են ակտիվ կատարելագործման փուլում: Դիմնականը, գլխավորն այն է, որ պետական իշխանության մարմինների գործառական ներդաշնակության պահպանը նեկընդիշտ տրված վիճակ չէ, այլ պահանջում է համակարգի կայունության նշտական վերահսկողություն: Այս առումով սահմանադրական վերահսկողության դերը կարելի է համեմատել մարդու օրգանիզմի ինունիհամակարգի հետ: Հասարակական օրգանիզմում նույնպես, եթե առաջանա ինունիհավաքարարություն, ապա յուրաքանչյուր միջանցիկ քամի կարող է համակարգի կործանման պատճառ դառնալ:

Սահմանադրական վերահսկողության մարմինները նման դեր իրականացնում են ամենից առաջ նրանով, որ իրենց լիազորությունների շրջանակներում ապահովում են Սահմանադրության գերակայությունը, լուծում են պետական իշխանության համակարգում լիազորությունների հարցով առաջացած վեճերը եւ, որ պակաս կարեւոր չէ, հասարակության ներսում առաջացած քաղաքական տարածայնությունների իրավական կարգավորման երաշխիքներ են ստեղծում: Այլ կերպ, սահմանադրական վերահսկողությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որ ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջորդայնությունն ու հարընթաց բնույթը:

Սահմանադրական վերահսկողությունը նաև խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կատարելագործելու եւ այն հարափոփոխ հասարակական հարաբերությունների բնույթին ներդաշնակեցնելու համար:

Սահմանադրական վերահսկողությունը ձեւավորում է նաև պետական մտածողության ճաշակ ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն: Այն ունի լուրջ կանխարգելիչ դեր, երբ հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մոլում է իրավական, սահմանադրական գործելակերպի:

Սահմանադրական վերահսկողություն իրականացնող բոլոր ինստիտուտներն անմիջականորեն առնչվում են սահմանադրական իիմնական սկզբունքների պահպանման, մասնավորապես, իշխանությունների տարանջատման ու դրանց գործառնական անկախության երաշխավորման խնդիրներին: Այս առումով չափազանց կարեւոր է իշխանությունների տարանջատման չափանիշների ընտրության հարցը, որի շուրջ տեսական բանավեճերը դեռևս շարունակվում են: Ընդհանրական ծեւով այդ չափանիշները կարող են ներկայացվել հավելվածի թիվ 12 սինմայում բերված տեսքով: Այստեղ կատարվում է այն եզրահանգումը, որ, նախ. առանց իշխանությունների հստակ տարանջատման եւ ներդաշնակ գործակցության կայուն զարգացում անհնարին է երաշխավորել: Երկրորդ՝ իշխանության թեւերը պետք է ունենան գործառնական անկախություն: Երրորդ՝ նրանց լիազորությունները պետք է ամբողջական լինեն եւ ներդաշնակեն իրենց գործառույթներին: Չորրորդ՝ իշխանության թեւերի սահմանադրական հավասարակշռությունը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ բնույթ ունի եւ դա պետք է երաշխավորվի ներսահմանադրական լուծումներով ու գործառնական եւ կառուցակարգային համակարգերով:

Սահմանադրական վերահսկողության համար ելակետային նշանակություն ունի ոչ միայն իշխանությունների հստակ տարանջատումը եւ հավասարակշռումը, այլև դրանց գործառույթների եւ հրավասությունների ներդաշնակումը, գործառնական, հակակշռող եւ զարող լիազորությունների կայուն հաշվեկշի ձեւավորումը եւ շարունակական գործադրման երաշխավորումը: Հավելվածում

ներկայացված թիվ 11 սխեմայից ակնհայտ երեւում է, որ այս խնդիրները պետք է առաջին հերթին իրենց հստակ սահմանադրական լուծումն ստանան: Պակաս կարեւոր չեն հասարակական պրակտիկայի շարունակական ներազդեցությունը՝ հաշվի առնելով «գործառույթ-ինստիտուտ-իրավասություն» եռամիանության հավասարակշռված վիճակի շարունակական պահպանման խնդիրը, որում բացառիկ կարեւոր է սահմանադրական արդարադատության դերը: Աշխարհի տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների վերջին տասնամյակների համեմատական վերլուծությունը վկայում է, որ այդ խնդիրների լուծումը դարձել է սահմանադրական փոփոխությունների եւ սահմանադրականության զարգացման առանցքային հարցերից մեկը:

### **1.3. Սահմանադրական արդարադատության խնդիրներն ու նպատակները**

Տարբեր երկրների սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված դատական մարմինների առջեւ Սահմանադրությամբ կամ օրենքներով դրվում են տարբեր խնդիրներ: Ընդհանուր առմանք այդ խնդիրները հանգում են հետեւյալներին.

- օրենքների ու նորմատիվ այլ ակտերի սահմանադրականության հարցի որոշումը եւ ապահովումը (այս խնդիրն իրականացնում են, առանց բացառության, սահմանադրական վերահսկողության մասնագիտացված բոլոր մարմինները, որոնց թիվն աշխարհում անցնում է հարյուրից),
- միջազգային պայմանագրերի սահմանադրականության որոշումը եւ ապահովումը (իրականացվում է 35 երկրներում, մասնավորապես՝ Ավստրիա, Ալբանիա, Հայաստան, Բուլղարիա, Հունգարիա, Իսպանիա, Ֆրանսիա, Լեհաստան, Լիտվա, Պորտուգալիա, Մոլդովա, Ուգրեկստան եւ այլն),
- Սահմանադրության, օրենքների եւ նորմատիվ այլ ակտերի պաշտոնական նորմատիվ (վերացական) մեկնաբանումը (իրականացվում է 42 երկրներում, մասնավորապես՝ Ալբանիա, Ադրբեյչան, Բուլղարիա, Գերմանիա, Շվեյցարիա, Դուսաստան, Սլովենիա, Իսպանիա, Տաջիկստան եւ այլն),
- պետական իշխանության կենտրոնական մարմինների միջեւ ծագող վեճերի լուծումը (իրականացվում է 43 երկրներում, մասնավորապես՝ Ադրբեյչան, Բուլղարիա, Վրաստան, Գերմանիա, Իտալիա, Պերու, Լեհաստան, Ռուսաստան, Սլովենիա, Իսպանիա, Տաջիկստան եւ այլն),
- կենտրոնական ու տեղական իշխանությունների միջեւ ծագող վեճերի լուծումը (իրականացվում է 35 երկրներում, մասնավորապես՝ Ավստրիա, Զեխիա, Գերմանիա, Հունգարիա, Իտալիա, Ռուսաստան, Իսպանիա եւ այլն),
- մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը նրանց անհատական դիմումների հիման վրա (իրականացվում է 52 երկրներում, որոնց թվում են Արեմտյան ու Արեւելյան Եվրոպայի բոլոր երկրների սահմանադրական դատարանները, իսկ նախկին Խորհրդային Միության տարածքում եղակի բացառությամբ այդ ցանկում բացակայում է Հայաստանը),
- ժողովրդավարության պաշտպանությունը, մասնավորապես՝ ընտրությունների, հանրաքվեների, կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովում եւ այլն (կուսակցությունների հարցով - Գերմանիա, Թուրքիա, Լեհաստան, Հայաստան, Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեյչան եւ այլն, ընտրությունների հարցով - Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, Հայաստան, Վրաստան, Ռումինիա, Սլովակիա, Մողանիկ, Նիգերիա, Ղրղզստան եւ այլն, հանրաքվեների արդյունքների սահմանադրականության եւ օրինականության որոշում – Հայաստան, Ավստրիա, Զիլի, Ֆրանսիա, Գարոն, Հունգարիա, Վրաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա եւ այլն),
- իշխանությունների տարանջատման հաշվեկշռի պահպանումը, իշխանության բռնազավթման կանխումը, զսպումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրուման կենսունակության ապահովումը (շատ երկրներում, օրինակ, Ֆրանսիա՝ պառամենտի պալատների կանոնակարգերը դաշնում են նախնական վերահսկողության օբյեկտում),
- օրինաստեղծ գործունեությանը նպաստելը,
- հասարակական արժեքների պահպանումը, դրանց էվոլյուցիոն զարգացմանը նպաստելը, հեղափոխականության կանխումը:

Այս խնդիրների լուծման ընդհանրական նպատակն իրավունքի, ու որպես դրա իրավական մարմնացում՝ Սահմանադրության գերակայության ապահովումն է, իրավական պետության երաշխավորումը: Բնականաբար, սահմանադրականության առնչությամբ ցանկացած խնդիրի լուծում պահանջում է հաշվի առնել, թե որքանով են իրավական կարգավորումներն ու պետական իշխանությունների գործողությունները համապատասխանում սահմանադրական հիմնական սկզբունքներին ու նպատակներին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածն ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Նման պետության համար անհրաժեշտ են սահմանադրական այն հիմնական բնութագրիները, որոնք բերված են հավելվածի թիվ 4 սխեմայում: Ակնհայտ է, որ սահմանադրական արդարադատության կարեւոր խնդիրն է այդ բնութագրիները հաշվի առնել եւ դրանց հիմքում դրված սկզբունքները պաշտպանել: Այս նկատառումներից ելնելով՝ «Սահմանադրական դատարանի նասին» ՀՀ օրենքի 55 հոդվածը, մասնավորապես, նախատեսում է, որ Սահմանադրության 100 հոդվածի առաջին կետով նախատեսված հարցերի քննության ժամանակ սահմանադրական դատարանը դիմունում առաջադրված հարցի առնչությամբ պարզում է դրանում նշված իրավական ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, հիմք ընդունելով՝

- 1) իրավական ակտի ձեւը.
- 2) իրավական ակտն ընդունելու ժամանակը, ստորագրելու, իրապարակելու եւ գործողության մեջ դնելու սահմանված կարգի պահպանումը.
- 3) իրավական ակտի նորմերի բովանդակությունը.
- 4) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացնան անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքները.
- 5) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը.
- 6) պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
- 7) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Տարբեր երկրներում սահմանադրական դատարանի նասին օրենքով ոչ միայն նախատեսվում են առանձին բնույթի գործերի քննության առանձնահատկությունները, այլև շեշտվում են դատարանի սկզբունքային մոտեցման հիմքները՝ ակտի կամ գործողության սահմանադրականության նասին ամբողջական ու հիմնավոր իրավական դիրքորոշում ծնաւավորելու համար: Սահմանադրական արդարադատության տեսության զարգացման հիմնական խնդիրներից մեկը ներկայումս այն է, որպեսզի առավել հստակ որոշարկվեն սահմանադրականության հիմնական չափանիշները՝ դատական սահմանադրական վերահսկողության տարբեր խնդիրների առնչությամբ: Դա անհրաժեշտ է անկախ, անազառ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու եւ համակարգային տեսական կայունություն երաշխավորելու համար:

#### **1.4. Սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններն անցումային փուլում**

Մարդկության պատմության բոլոր ժամանակներում հասարակության համակարգային վերափոխումները համեմատվել են երկրաշարժերի հետ, որովհետեւ հիմնականում հանկարծահաս ծենով ստեղծվում է որակական բոլորովի նոր վիճակ, որին բնորոշ են անորոշությունը, անկառավարելիությունը, ինստիտուցիոնալ համակարգերի կազմալուծումը կամ բացակայությունը, մտածողության ու արժեհամակարգի շփոթք, իրադրության անկանխատեսելի փոփոխությունները, անելիքի անհստակությունը, կարիքն ու սոցիալական գերլարվածությունը եւ այլն: Պարզապես դա հասարակական համընդգրկուն ստրես է, որի առաջին շրջանը տիպիկ շոկային իրավիճակ է, այնուհետեւ տիրապետող են դաշնում տագնապն ու անորոշությունը, որոնց հաղթահարմանը են սկիզբ առնում կայունությունն ու զարգացումը:

Նման վիճակում հայտնվեցին հետհամայնավարական շրջանի գրեթե բոլոր երկրները: Այն առանձնահատուկ ընդգծումներով դրսեւորվեց նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Բանն այն է, որ վերջիններս ապրեցին կրկնակի փլուզում՝ նախ. հասարակական հարաբերությունների համակարգի եւ ապա՝ պետական կառուցյից: Եթե առաջինը ենթադրում էր անցում շուկայական տնտեսական

հարաբերությունների եւ իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա ժողովրդավարական, իրավական (որոշ նորանկախ երկրներում նաև սոցիալական) պետությանը բնորոշ հասարակական հարաբերությունների արմատավորում, ապա երկորորդ պարտադրում էր անհետաձգելի քայլեր՝ մասից անբողջ դաշնալու, ինքնուրույն պետական - հասարակական համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Արժեհամակարգային վերանայումների լուրջ խնդիրներ առաջադրվեցին նոր հազարամյակի շեմին, հատկապես 2001թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում կատարված աննախադեպ ահարեկչական քայլերից եւ միջազգային ահարեկչությանը նետած նոր մարտահրավերից հետո:

Համակարգային վերափոխումներով թելադրված խնդիրների լուծումը պահանջում է գործադրել ճգնաժամային կառավարման ողջ զինանոցը՝ անցումը կառավարելի դարձնելու, համակարգային վերափոխումների անխուսափելի բացասական հետեւանքները մեղմելու, քաղաքական, տնտեսական, հոգեբանական եւ ընդհանրապես արժեհամակարգային անորոշությունը հաղթահարելու, համակեցության նոր կանոնները հստակեցնելու, փլուզված կառույցների փոխարեն նորերը ձեւավորելու եւ բազմաթիվ այլ անհետաձգելի խնդիրներ լուծելու համար:

Ակնհայտ է նաև, որ նման իրավիճակներում, որպես կանոն, նախկինում գործած սահմանադրությունները դադարում են կատարել իրենց գործառնական դերը : Դրանք կամ գործում են մասնակիորեն, կամ փոխարինվում են հոչակագրային նորմերով, կամ գործողության մեջ են դրվում սահմանադրական օրենքներ՝ մինչեւ նոր Սահմանադրության ընդունումը: Միջազգային փորձը վկայում է, որ նման իրավիճակներում այլ են նաև սահմանադրական վերահսկողության դերն ու բնույթը: Այն հասկանալու եւ մեր ժամանակներին բնորոշ երեւույթը խորությանը ընկալելու համար անհրաժեշտ է, նախ, բացահայտել անցման ժամանակաշրջանի հությունը եւ նման իրավիճակում ձեւավորված հասարակական հարաբերությունների բնույթն ու զարգացման տրամաբանությունը:

Հասարակական կառավարման ու, մասնավորապես, մեր ուսումնասիրության առարկայի տեսանկյունից մեծ կարեւորություն ունեն հետհամայնավարական տարածաշրջանում տեղի ունեցած գործընթացներին առնչվող հետեւյալ հարցերի պատասխանները.

- ա) ինչպես տեղի ունեցավ անցումը: Դա անցում էր, թե՞ փլուզում առանց նախապատրաստման,
- բ) որքանո՞վ էր հստակ, թե դեպի ու՞ն էր անցումը,
- գ) ինչպիսի՞ն է բուն անցման շրջանը, դրա տեւականությունը, փուլերը, սկիզբն ու վերջը,

դ) պահանջու՞ն է, արդյոք, անցման շրջանը հասարակական կառավարման ու, մասնավորապես, սահմանադրական վերահսկողության յուրահատուկ մոտեցում:

Թե Եվրոպայի նախկին համայնավար երկրների եւ թե ԽՍՀՄ հանրապետությունների համար 1985 թվականի ապրիլից հետո ընկած ժամանակահատվածն ընկալվում էր որպես իրավիճակի վերափոխումների ուղղությամբ նոր ձեռնարկումների ժամանակաշրջան: Իսկ ստեղծված իրավիճակի վերաբերյալ Արեւմուտքի քաղաքական գնահատականն այն էր, որ գործ ունեն «չարիքի կայսրության» հետ եւ այն բարեփոխելու գորբաշովյան ջանքերը համարվեցին հերոսություն: Իսկ տնտեսական համակարգին բնորոշ էին ամենասունակությունն ու վերարտադրական գործընթացների խարարվածությունը:

Սակայն գորբաշովյան բարեփոխումներն ի սկզբանե դատապարտված էին ծախողման՝ մի շարք պատճառներով: Նախ, դրանք ընդգրկում էին միայն տնտեսական ոլորտը եւ գրեթե չշոշափեցին քաղաքական համակարգը:

Երկրորդ հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացներն առաջ էին անցել փնտրվող եւ պարտադրվող լուծումներից: Ավելին, վերջիններս ոչ միայն չէին կարող կաղապարել նոր իրականությունը, այլև խորքային սոցիալական վերափոխումների խթանիչի դեր էին կատարում: Դրա լավագույն վկայություններն են նովոօգորյովյան գործընթացը, 1991 թվականի մարտի 17-ի հանրաքեն, մերձբալթյան հանրապետություններում եւ Հայաստանում ընթացող գործընթացների նկատմամբ Մոսկվայի անհեռատես արձագանքները եւ այլն:

Երրորդ՝ սխալ էր ընկալվում եւ գնահատվում միջազգային գործոնը: Մի կողմից, թերագնահատվեցին Արեւմուտքի աշխարհաբարձական շահերը եւ արտածին գործոնների հնարավոր ներազդեցությունը, մյուս կողմից՝ տիրապետող գլխապուլյտն էր ու չիմնավորված ոգեւորությունը:

Եթե այս ամենին ավելացնենք, որ բացակայում էր հստակ պատկերացումն անելիքի մասին ու աղճատված էր իրականության զգացողությունը, ապա պատկերը մոտավորապես ամբողջական կլինի:

Այս ամենը վկայում է այն մասին, որ նոր իրականության «հասունացումը» տեղի էր ունեցել կառավարողների կամքից անկախ եւ «զաղտնի շրջանով»: Բնականաբար, վերափոխումը պետք է լիներ պայքայունային՝ համապատասխան հետեւանքներով<sup>6</sup>: Փաստորեն, պատճական իրողությունն այն է, որ տեղի ունեցավ համակարգային վիլուգում առանց դրա սուրբեկու հանդիսացող ժողովուրդներին դրան նախապատրաստելու: Ավելին, թե միջազգային շրջանակների եւ թե մոսկովյան իշխանությունների ամբողջ ջանքերն ուղղված էին ապակողմնորոշելու հասարակական կարծիքը եւ թյուր պատկերացում տալու սպասվելիք իրադարձությունների մասին: Բնական է, որ նման իրավիճակում անխուսափելի էր հոգեբանական ու աշխարհնկալման ցնցումը, որն անհամեմատ ծանրացրեց անցման շրջանի դժվարությունների հաղթահարման գործը:

Նման իրավիճակում առաջին պլան են մղվում ճգնաժամային կառավարման մոտեցումները՝ առաջարելով երկակի խնդրի լուծում: Նախ. թույլ չտալ քառսի առաջացում եւ կազմակերպված ու կառավարելի ծեւով դուրս գալ այդ իրավիճակից՝ նվազագույնի հասցենով կորուստները: Երկրորդ՝ հնարավոր կարծ ժամկետներում ծշտել առաջնահերթությունները, նախապատրաստել պետական մեթենան աշխատելու ֆունկցիոնալ կառավարման պայմաններում, ստեղծել հասարակական նոր հարաբերություններին բնորոշ օրենսդրական դաշտ ու կառավարման ինստիտուցիոնալ համակարօ: Այս խնդրների լուծումը եվլուպական նախկին համայնավար երկրների համար ուներ այն առանձնահատկությունը, որ, մի կողմից, ավելի հստակ էր անելիքը եւ պատկերացումն ապագայի նկատմամբ՝ հասարակական գիտակցությունից դեռևս դուրս չէին մղվել այն արժեքները, որոնք պետք է վերականգնվեին ու մեծ թիվ էին կազմում դրանք կրողները: Մյուս կողմից՝ կային ազգային-պետական ամբողջական համակարգ, համեմատարար ինքնուրույն կառուցվածքի վրա խարսխված տնտեսություն, եկրոպական առաջադիմական արժեհամակարգերին ինտեգրվելու ավելի մեծ հնարավորություն, աշխարհաբարձական առավել բարենպաստ իրավիճակ:

ԽՍՀՄ հանրապետությունների համար ոչ միայն մեծ էր իներցիայի գործոնը եւ տարիներով քողարկված ու առավել սրությամբ ի հայտ եկած հիմնահարցերի ազդեցությունը, այլեւ անհամեմատ դժվար էր ինքնուրույն գործելու հնարավորությունը: Դա պայմանավորված էր, մի կողմից, նրանով, որ տնտեսական կապերը եւ դրանց ներազդեցությունը քաղաքական գործընթացների համեմատությամբ ունեն հարաբերական անկախություն ու մեծ իներցիա: Մյուս կողմից՝ առաջացել էր շահերի աններաշնակություն նաեւ այն պատճառով, որ մինչեւ վերջ հստակ չէին անելիքները, նոր լուծումներն ու դրանց համանելու ճանապարհները: Գործեց. այսպես կոչված, «փրկվեք ինչպես կարող եք» կարգախոսը: Եվ պատահական չէ, որ, նույնիսկ Անկախ պետությունների համագործակցության ծեւավորումից հետո, համատեղ ընդունված որոշումները գերազանցապես մնացին որպես բարի ցանկություն եւ գործնականում չեն իրականացվում:

Այս ամենն զգալիորեն պայմանավորված է նրանով, որ նորանկախ երկրների մեծ մասի համար տեւականորեն հստակ չէր, թե դեպի ու՞՞ է անցումը եւ դա խորքային հինչ վերափոխումներ է պահանջում (դրա լավագույն վկայություններից են նաեւ 1991թ. մարտի 17-ի հանրաքվեի արդյունքները 9 հանրապետությունում):

Անցման շրջանը պայմանականորեն կարելի է բաժանել հետեւյալ ժամանակահատվածների:

1. Հասարակական նոր կենսաձեւին անցնելու նախընթաց շրջան: Տեսականորեն դա կարող է վերաբերել ԽՍՀՄ գոյության ամբողջ 70 տարվան (շատերի համար այդ տարիները դարձան աքսորի, քաղաքական հալածանքների ու անհույս պայքարի տարիներ): Գործնականում այն խթանվեց 1953, 1965, 1979 եւ 1985 թվականների տնտեսական բարեփոխումների կիսալուծումների ու անհաջող փորձերի արդյունքով եւ հասարակական համընդգրկում բնույթ ստացավ 1987 թվականից հետո, երբ պարզվեց վերակառուցման գաղափարախոսության սնանկությունը: Այս շրջանը կարելի է բնութագրել նաեւ փոլոզման հասունացման «գաղտնի շրջան», քանի որ, ինչպես նշեցինք, անցումը ծրագրված իրականացնելու փոխարեն տեսնդագին եւ ուշացած քայլեր էին արվում այն խոշնդրութելու եւ հասարակության ապակողմնորոշելու համար: Միաժամանակ այն կարող է համարվել նաեւ կորցրած հնարավորությունների շրջան, քանի որ նոր իրականության մեջ ապրելու ու գործելու նախապատրաստական գորեք որեւէ աշխատանք չտարվեց:

2. Դա ԽՍՀՄ փաստական փլուզման եւ դրան հաջորդած շոկի շղանն էր:

Մի կողմից՝ դարաբաշխ շարժումը եւ ժողովրդավարական գործընթացների առաջին քայլերը Հայաստանին ավելի էին նախապատրաստել դիմագրավելու սպասվելիք փորձությունները (այստեղ պետք է նկատի ունենալ նաեւ պատմական հիշողության գործոնը, փոքր համակարգերին բնորոշ աղապտացման առանձնահատկությունները եւ այլն), մյուս կողմից՝ Հայաստանը հայտնվեց փլատակների ամենածանր հատվածում՝ հայտնի բազմաթիվ գործոնների պատճառով:

Այս փուլին, որը ներառում է 1991-92 թվականները, բնորոշ էին.

- փլուզմանը հաջորդող ցնցումները (ավտոշոկերը), եղած համակարգերի շարունակական կազմալուծումը,
- իրավիճակի վրա արտածին գործոնների ներազդեցության գերակայությունը ներժին գործոնների համեմատությամբ,
- անկառավարելիության վտանգը եւ իրադրության փոփոխության նվազ կանխատեսելիությունը,
- հասարակական շփոթք, անելիքի անորոշությունը, անվստահությունն ու վախը վաղվա օրվա մկատմանը,
- տնտեսական ու քաղաքական նոր համակարգերի ձեւավորման մոտեցումների տենդագին փնտրութքն ու առաջին համարձակ քայլերը<sup>2</sup>,
- նոր արժեհամակարգերի բացակայությունը եւ ժամանակի ու տարածության նորովի իմաստավորման պակասը,
- հին մտածողության սինդրոմը, անկախ ու ազատ ապրելու ունակության պակասը,
- հասարակության հետագա զարգացման խնդիրներին զգայական ու որոշ առումով նաեւ սիրողական մոտեցումը եւ այլն:

Հասարակական հոգեբանության տեսակետից որոշ չափով այլ էին տագնապները մինչեւ 1991 թվականի դեկտեմբերը եւ դրանից հետո: Ընդհանրապես 1991 թվականը դարձավ հասարակական մեծ ալեկոնությունների տարի՝ մարտի 17-ի Միությունը պահպանելու հանրաքվե (որին Հայաստանը չնաև ակցեց), սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվե Հայաստանում, ԽՍՀՄ հեղաշրջման փորձ (օգոստոս) եւ ապա փլուզում (դեկտեմբեր) ու բազմաթիվ այլ իրադրություններ, որոնցից յուրաքանչյուրը շոշափում էր կենսագոյի հիմնախնդիրն այսօր եւ այսուհետ:

Ավելացնենք նաեւ, որ անկախությունն արդեն իսկ ճանաչում գտած քաղաքական ու բարոյահոգեբանական իրողություն էր, որը տնտեսական ու սոցիալական իր գինն էր պահանջում վճարել:

Այս փուլին էր վիճակված լուծելու երկու ժայրահետ կարեւոր խնդիր՝ նախ հաղթահարել անցման շրջանի տագնապները: Երկրորդ՝ հստակեցնել սկզբունքային դիրքորոշումները հասարակության հետագա զարգացման գործընթացների նկատմամբ եւ դրանք օրենսդրորեն կարգավորել: Առանց վարանելու կարելի է փաստել, որ, մեծագույն դժվարություններով հանդերձ, Հայաստանում երկու խնդիրներն էլ լուծվեցին հաջողությամբ: Նշտվեցին նաեւ մոտեցումները նոր Սահմանադրության մշակման եւ սահմանադրական վերահսկողության հատուկ համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Նոր Սահմանադրության ընդունման խնդիրը դարձավ խորհրդարանական ակտիվ քննարկման առարկա, որը նաեւ հասարակությանը նոր իրականությանը հաղորդակից դարձնելու եւ իր ապագայի մասին խորհելու լավ առիթ ու հնարավորություն ընձեռեց: Ի դեպ, չնորացվեցին նաեւ սահմանադրական վերահսկողության անհրաժեշտության հետ կապված հարցերը: Դեռևս 1991 թվականի նոյեմբերի 19-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվեց սահմանադրական դատարանի ձեւավորման կարգը:

3. Թե Հայաստանի եւ թե նորանկախ շատ երկրների համար հետագա տարիները, մինչեւ նոր սահմանադրությունների ընդունումը, դարձան հատվածական (դիսկրետ) վերափոխումների եւ

իրադրության որոշ կայունացման տարիներ: Զգալի չափով ամրապնդվեց վերափոխվող հասարակական հարաբերությունների օրենսդրական բազան, հիմնականում կազմավորվեցին պետական կառավարման ինստիտուտները, նոր որակ ստացակ տնտեսական անկախությունը՝ հատկապես սեփական դրամանիշի եւ ֆինանսարանկային հնքնություն հարաբերությունների արմատավորման շնորհիվ, ձեւավորվեցին միջազգային գործուն կապեր, որոնք կողմնորոշեցին նաև տնտեսական բարեփոխումների բնույթը: Մինչեւ, գրեթե անխուսափելի էր սեփական սխալն ուղղելով որոշ լուծումներ փնտրելը:

4. Զգալի չափով տարբերվում է հետսահմանադրական շրջանը, երբ նորանկախ երկրները ձեռնամուխ եղան համակարգված վերափոխումների: Այս շրջանը կշարունակվի այնքան ժամանակ, քանի ոեն իրավական ու ժողովրդավարական հարաբերությունները չեն ներառել վերարտադրության բոլոր փուլերն ու չեն ստեղծել ընդլայնված վերարտադրության բավարար նախադրյալ: Սակայն բարդությունն այն է, որ ժամանակը չի սպասում, բացասական դրսեւորումների կանխում եւ դրական տեղաշարժերի անհրաժեշտ արագություն է պետք, որպեսզի բացասական միտումներն առաջ չանցնեն ու արգելակեն հետագա գործընթացները: Իսկ դրական արագ տեղաշարժեր կարելի է ակնկալել միայն համակարգված, ներդաշնակ ու ակտիվ քայլերի պարագայում՝ լրջորեն հոգ տանելով հասարակական իմունիհամակարգի ամրապնդման մասին:

Միջազգային փորձը վկայում է, որ ննան իրավիճակներում ոչ թե դրսեւորվել է վախվորած նոտեցում, այլ ավելի է կարեւորվել ակտիվ գործող սահմանադրական վերահսկողության դերը: Գրականության մեջ նույնիսկ կարծիք է հայտնվում, որ Գերմանիայում, Ֆրանսիայում եւ Եվրոպական մի շարք այլ երկրներում մասնագիտացված սահմանադրական վերահսկողության ինստիտուտների ծնունդը պայմանավորված էր համակարգային վերափոխումներով թելադրված կոնկրետ խնդիրների լուծմանը<sup>8</sup>: Մենք այն կարծիքին ենք, որ սահմանադրական վերահսկողությունն ամենից առաջ բնորոշ է դիմամիկ ու կայուն զարգացման ուղի բռնած հասարակությանը, որտեղ ժողովրդավարությունը կարգախոսից վեր է ածվում կենսածելի, դառնում է կենսական անհրաժեշտություն եւ գործելակերպի բովանդակություն առաջին հերթին պետական իշխանությունների համար: Դրա հետ մեկտեղ, սահմանադրական վերահսկողությունը հզոր միջոց է հասարակությունն այդպիսին դարձնելու եւ համակարգային անցումն արագացնելու համար:

Բնականաբար, անցման շրջանում սահմանադրական վերահսկողությունը նույնպես դրսեւորվում է որոշ առանձնահատկություններով: Նախ՝ ընտրվում է օբյեկտների եւ սուբյեկտների համեմատաբար նեղ շրջանակ:

Երկրորդ՝ այն երկրներում, որտեղ տրված է այդ հնարավորությունը, գերակայում են անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը:

Երրորդ՝ նախազահների կողմից լիարժեքորեն չեն օգտագործվում Սահմանադրության գերակայությունն ապահովելու հարցում սահմանադրական դատարանների հնարավորությունները՝ պայմանավորված Սահմանադրության պահպանման ուղղությամբ իրենց իրավասության իրականացման մեխանիզմների անկատարությամբ:

Չորրորդ՝ պակաս կարեւորություն է տրվում հետագա վերացական վերահսկողությանը, որը, սակայն, անցման փուլում ավելի մեծ չափով կարող է նպաստել օրենսդրական համակարգի ներքին հակասությունների հաղթահարմանը եւ Սահմանադրության գերակայության ապահովմանը:

Հինգերորդ՝ սահմանադրական դատարանները կազմավորման փուլում ինքնահաստատման ու հասարակական վստահության պակաս ունեն, որը թուլացնում է հասարակական գործընթացների վրա ունեցած ներազդեցությունը:

Բնականաբար, այս առանձնահատկությունները տարբեր խորությամբ են դրսեւորվում առանձին նորանկախ երկրներում:

Չխորանալով այլ մանրամասների մեջ, նշենք, որ անցումային փուլում առավել քան կարեւորվում է գործուն սահմանադրական վերահսկողության անհրաժեշտությունը, եւ դրա իրականացման գլխավոր պայմանը բավարար լիազորություններով, գործունեության անհրաժեշտ նախադրյալներ ունեցող ու անկախ գործող սահմանադրական դատարանի ստեղծումն է:

## **1.5. Սահմանադրական արդարադատության համակարգերի ձեւավորման ու զարգացման պատմական փուլերը**

Սահմանադրական արդարադատության պատմական էվոլյուցիան համընկնում է սահմանադրականության զարգացման փուլերի հետ: Ինչպես արդեն նշել ենք, ամենաընդհանուր ձեւով այն կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի: Առաջին՝ մինչ հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորումը, երբ հասարակական կեցության կանոնների պահպանումը ոչ միայն ու ոչ այնքան իրավական ոլորտի խնդիր էր, որքան բարոյական, հոգեւոր ու սովորության: Երկրորդ՝ վերջին երկու հարյուրամյակը, երբ հասարակական հարաբերությունների զարգացումը թելադրեց մարդկային ու պետական կյանքը առավել կարգավորված ձեւի մեջ դնելու անհրաժեշտությունը, երբ գրավոր Սահմանադրության ընդունումը, հասարակության համար դրա գերակայության հաստատումն ու պահպանումը դարձան կենսական անհրաժեշտություն: Սա քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհն էր, որը պահանջում էր ոչ միայն համակեցության կանոնների շուրջ հասարակական համաձայնություն, այլև դրա պահպանման ու վերահսկման հուսալի համակարգի առկայություն:

Ներկայում մեծ հետաքրքրություն է ներկայացնում 19 եւ 20-րդ դարերի ընթացքում սահմանադրական արդարադատության զարգացման փորձի ուսումնասիրումը, քանի որ նկատելի են որակական վերափոխումների մի շարք փուլեր, ինչպես նաև կուտակվել է հարուստ փորձ եւ այն մեծապես կարող է օգնել հատկապես նորանկախ երկրներում սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգերի արմատավորման գործին (տես. հավելված, սխեմա - 3): Դաշվի առնելով ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կողմից իրավական ակտի սահմանադրականության հարցով ընդունված առաջին որոշումը եւ նոր մոտեցումներն այս հարյուրամյակի ընթացքում, պայմանականորեն կարելի է առանձնացնել օրենքի սահմանադրականության հարցի որոշման համակարգային մոտեցման հետեւյալ փուլերը:

1. 1803 -1920 թվականներ,
2. 1920 - 1940 թվականներ,
3. 1945 - 1990 թվականներ,
4. 1990 թվականից հետո:

ԱՄՆ Սահմանադրությունը չի անրագրում իրավական ակտերի սահմանադրականության հարցի որոշման որեւէ հստակ մեխանիզմ: Սակայն առաջին փաստաթուղթը, որն իրավական հիմք դրեց ընդհանուր իրավասության դատարանների համար լուծելու նաև նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերը, դա ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումն էր «Ուիյամ Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործով, որն ընդունվեց 1803թ. փետրվարի 24-ին: Այդ որոշմանը, փաստորեն, հակասահմանադրական համարվեց 1789 թ. Կոնգրեսի ընդունած դատավարական ակտի այն մասը, որը վերաբերում էր Գերագույն դատարանին վերապահված լիազորություններին (պարագրաֆ 13):<sup>9</sup> Դասական բանաձեւում է դարձել 1803թ. փետրվարի 24-ի որոշման առնչությամբ ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի այն միտքը, որ «Միայն եւ միայն դատական ճյուղի պարտականությունն է ասել, թէ ինչ է իրենից ներկայացնում օրենքը: ... Սահմանադրությանը անհամատեղելի օրենքն անվավեր է»<sup>10</sup>: Այս բանաձեւումն այսօր դարձել է սահմանադրական վերահսկողություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարանների գործունեության գլխավոր նշանաբանը:

**Երկրորդ փուլը** համընկնում է սահմանադրական վերահսկողության առաջին մասմագիտացված ինստիտուտի ստեղծման հետ: Դա 1920 թ. կազմավորված Ավստրիայի Բարձրագույն սահմանադրական դատարանն էր (ինչպես նաև նոյն ժամանակաշրջանում ձեւավորված Չեխոսլովակիայի սահմանադրական դատարանը)<sup>11</sup>:

Այս փուլը կարելի է նաև պայմանականորեն համարել նոր մոտեցման փիլիսոփայության մշակման փուլ: Ինչ վերաբերում է գործնականում նոր համակարգերի ներդրմանը, ապա կատարվեցին միայն առաջին, ու ինչ-որ տեղ՝ նաև ձախողված, փորձերը (այդ թվում նաև Չեխոսլովակիայում ու հետագայում ԽՍՀՄիայում):

**Երրորդ փուլը** հետպատերազմյան շրջանն է, երբ Եվրոպական երկրներում գորեթ համատարած կազմավորվեցին սահմանադրական դատարաններ՝ առաջնահերթ խնդիր ունենալով ապահովել օրենքների ու նորմատիվ այլ ակտերի համապատասխանությունը Դիմնական օրենքին:

Այս շրջանում համայնավար հասարակարգ ու միակուսակցական պետական կառավարման համակարգ ունեցող երկրներում սահմանադրական վերահսկողության ինստիտուտներն ավելի շուտ դիտարկվում էին որպես բոլորուական շքեղություն: Դրան հակառակ, Եվրոպական երկրներից շատերը (Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա եւ այլն) խնդիր առաջարկեցին, որ սահմանադրական վերահսկողության առանցքային հարցը հասարակության զարգացման կայունության ապահովումն ու մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է: Բնականաբար, հետպատերազմյան շրջանում այս երկրների սահմանադրական դատարանները ոչ միայն օժտվեցին նման լիազորությամբ, այլև քաղաքացիներն իրենք իրավունք ստացան ընդհուպ սահմանադրական դատարանում պաշտպանելու իրենց իրավունքները:

Իշխանությունների տարանջատումը եւ զայումների ու հակակշիռների հստակ համակարգի արմատավորումը, դրա օգնությամբ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների ներդաշնակ աշխատանքի ապահովումը ենթադրում էր նաեւ իշխանության տարբեր թեւերի միջեւ լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման արդյունավետ համակարգի արմատավորում: Եվրոպական երկրների փորձը վկայում է, որ հետպատերազմյան շրջանում ձեւավորվող սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմինների համար այս խնդիրը նույնպես եղել է առանցքայիններից մեկը:

**Չորրորդ փուլը** համբնկում է համաշխարհային ժողովրդավարական գործընթացների որակական նոր ալիքի՝ ԽՄՀՄ փլուզման, այս տարածքում եւ Արեւելյան Եվրոպայում բազմաթիվ նորանկախ պետությունների կազմավորման շրջանի հետ: Արդեն իսկ նկատի ունենալով արեւատանը վրոպական երկրների փորձը, նորանկախ պետություններն իրենց պետական շինարարության ու ժողովրդավարական ինստիտուտների զարգացման առաջին ու արմատական քայլերից մեկը համարեցին սահմանադրական վերահսկողության ամրողական համակարգերի ստեղծումը: Դա նաեւ պայմանավորված էր, գորեն բոլոր երկրներում, զգալի հժվարություններով մշակված ու ընդունված Շիմնական օրենքի հուսալի պաշտպանության, հասարակությունը ճգնաժամային կառավարման հարթությունից դիմանմիկ զարգացման հարթություն տեղափոխելու, պետական ու հասարակական կայունությունն ամրապնդելու անհրաժեշտությամբ:

### **1.6. Սահմանադրական արդարադատության օրյեկտները**

Սահմանադրական արդարադատությունը, ինչպես նշեցինք, սահմանադրական վերահսկողության իմմական ձեւն է եւ աշխարհի հարյուրից ավելի երկրներում նշված խնդիրների լուծումն իրականացվում է հատուկ մասնագիտացված դատարանների միջոցով: Պետական իշխանության այս գործառույթով էլ պայմանավորված է սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը: ՀՀ սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես դատական իշխանության նարմին<sup>12</sup> եւ Սահմանադրության 96-101 հոդվածներում անրագրված նորմերի ուժով անկախարար իրականացնում է դատական սահմանադրական վերահսկողություն՝ 100 հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակներում: Սահմանադրական դատարանի լիազորությունների վերահսկման օբյեկտների ընդգրկման շրջանակի հարցը:

Ընդհանրապես սահմանադրական վերահսկողության առանցքային եւ, թերեւս, ամենակարեւոր հարցերից են վերահսկման օբյեկտների հստակեցման եւ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների որոշման հարցերը: Կախված այն բանից, թե ի՞նչ օբյեկտների նկատմամբ է իրականացվում վերահսկողությունը, պարզ է դաշնում, թե ինչ խնդիրներ են դրված սահմանադրական դատարանի առջեւ: ճշտելով այն հարցի պատասխանը, թե ի՞նչ դրվագում է սահմանադրական սահմանադրական դատարան, կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ դատարանի կենսունակության մասին:

Միջազգային փորձը վկայում է, որ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմիններ ունեցող երկրները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի:

1. որտեղ սահմանադրական դատարանների վրա է դրված՝

ա) օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցի լուծումը,

բ) լիազորությունների հարցերով պետական իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծումը,

գ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողությունը,

2. որտեղ իրականացվում են միայն ա) եւ բ) ենթակետերով նախատեսված լիազորությունները,

3. որտեղ սահմանադրական դատարանները հիմնականում իրականացնում են ա) ենթակետով նախատեսվող գործառույթներ:

**Առաջին խմբին** կարելի է դասել հետեւյալ երկրները. Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Լեհաստան, Պորտուգալիա, Իտալիա, Ռուսաստան, Սլովակիա, Հունգարիա, Սլովենիա, Վրաստան եւ այլն:

**Երկրորդ խմբին**, որտեղ գլխավոր շեշտը դրվում է իշխանությունների գործունեության սահմանադրական հաշվեկշի պահպանման վրա, կարելի է դասել Հունաստանը, Բուլղարիան, Թուրքիան, Ղրղզստանը, Լիտվան եւ այլն:

**Երրորդ խմբում**, որտեղ է նաեւ Հայաստանը, տեղ են գտել այն երկրները, որտեղ Սահմանադրությանը էապես սահմանափակված է սահմանադրական դատարանների գործողության ոլորտը: Նման համակարգեր գոյություն ունեն նաեւ Ֆրանսիայում, Ռումինիայում, Մոլդովայում, Ղազախստանում եւ այլն:

Նկատենք նաեւ, որ տարբեր խմբերի մեջ մտնող երկրների մեջ մասում հատուկ կարեւորվում են ընտրությունների ու հանրաքվեների անցկացման, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների գործունեության օրինականության ու սահմանադրականության ապահովման խնդիրները, եւ դրանք դարձել են սահմանադրական վերահսկման առարկա: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովման նպատակով մի շարք երկրներում սահմանադրական դատարաններին իրավունք է վերապահված յուրաքանչյուր տարի ստորագրությանց հաջիվները: Ավելին, օրինակ, Պորտուգալիայում սահմանադրական դատարանի վրա է դրված կուսակցությունների գրանցման հարցը: Այս երկրում սահմանադրական դատարանը վերահսկում է նաեւ պետական պաշտոնյաների եկամուտները՝ աշխատանքի նշանակվելիս եւ ազատվելիս պահանջելով եկամուտների ու սեփականության հայտարարագիր, որը կարող է նաեւ ստորագրել:

Անկախ այն բանից, թե երկիրը որ խմբում է գտնվում եւ որքան է նեղ կամ լայն սահմանադրական վերահսկողության ոլորտը, միեւնույն է, երկրի առջեւ ծառացած խնդիրների լուծման բնույթից ելմելով պետք է ճշգրտվեն սահմանադրական վերահսկողության օբյեկտները:

Սահմանադրական դատարանի գործունեության ուղղվածությունը, ինչպես նաեւ արդյունավետությունը նախ պայմանավորված են նրանով, թե որոնք են վերահսկման օբյեկտները, ինչպիսի նորմատիվ ակտերի սահմանադրականության (առանձին երկրներում նաեւ օրինականության) հարցեր պետք է քննության առնի սահմանադրական դատարանը:

Դիմականում դրանք հետեւյալ իրավական ակտերն են.

և Սահմանադրություն,

և օրենք,

և նորմատիվ այլ ակտեր,

և միջազգային պայմանագրեր,

և դատարանների որոշումներ,

և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներ,

և կուսակցությունների որոշումներ,

և հասարակական կազմակերպությունների որոշումներ:

Վերահսկողության օբյեկտների ընդգրկման շրջանակից ելմելով՝ նախ տարբերակվում են համապարփակ եւ սահմանափակ վերահսկողություն հասկացությունները: Համապարփակի դեպքում դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտ են բոլոր նորմատիվ ակտերը:

Սահմանափակի դեպքում՝ օրենքը սահմանափակում է դրանց շրջանակը (օրինակ, Ղազախստանում՝ միայն օրենքները եւ միջազգային պայմանագրերը, Ֆրանսիայում, Մարոկկոյում, Մոլդովայում, Ռումինիայում, Հունգարիայում, Գարոնում, Բենինում նաեւ պաշտամենտի պալատների կանոնակարգերը, Իտալիայում, Իսպանիայում՝ օրենքի ուժ ունեցող ակտերը, Սլովակիայում՝ գործադիր իշխանության կենտրոնական մարմինների բոլոր իրավական ակտերը, այդ թվում՝ նախարարների նորմատիվ օրոշումները):

Համապարփակ վերահսկողությունը, որպես կանոն, բնորոշ է ամերիկյան մոդելին, սահմանափակը՝ եվրոպական: Սակայն այս բաժանումը պայմանական է: Ընդ որում, ԱՄՆ-ում սահմանադրական վերահսկողության օբյեկտ է քրեական կամ քաղաքացիական գործի դատաքննության ընթացքում վիճարկվող ցանկացած օրենսդրական կամ վարչական ակտ:

Եվրոպական շատ երկրներում սահմանադրական վերահսկողության օբյեկտների շրջանակը գործեք համապարփակ է (Ավստրիա, Պորտուգալիա, Լեհաստան, Գերմանիա): Օրինակ, Լեհաստանում՝ Սահմանադրական տրիբունալը որոշում է ոչ միայն օրենքների, այլեւ կենտրոնական եւ տեղական մարմինների ակտերի սահմանադրականության հարցը:

Սահմանադրական վերահսկողության օբյեկտ են դառնում տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը (Սլովակիա, Սլովենիա, Չեխիա):

Առանձնահատկությունները մեծ են նաեւ դաշնային եւ ունիտար պետություններում: Առաջիններում՝ սահմանադրական վերահսկողությունը կոչված է ապահովելու նաեւ դաշնային շահի գերակայությունը: Ուստի, վերահսկողության օբյեկտ են դառնում նաեւ դաշնության սուբյեկտների նորմատիվ ակտերը:

Մի շարք երկրներում կամ օրենքներ, որոնք դուրս են սահմանադրական վերահսկողության շրջանակներից. օրինակ, Թուրքիայում՝ այն օրենքները, որոնք ընդունվել են հանրապետության կազմակորման ժամանակ, եւ այն դեկրետները, որոնք ունեն օրենքի ուժ եւ ընդունվել են արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (1982թ. Սահմանադրության 174 եւ 148 հոդվածներ):

Վիճակարույց է սահմանադրական եւ հանրաքենով ընդունված օրենքների՝ սահմանադրական վերահսկողության օբյեկտ լինելու հարցը: Կարծիք է հայտնվում, որ նման ակտերը, ինչպես նաեւ Սահմանադրությունը չեն կարող լինել սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Մյուս կողմից՝ առկա է հակափատարկը, համաձայն որի նույնիսկ սահմանադրական փոփոխությունը կամ լրացումը սահմանադրական վերահսկողության օբյեկտ են, քանի որ առանձին երկրների սահմանադրություններ պարունակում են անփոփոխելի կամ գերակայող նշանակություն ունեցող նորմեր: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114 հոդվածով նախատեսված է, որ Սահմանադրության 1, 2 եւ 114 հոդվածները փոփոխման ենթակա չեն: Բացի դրանից, շատ երկրների սահմանադրություններ պարունակում են նորմեր, որոնք կարգավորում են առանձին հոդվածների կամ սահմանադրական դրույթների կիրարկման առանձնահատկությունները: Ավելացնենք նաեւ, որ յուրաքանչյուր իրավական փաստաթուղթը, եթե նույնիսկ նյութական կամ բովանդակային վերահսկման օբյեկտ չէ, ապա ամսնուսափելիորեն կարող է դաշնալ ըստ ձեւի կամ ձեւական վերահսկման օբյեկտ:

Մի շարք երկրներում, օրինակ՝ Ռումինիա, Ղրղզստան, մինչեւ սահմանադրական փոփոխության ընդունումը (պառական կամ հանրաքե), այն ներկայացվում է սահմանադրական դատարան: Միայն Վերջինիս դրական կարծիքի դեպքում կարող է հետագա ընթացք տրվել: (Ռումինիայի սահմանադրական դատարանը 10 օրում պետք է եզրակացնելուն տա՝ Սահմանադրության 13 եւ 37 հոդվածներ: Նման կարգ է նաեւ Մոլդովայում՝ 135 եւ 141 հոդվածներ):

Մի շարք երկրներում սահմանադրական դատարանն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք (Ուզբեկստան, «Սահմանադրական դատարանի մասին» օրենք, հոդված 10): Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ առաջադրվում են սահմանադրական փոփոխություններ, ապա դրանք նախական պարտադիր վերահսկողության համակարգով քննության են առնվում սահմանադրական դատարանի կողմից:

Քիչ թվով երկրներ կան, որտեղ վերը նշված բոլոր տեսակի իրավական ակտերը հանդիսանում են սահմանադրական վերահսկողության օբյեկտ:

Սահմանադրական արդարադատության գարգացման միտվածությունը, սակայն, այնպիսին է, որ այդ խումբ երկրների թիվը գնալով ավելանում է: Այս առնչությամբ կան նաեւ լուրջ բանավիճային բնույթ կրող հարցեր: Նախ. Սահմանադրության եւ հանրաքենով ընդունված օրենքների վերաբերյալ: Քիչ չեն

Դեպքերը, եթե սահմանադրական դատարաններն անդրադարձել են այս հարցին եւ ընդհուած որոշումներ ընդունել՝ հստակեցնելու իրենց դիրքորոշումը: Ֆրանսիայի, Չեխիայի եւ մի շարք այլ Երկրների օրինակը վկայում է, որ նման Երկրներում հակված են հեռու մնալ Սահմանադրության եւ հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրական վերահսկողությունից:

Անկախ դրանից, սահմանադրական վերահսկողության համակարգը երբեք ավարտում, ամբողջական ու գործուն չի լինի, եթե այն չի ներառում Սահմանադրության մեկնաբանման իրավունքը եւ բոլոր տեսակի նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողությունը: Այս առումով հարկ է առանձնացնել նաև բանավիճային բնույթ կրող հարցերի երկրորդ խումբը: Այն վերաբերում է գործադիր իշխանության կենտրոնական ու տարածքային մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներին:

Հայաստանի օրինակը վկայում է, որ, բացի կառավարության որոշումներից, նմանատիպ իրավական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն: Նման վիճակը տիպական է հիմնականում վերոհիշյալ երրորդ խմբում ընդգրկված Երկրներին: Մի կողմից, դա բացատրվում է նրանով, որ սահմանադրական դատարանի առջև չի դրվում լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիր, ինչպես նաև դատարանն օժտված չէ անհատական դիմումների հիման վրա քննության առարկա դարձնել այդ ակտերի սահմանադրականության ու օրինականության հարցը՝ կապված մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների հետ: Մյուս կողմից՝ փորձ է արվում դատական ընդհանուր համակարգում այս հարցերն ավելի շատ կենտրոնացնել ընդհանուր իրավասության դատարաններում, իսկ սահմանադրական դատարանների ուշադրությունը հատկապես բեւեռել օրենքների եւ միջազգային պայմանագրերի սահմանադրականության պահովման խնդիր վրա: Նման լուծումը, սակայն, պահանջում է սահմանադրական դատարան եւ դատական ընդհանուր համակարգ գործառնական փոխհարաբերությունների մանրամասն հստակեցում եւ ճշգրիտ սահմանում (լավագույն օրինակ կարող են ծառայել դարձյալ Ավստրիան, Գերմանիան, Իսպանիան կամ Իտալիան), որպեսզի չառաջանան մի կողմից՝ փակուղային իրավիճակներ, մյուս կողմից՝ խնդիր լուծումը մնա օդից կախված կամ տեղափոխվի վարչական քաշքուկների ոլորտ:

Ցավոք, այս հարցում Հայաստանում չի գտնվել անհրաժեշտ լուծումը, եւ խնդիրն ամբողջական վերանայման անհրաժեշտություն ունի:

### **1.7. Սահմանադրական վերահսկողության եւ սահմանադրական դատավարության սուբյեկտները**

Հաճախ կարծիք է հայտնվում, որ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է կենտրոնացված կամ ապակենտրոն դատական համակարգի միջոցով, իսկ մյուս բոլոր մարմինները, որոնք ուղղակիորեն առնչվում են այս խնդիրի հետ, հանդես են գալիս որպես դատարան դիմող սուբյեկտներ (եթե դա նախատեսված է Սահմանադրությամբ կամ օրենքով): Սա ճիշտ մոտեցում չէ, այն նաև շփոր է առաջացնում: Տարբերակվում են սահմանադրական վերահսկողության սուբյեկտ եւ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող, այսինքն՝ սահմանադրական դատավարության սուբյեկտ հասկացությունները:

Ծատ Երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունը միանշանակ վկայում է, որ տարբեր մարմիններ ուղղակիորեն, այս կամ այն չափով, ունեն սահմանադրական վերահսկողության կամ հսկողության իրավասություն:

Բնական է, որ կոնկրետ վերահսկողությունն իրականացվում է տարբեր ձեւերով եւ յուրաքանչյուր սուբյեկտի համար օրենքով սահմանված կարգով: Զնայած տարբեր Երկրներում այս ամենն ունի իր առանձնահատկությունները, սակայն, ընդհանուր առմանը, որպես սահմանադրական վերահսկողության կամ հսկողության սուբյեկտ են հանդես գալիս.

և ժողովուրդը (Եթե հանրաքվեով ընդունում է Սահմանադրությունը եւ դրանում կատարում փոփոխություն),

և Երկրի նախագահը (պետության գլուխը) (Երկրներից մեծ մասում նախագահի Երդնան տեքստում ամրագրված է Սահմանադրության պաշտպանության պարտավորությունը, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49 հոդվածի առաջին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Նման իրավասությունը պահպանում է նաև հստակ մեխանիզմ),

և հատուկ մասնագիտացված սահմանադրական դատարանները,

և խորհրդարանը,

և ընդհանուր իրավասության դատական համակարգը,

և առանձին երկրներում՝ դատախազությունը,

և ցանկացած պետական մարմին կամ հասարակական կազմակերպություն (որոնք ապահովում են Սահմանադրությանը համապատասխան որոշումների ընդունում եւ գործունեություն): Այստեղ հատկապես առանձնանում են կառավարությունները, որոնց վերաբերյալ նաեւ Սահմանադրությամբ հատուկ պարտականություններ են նախատեսվում (օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89 հոդվածի 7 կետով կառավարությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման ուղղությամբ):

Մի շարք երկրներում սահմանադրորեն նախատեսված ինստիտուտ է ժողովրդի պաշտպանը, որը նաեւ սահմանադրական հսկողության սուբյեկտ է:

Վերահսկողության ձեւերից մեկն էլ այն է, երբ մի շարք երկրներ Սահմանադրությամբ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունք են վերապահում չենթարկվել հակասահմանադրական օրենքներին (Գանա, Բենին, Բրազիլիա եւ այլն): Սա շատ նույր եւ խութերով լեցուն հարց է:

Ինչպես արդեն նշել ենք, սահմանադրական վերահսկողության համակարգը թերի է, եթե այն չի ներառում տվյալ ազգի ու երկրի պատմականորեն ձեւավորված հասարակական կեցության ողջ արժեհամակարգի պահպանման ու զարգացման դաշտը: Ուստի հասարակության յուրաքանչյուր բջիջ յուրովի հանդես է գալիս նաեւ որպես հավաքական ու նորելավորված արժեհամակարգի՝ սահմանադրական վերահսկողության (հսկողության) սուբյեկտ:

Սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից է, թե ովքե՞՞ր են դատարան դիմող սուբյեկտները (սահմանադրական դատավարության սուբյեկտները) եւ ի՞նչ կարգով են իրականացնում հատկապես վերացական (արստրակտ) վերահսկողության իրենց իրավասությունը: Որպես կանոն, դրանց թվին են դասվում պետության գլուխը, պառլամենտը եւ դրա անդամների որոշակի մասը, կառավարությունը, ընդհանուր իրավասության դատարանները, քաղաքացիները:

Այսուեղ հարկ է նշել, որ մի շարք երկրներում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը բավականին ընդարձակ է: Օրինակ, Պորտուգալիայում այդպիսիք են նաեւ նախարարները, պառլամենտի խմբակցությունները, դատախազը, դատավորները, տարածաշրջանային կառավարման մարմինները, քաղաքացիները:

Ուստաստանում՝ Նախագահը, կառավարությունը, Պետական Դուման, Ռաշնային խորհուրդը, պատգամավորների մեկ հինգերորդը, բարձրագույն արքիտրաժային դատարանը, գերագույն դատարանը, ցանկացած դատավոր, Շաշնության սուբյեկտների օրենսդիր ու գործադիր մարմինները, ինչպես նաեւ քաղաքացիները՝ եթե օրենքը ուսնահարել է նրանց իրավունքները:

Սիրիայում դիմող սուբյեկտ են միայն երկրի Նախագահը եւ պառլամենտի մեկ քառորդը, Շրի-Լանկայում միայն Նախագահը:

Ֆրանսիայում մինչեւ 1974թ. սահմանադրական խորհուրդ դիմում էին Նախագահը, կառավարությունը եւ պառլամենտի պալատների նախագահները (այդ ընթացքում սահմանադրական խորհուրդը լսում էր տարեկան միջին հաշվով մեկ գործ՝ սահմանադրականության հարցով): 1974 թվականից դիմում սուբյեկտ դարձան 60 պատգամավոր եւ 60 սենատոր (1974-1991թթ. լսվեց 220 գործ՝ վերջիններիս նախաձեռնությամբ):

Գերմանիայում սահմանադրական դատարան դիմում սուբյեկտների շրջանակն ընդլայնվեց 1969 թվականին:

Որոշ երկրներում սահմանադրական դատարանը գործը կարող է քննել սեփական նախաձեռնությամբ (Մոնղոլիա, Ալժիր): Առանձին երկրներում օրենքով է նախատեսվում եւ հստակեցվում սահմանադրական դատարանի նախաձեռնության շրջանակները (Ալբանիա, Ավստրիա, Բենին, Գարոն, Լեհաստան, Ուգրեկստան): Օրինակ, Ավստրիայի սահմանադրական դատարանը եթե օրենքի որեւէ դրույթի սահմանադրականության հարցով գործ է քննում, ապա կարող է քննության նյութ դարձնել

նաեւ տվյալ օրենքի մյուս հոդվածները՝ անկախ այն բանից՝ դիմումում դա նշված է, թե՝ ոչ։ Ընդհանրապես իր նախաձեռնությամբ գործի քննումը՝ որպես իրավունք, սահմանադրական դատարաններին վերապահելը նպատակահարմար չի համարվում, եւ մենք միանգամայն համամիտ ենք այդ մոտեցմանը։

Վրյունավետ դատական սահմանադրական վերահսկողության համար անհրաժեշտ նախապայման է նաեւ այն, որ ընդհանուր իրավասության դատարաններն իրավունք ունենան օրենքի սահմանադրականության հարցով օպերատիվ կարգով ուղղակի դիմել դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին, ինչպես նաեւ հնարավորություն տալ սահմանադրական դատարանին քաղաքացու դիմումի հիման վրա վերանայելու այն դատարանի որոշումը, որը, ըստ դիմողի, հակասահմանադրական իրավանորմ է կիրառել։

Ներկայումս ամենահրատապ խնդիրներից մեկը նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշման հարցում ֆիզիկական անձանց դիմող սուբյեկտ ճանաչելու հնարավորություն ընձեռելն է։ Սա երկակի խնդիր է։ Նախ. էապես ընդլայնվում է սահմանադրական վերահսկողության սուբյեկտների շրջանակը եւ վերահսկողությունը դառնում է ավելի գործուն։ Երկրորդ՝ առավել կատարյալ է դարձնում մարդու իրավունքների պաշտպանության ներառյալ կատարյալ համակարգը։

Անկախ սահմանադրական վերահսկողության համակարգի բնույթից, կարեւոր այն է, որ ֆիզիկական անձն իր սահմանադրական իրավունքները պաշտպանելու եւ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը բարձրացնելու ու դատական կարգով լուծում ստանալու հնարավորություն ունենա (օրինակ, Սլովենիայում նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով քննվող գործերի շուրջ 80 տոկոսը քննության է ընդունվում ֆիզիկական անձանց դիմուների հիման վրա, 20 տոկոսը՝ պետական մարմնների)՝<sup>13</sup> Առավել վտանգավորն այն է, եթե խնդիրն օդում կախված է մնում եւ դառնում է քաղաքական լարվածության խթանից։

Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շարքում տեղ պետք է գտնեն թե տեղական ինքնակառավարման մարմինները (ինչպես գոյություն ունի որոշ երկրներում), եւ թե եկեղեցին (կրոնական կազմակերպությունները)։ Այս հարցերի առումով նույնպես կան տարբեր մոտեցումներ։ Դատկապես դա վերաբերում է կրոնական կազմակերպություններին, որոնք անջատ են պետությունից, սակայն պետք է ի վիճակի լինեն պաշտպանելու իրենց սահմանադրական իրավունքները։

Ավելացնենք նաեւ, որ ընդհանրապես սահմանադրական վերահսկողության ինստիտուտների գործունեության արյունավետությունը, դրանց աշխատանքի նպատակայնությունն ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են դիմող սուբյեկտների կազմի խելամիտ ու հաշվեկշռված ընտրությամբ։ Լավագույն մոդելը, թերեւս, այն է, եթե սահմանադրական վերահսկողության (ու նաեւ հսկողության) բոլոր սուբյեկտները, ինչպես նաեւ քաղաքացիները՝ իրենց սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցով, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ են։

Ինչ վերաբերում է նորմատիվ ակտերի սահմանադրականության խնդիրին, ապա ընդհանուր միտումն այն է, որ պառլամենտի անդամները՝ հնարավոր նվազագույն թվով, սահմանադրական դատարան դիմուն իրավունք ունենան։

ՀՀ Սահմանադրության 101 հոդվածով սահմանված է, որ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ 1) Հանրապետության Նախագահը, 2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը, 3) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արյունքների հետ կապված վեճերով, 4) կառավարությունը՝ Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքում։ Սահմանադրական դատարանը գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում։ Սահմանադրական դատավարության սուբյեկտների նման սահմանափակ շրջանակ այսօր գոյություն չունի աշխարհի որեւէ մեկ այլ երկրում։ Բնականարար, այս հանգամանքը բացասական հսկայական ազդեցություն ունի սահմանադրական արդարադատության արյունավետ իրականացման վրա։ ՀՀ սահմանադրական բարեփոխումների այն նախագիծը, որը դրական լուրջ գնահատականի արժանացավ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2001թ. հուլիսի 6-ի լիազումը նիստում, նախատեսում է սահմանադրական դատարանի լիազորությունների եւ դիմուն սուբյեկտների որակապես նոր շրջանակ։ Ըստ այդ նախագիծի՝ նախատեսվում է Սահմանադրության 100 եւ 101 հոդվածների հետեւյալ նոր շարադրանքը։

«Հոդված 100. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը։

Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

- որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

1.1.) լուծում է պետական իշխանության, ինչպես նաև պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ լիազորությունների սահմանադրականության հարցերով առաջացած վեճերը, նման վեճերի լուծման դեպքում մեկնաբանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը.

1.2.) որոշում է Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության որոշումների, Վարչապետի որոշումների՝ ՀՀ օրենքներին համապատասխանության հարցը.

- մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը որոշում է նրանում անրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը.

- լուծում է հանրավեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1.) լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

- անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

- Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնական անելու հիմքերի առկայության մասին.

- Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի կետերով նախատեսված միջոցառումների մասին.

- Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

- Եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան որպես նեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության հարց հարուցելու մասին.

8.1.) որոշում է կայացնում դատավորի լիազորությունների դադարեցման մասին.

8.2.) Եզրակացություն է տալիս համայնքի դեկավարի լիազորությունները դադարեցնելու եւ համայնքի ավագանին արձակելու՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության մասին.

- օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին»:

Բնականաբար, նման փոփոխություններն առաջադրում են նաև 101 հոդվածի վերանայման անհրաժեշտություն, համաձայն որի նախատեսվում է.

«**Հոդված 101.** Սահմանադրությանը եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1. Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100 հոդվածի 1, 1.1., 1.2., 2, 3, 8, 9 կետերով նախատեսված դեպքերում.
2. Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100 հոդվածի 1.1., 1.2., 3, 5, 6, 8, 9 կետերով նախատեսված դեպքերում.
3. պատգամավորների առնվազն մեկ հիմգերորդը՝ Սահմանադրության 100 հոդվածի 1 եւ 1.2. կետերով նախատեսված դեպքերում.
4. կառավարությունը՝ Սահմանադրության 100 հոդվածի 1, 1.1., 1.2., 7, 8.2. եւ 9 կետերով նախատեսված դեպքերում.
5. տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքներին առնչվող՝ Սահմանադրության 100 հոդվածի 1 կետում թվարկված նորմատիվ ակտերի սահմանադրականության կամ պետական մարմինների՝ սահմանադրական լիազորությունների գերազանցումը վիճարկելու հարցով.
6. յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործերով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը եւ վիճարկվում է իր նկատմամբ կիրառված օրենքի կամ Սահմանադրության 100 հոդվածի 1.2. կետում թվարկված այլ նորմատիվ ակտի այս կամ այն դրույթի սահմանադրականությունը կամ օրենքին համապատասխանությունը.
7. դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.
8. Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100 հոդվածի 1 կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.
9. Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. եւ 4 կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով.

10. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Սահմանադրության 100 հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերում.
11. արդարադատության նախարարը՝ Սահմանադրության 100 հոդվածի 8.1. կետում նախատեսված դեպքերում:

Սահմանադրական դատարանը գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում»:

Նման փոփոխությունների առաջադրումը միանշանակ բխում է նոր հազարամյակում սահմանադրականության ու, մասնավորապես, սահմանադրական արդարադատության զարգացման միջազգային սկզբունքներից ու միտումներից եւ լրջորեն կարող է նպաստել մեր երկրում սահմանադրական արդարադատության ու նաեւ՝ պետական իշխանության առավել կենսունակ համակարգի արմատավորմանը:

## ԳԼՈՒԽ II . ԴԱՏԱԿԱՆ ՍԱՐՍԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՇՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ

### Թեմայի հիմնական հարցերն են.

- ի՞նչ է նախնական վերահսկողությունը եւ ինչպե՞ս է այն իրականացվում,
- ինչո՞ւ է կայանում հետագա վերահսկողության դերը եւ որո՞նք են դրա առանձնահատկությունները,
- ի՞նչ առավելություններ ու թերություններ ունի կոնկրետ վերահսկողությունը,
- բնութագրել վերացական վերահսկողության դերը սահմանադրական վերահսկողության համակարգում,
- ի՞նչ է իրենից ճերկայացնում եւ ինչպե՞ս է իրականացվում պարտադիր վերահսկողությունը,
- ո՞րն է ֆակուլտատիվ վերահսկողության դերը,
- ինչո՞վ է տարբերվում ըստ ձեւի վերահսկողությունն ըստ բովանդակության վերահսկողությունից,
- որո՞նք են սահմանադրական վերահսկողության առանձին ձեւերի գործադրման հիմնական առանձնահատկությունները տարբեր երկրներում,
- համեմատական վերլուծությամբ բնութագրել սահմանադրական վերահսկողության առանձին ձեւերի առավելություններն ու թերությունները:

### 2.1. Նախնական վերահսկողություն

Մասնագիտացված հնատիտուտների կողմից սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է տարբեր կերպ: Տարբեր են նաեւ վերահսկողության բնույթը, կարգը, առանձին ձեւերի ներդաշնակումն ու գործադրման առանձնահատկությունները:

Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի կողմից իրականացվող նախնական եւ հետագա վերահսկողություն հասկացությունների տարանջատման հիմքում միայն պարզ ժամանակային գործոնը չէ, որ դրվագ է: Այդ տարբերակումն ունի լուրջ բովանդակային ընդգրկում: Նախնական վերահսկողությունը ենթադրում է, որ նորմատիվ ակտը, մինչեւ գործողության մեջ դրվելը, դառնում է սահմանադրական վերահսկողության օբյեկտ՝ հնարավոր հակասահմանադրական իրավիճակները նախապես կանխելու նպատակով: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ: Մի դեպքում, սահմանադրական վերահսկողության օբյեկտ է նորմատիվ ակտի նախագիծը, մյուս դեպքում՝ արդեն ընդունված, սակայն դեռևս չստորագրված եւ գործողության մեջ չդրված նորմատիվ ակտը:

Առաջին տարբերակն առավել մեծ չափով բնորոշ է, այսպես կոչված, ֆրանսիական-եվրոպական մոդելին: Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի գործունեության բնութագրիչ կողմը հենց օրգանական օրենքների նախագծերի նախնական պարտադիր վերահսկումն է:

Միջանկյալ փուլում նորմատիվ ակտի սահմանադրական վերահսկողության բնութագրիչ օրինակ կարող է ծառայել Ուժմինիան: Այս երկրում օրենքի նկատմամբ սահմանադրական վերահսկողությունը իրականացվում է, եթե այն պառլամենտի կողմից ընդունվել է, սակայն դեռևս Նախագահի կողմից չի ստորագրվել ու չի դրվել գործողության մեջ:

Ուժմինիայի Սահմանադրության 144 հոդվածով նաեւ նախատեսված է, որ եթե օրենքը հակասահմանադրական է ճանաչվում սահմանադրական դատարանի կողմից, ապա այն պետք է վերադարձվի պառլամենտ՝ վերաքննարկման: Եթե օրենքը վերստին ընդունվում է նույն խմբագրությամբ՝ երկու պալատների անդամների ծայների առնվազն 2/3-ով, ապա օրենքը հաստատվում է:

Մի շարք երկրներում նախնական վերահսկողություն իրականացվում է **հատկապես պառլամենտի պալատների կանոնակարգերի նկատմամբ**, որպեսի օրենքի միջոցով իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը չխախտվի:

Հայաստանի Հանրապետությունում նախնական վերահսկողություն իրականացվում է **միայն միջազգային պայմանագրերի նկատմամբ**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (1997թ. դեկտեմբերի 9-ի խմբագրությամբ) 56 հոդվածը նախատեսում է, որ մինչեւ Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը, նրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով սահմանադրական դատարան է դիմում Հանրապետության Նախագահը: Տվյալ գործով սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետեւյալ որոշումներից որեւէ մեկը.

1) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող,

2) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները՝ ամբողջությամբ կամ դրանց մի մասը, ճանաչել Սահմանադրությանը չհամապատասխանող:

Նախնական վերահսկողությանը բնորոշ են վերահսկողության վերացական, պարտադիր եւ ֆակուլտատիվ ենթաձեւերը:

## 2.2. Հետագա վերահսկողություն

Մինչեւ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների ձեւավորումը եւ սահմանադրական արդարադատության Եվրոպական համակարգի արմատավորումը վերահսկողությունն իրականացվում էր միայն գործողության մեջ դրված նորմատիվ ակտերի նկատմամբ, որը եւ բնորոշվում է որպես **հետագա վերահսկողություն**: Հետագա վերահսկողության նպատակն է պահպանել իրավանորմերի սահմանադրականությունը դրանց գործադրման ցանկացած փուլում: Նման խնդիր կարող է առաջանալ ոչ միայն այն դեպքում, եթե քննության առարկա է որեւէ իրավախստում, այլև այն դեպքերում, եթե սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից այս կամ այն իրավական ակտի, դրա առանձին դրույթների սահմանադրականությունը ճշտելու անհրաժեշտություն է առաջանում:

Սահմանադրական վերահսկողության ամերիկյան համակարգի առանձնահատկությունն այս հարցում այն է, որ հետագա վերահսկողությունն իրականացնում են բոլոր դատարանները՝ միայն կոնկրետ գործեր քննելիս, եւ կայացրած վճիռը կամ որոշումը վերաբերում է միայն տվյալ իրավահարաբերությունների սուբյեկտներին՝ քննվող գործի կողմերին: Չնայած դրան, յուրաքանչյուր նախադեպ էական նշանակություն ունի հետագայում նմանատիպ գործեր քննելիս:

Հետագա վերահսկողության Եվրոպական համակարգն ունի այն առանձնահատկությունը, որ կարող են լինել կամ չլինել ժամանակային սահմանափակումներ: Օրինակ, որպես կանոն, հանրաքվեների արդյունքների հետ առնչվող հարցերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքները իրապարակելուց հետո մեկանսյա ժամկետում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը նախատեսում է, որ հանրաքվեների, Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի քննության հարցերով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Հանրապետության Նախագահը.

2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը.

3) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով:

Որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ հանրաքենների կամ ընտրությունների արդյունքներն անփոփող պետական մարմինը: Ընդ որում, սահմանադրական դատարանում քննվող գործին առնչվող փաստական հանգամանքները քննության առարկա չեն կարող հանդիսանալ: Իսկ նման վեճերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում:

Եթե նախնական վերահսկողության ժամանակ հիմնականում փոխհարաբերվում են իշխանության առանձին թեւերը, ապա հետագա վերահսկողությունը ներառում է հասարակության գրեթե բոլոր շերտերը եւ հնարավորությունը է տալիս խորությամբ հաշվի առնել նաեւ իրավակիրառական պրակտիկայի առանձնահատկությունները: Սա հաճախ դառնում է նաեւ օրենսդրական պահանջ: Օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածով նախատեսված է, որ «Սահմանադրության 100 հոդվածի 1 եւ 2 կետերում նախատեսված հարցերով որոշումն ընդունվում է՝ գնահատելով ինչպես ակտի տառացի իմաստը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան»:

Նետագա վերահսկողության գլխավոր առաքելությունը, փաստորեն, հանգում է նրան, որպեսզի ապահովի հարափոփոխ հասարակական հարաբերությունների սահմանադրական ներդաշնակությունն ու կայունությունը:

Նետագա վերահսկողությանը բնորոշ են դատական սահմանադրական վերահսկողության վերացական եւ կոնկրետ ձեւերը:

### 2.3. Կոնկրետ վերահսկողություն

Ըստ բնույթի սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել կոնկրետ կամ վերացական (արստրակտ):

Կոնկրետ վերահսկողությունը կազմում է սահմանադրական վերահսկողության ամերիկյան համակարգի հիմնական բովանդակությունը եւ ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականության խնդիրն առնչվում է դատարանության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Եվրոպական շատ երկրներում նույնպես, առավել եւս, երբ գործում է անհատական դիմումների համակարգը, սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է նաեւ կոնկրետ վերահսկողության կարգով:

Կոնկրետ վերահսկողությանը հիմնականում բնորոշ է նաև:

վերահսկողության պայմանավորվածությունը կոնկրետ գործի քննությամբ,  
իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավասությեկտների վրա,

առաջին պլան է մղվում անհատական շահերի պաշտպանության խնդիրը,  
ընդհանուր իրավասության դատարանի եւ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների գործառնական հստակ փոխհարաբերությունների կանոնակարգվածությունը:  
Կոնկրետ վերահսկողությունն առավել բնորոշ է այն սահմանադրական դատարաններին, որոնք անհատական դիմումի հիմնա վրա մարդու իրավունքների անմիջական պաշտպանություն են  
իրականացնում (օրինակ, Խաղաղիայում, Երմանիայում, Ալովակիայում եւ այլն): Ampraro - ի հնատիտուտը, մասնավորապես, որն արմատավորվել է Խաղաղիայում, փաստորեն սահմանադրական դատարանին օժտում է մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի լիազորությամբ, որը բնորոշ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին: Նման լիազորությունը կարող է իրականացվել միայն կոնկրետ վերահսկողության կարգով:

միայն կոնկրետ վերահսկողության կարգով:

### 2.4. Վերացական վերահսկողություն

Վերացական վերահսկողությունը բնորոշ է միայն դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգին: Այն ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը կարող է օրենքով նախատեսված իրավասու անձի կողմից բարձրացվել՝ անկախ որևէ կոնկրետ գործի քննությունից: Սովորաբար վերացական (արստրակտ) վերահսկողության դեպքում, որպես կանոն, դիմու սուբյեկտները պետական իշխանության մարմիններն են: Սակայն կան երկրներ, որտեղ քաղաքացիները՝ ոչ միայն կոնկրետ գործով, այլ նաեւ որպես վերացական վերահսկողության

սուրյեկտ, նույնպես կարող են դիմել (Բրազիլիա, Մալազիա): Օրինակ, Բրազիլիայում ցանկացած քաղաքացի կարող է դիմել սահմանադրական վերահսկողության մարմնին, եթե գտնում է, որ օրենքը վճառում է ազգային մշակութային ժառանգությանը. շրջակա միջավայրին կամ հասարակական արժանապատվությանը: Եվրոպական շատ երկրներում, որտեղ քաղաքացին նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով անմիջապես սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունի, նույնպես գործում է վերացական վերահսկողության համակարգը (Իսպանիա, Պորտուգալիա եւ այլն): Ի դեպ, Գերմանիայում սահմանադրականության վերաբերյալ քաղաքացու դիմելու իրավունքը կիրառվում է թե Դաշնային եւ թե Շողերի մակարդակներում (Բավարիա, Բեռլին, Շեսեն եւ Սաար): Գերմանիայում 1953 - 1984 թթ. (դատարանի ակտիվ կայացման շրջանում) Դաշնային սահմանադրական դատարանի բոլոր որոշումներից 82-ը եղել է վերացական, 2200-ը՝ կոնկրետ դիմումներից: Իտալիայում 1948-1976թթ. համապատասխանաբար՝ 406 եւ 5761: Այսօր Եվրոպական երկրներում սահմանադրական դատարանների վերացական վերահսկողությամբ ընդունած որոշումները մոտավորապես ընդհանուրի 30-35 տոկոսն են կազմում: Վերացական վերահսկողության դերն առավել կարեւորվում է համակարգային անցումային փուլերում, երբ ակտիվ վերափոխվում է օրենսդրական դաշտը, ընդունվում է նոր Սահմանադրություն կամ կատարվում են էական սահմանադրական փոփոխություններ: Նորանկախ երկրների համար մեծ կարեւորություն է ստանում նաեւ միջազգային հասարակական հարաբերություններին ինտեգրվելու ու միջազգային պայմանագրերի սահմանադրականության պահովման խնդիրը: Վերացական վերահսկողությունն ունի կանխարգելիչ մեծ լիցք, պաշտպանում է Սահմանադրության գերակայությունը նորմատիվ ակտերի նախապատրաստման, ընդունման ու գործադրման բոլոր փուլերուն: Վերահսկողության այս ծեւը երաշխիք է դառնում իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշոր պահպանման եւ դրանց ներդաշնակ գործունեության ապահովման համար: Այս խնդիրի արդյունավետ լուծման պայմաններից մեկը վերացական վերահսկողության կարգով սահմանադրական դատարան դիմող սուրբեկտների ճիշտ ընտրությունն է: Տարբեր են նաեւ վերացական վերահսկողության օրյեկտները: Այսօր դասական կարող է համարվել այն համակարգը, որում վերացական վերահսկողության օբյեկտ են պետական իշխանության բոլոր մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերը:

## 2.5. Պարտադիր վերահսկողություն

**Ըստ կարգի** սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել պարտադիր կամ ֆակուլտատիվ: Պարտադիր է այն վերահսկողությունը, երբ նորմատիվ ակտը սահմանված կարգով պարտադիր քննության է առնվում եւ որոշվում է դրա սահմանադրականության հարցը: Նման օրինակ կարող են ծառայել օրգանական օրենքների սահմանադրական վերահսկողությունը Ֆրանսիայում կամ միջազգային պայմանագրերինը՝ Հայաստանում:

Պարտադիր վերահսկողության օրյեկտ են հաճախ դառնում նաեւ պառլամենտի պալատների կանոնակարգերը, քանի որ դրանք պարունակում են իշխանության այլ թեւերի հետ հարաբերությունները կարգավորող նորմեր:

Պարտադիր վերահսկողությունը հիմնականում կանխարգելիչ բնույթ ունի եւ նպատակ է հետապնդում նախապես բացառել առավել կարեւոր նշանակության իրավական ակտերում հակասահմանադրական նորմի հնարավոր առկայությունը:

Այս կարգը նույնպես մեծ կարեւորություն ունի անցումային փուլում գտնվող երկրների համար:

Ի տարբերություն շատ երկրների, Հայաստանի Հանրապետությունում պարտադիր վերահսկողության օրյեկտ են պետության անունից կնքվող բոլոր միջազգային պայմանագրերը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության հոդված 6 -ում անդադրված է, որ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացման համար, մինչեւ Ազգային ժողով դիմելը, ՀՀ Նախագահը օրենքով սահմանված կարգով դիմում է սահմանադրական դատարան:

Միջազգային պայմանագրում անրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումը պայմանագրի վավերացման համար դառնում է պարտադիր նախապայման:

Պարտադիր վերահսկողությունն օժանդակող դեր է կատարում նաեւ օրինաստեղծ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու առումով:

## 2.6. Ֆակուլտատիվ վերահսկողություն

Ֆակուլտատիվ վերահսկողությունն իրականացվում է, երբ նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման հարցով, սահմանված կարգով, ըստ ցանկության, դիմում է օրենքով դրա իրավունքն ունեցող սուբյեկտու:

Ֆակուլտատիվ վերահսկողությունը կարող է իրականացվել միայն վերացական վերահսկողության ձեւով: Իր բնույթով ֆակուլտատիվ վերահսկողությունը կարող է լինել ինչպես նախնական, այնպես էլ հետագա: Նախնական ֆակուլտատիվ վերահսկողությունը հիմնականում բնորոշ է այն երկրներին, որտեղ վերահսկողության օբյեկտ են պառամենտի կողմից ընդունված, սակայն Նախագահի կողմից դեռևս չստորագրված ու գործողության մեջ չդրված օրենքները:

Հետագա ֆակուլտատիվ վերահսկողությունն արդյունավետ է այն դեպքում, երբ ժամանակային սահմանափակում չկա եւ նման վերահսկողության հարցը կարող են առաջ քաշել հնարավոր մեծ թվով դիմում սուբյեկտու:

Ֆակուլտատիվ վերահսկողության դեպքում պարտադիր չէ դիմում սուբյեկտի համոզվածությունը տվյալ ակտի կամ դրա առանձին դրույթի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու հարցում: Հակառակում համոզված չլինելը նույնպես բավարար հիմք է հարցը սահմանադրական վերահսկողության մարմնում քննության առարկա դարձնելու համար:

Վերահսկողության այս ձեւը հնարավորություն է տալիս առավել ճկուն դարձնել սահմանադրական վերահսկողությունը, Սահմանադրության գերակայության ապահովման գործին ակտիվ մասնակից դարձնել իշխանության բոլոր թեւերին:

## 2.7. Ըստ ձեւի եւ ըստ բովանդակության վերահսկողություն

Սահմանադրական վերահսկողությունը կարող է լինել ձեւական եւ նյութական կամ բովանդակային: Առաջին դեպքում վերահսկման առարկա է դառնում իրավական ակտի ընդունման ձեւի սահմանադրականության կամ օրինականության հարցը: Սահմանադրական վերահսկողության յուրաքանչյուր մարմին պարտավոր է անհրաժեշտ ուշադրություն դարձնել այս հանգամանքին: Հաճախ հակասահմանադրական կարող է լինել նաեւ ակտի ընդունման գործընթացը:

Առանձին երկրներ, ինչպես, օրինակ, Թուրքիան, հատուկ կարեւորում են ձեւական վերահսկողության պարագան: Թուրքիայի Սահմանադրության 148 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանը քննում է օրենքների, օրենքի ուժ ունեցող դեկրետների եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կանոնակարգի սահմանադրականությունը՝ ոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ ձեւի: Սակայն սահմանադրական լրացումներն ու փոփոխությունները պետք է քննվեն եւ ստուգվեն միայն դրանց ընդունման կարգի պահպանման տեսակետից: Սահմանադրական դատարանի կողմից չի կարող քննվել օրենքի ուժ ունեցող այն իրավական ակտերի (ուսկը դեմք) սահմանադրականության հարցը, որոնք ընդունվել են արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում:

Ըստ ձեւի ստուգման դիմում կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդամների առնվազն 1/5-ի կողմից: Չեն կարող ձեւական թերությունների պատճառաբանությամբ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումներ տրվել եւ առարկություններ արվել օրենքի ստորագրումից (ուժի մեջ մտնելուց) 10 օր հետո:

Ըստ ձեւի վերահսկողության բնորոշ օրինակներից է ՀՀ սահմանադրական դատարանի 2000թ. հոկտեմբերի 17-ի ՄԴՈ-263 որոշումը՝ ՀՀ Ազգային ժողովի 2000թ. սեպտեմբերի 26-ի Ն-110-2 որոշման սահմանադրականության առնչությամբ: Հաշվի առնելով, որ տվյալ որոշման ընդունման ժամանակ չի պահպանվել «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի պահանջները, սահմանադրական դատարանը հիշյալ որոշումը՝ ըստ ընդունման կարգի, ճանաչեց հակասահմանադրական:

Բովանդակային վերահսկողությունը վերաբերում է նորմատիվ ակտի եռթյանը: Խնդիրն այն է, թե դրանում բովանդական լուծումները որքանով են համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված նպատակներին, սկզբունքներին, կոնկրետ լուծումների բնույթին:

Սահմանադրական վերահսկողության մարմինների համար չափազանց կարեւոր է, որպեսզի նման հարցերի քննության ժամանակ Սահմանադրությունը դիտվի որպես մի ամբողջություն՝ ներդաշնակ լուծումների մի համակարգ:

Անկախ նրանից, սահմանադրական վերահսկողության մարմինն օժտված է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման իրավասությամբ, թե՝ ոչ, վերահսկողության նման ձեւը անուղղակիորեն ենթադրում է նաև Սահմանադրության մեկնաբանություն:

## **2.8. Դատական սահմանադրական վերահսկողության տարրեր ձեւերի գործադրման առանձնահատկությունները տարրեր երկրներում**

Միջազգային փորձը վկայում է, որ յուրաքանչյուր երկրում առկա են սահմանադրական վերահսկողության տարրեր ձեւերի գործադրման սեփական փորձ ու որոշ առանձնահատկություններ:

Ամենաընդհանուր գծերով տարրերում են, նախ, ամերիկյան եւ եվրոպական համակարգերը, որոնց լրացուցիչ կանորադառնանք:

Մասնագիտացված սահմանադրական վերահսկողության համակարգերում կարելի է առանձնացնել տարրեր ձեւերի գործադրման հետեւյալ քնորոշ առանձնահատկությունները. նախ. նախապատվությունն այս կամ այն ձեւի նկատմանը (ֆրանսիա, Ռումինիա, Ղազախստան եւ այլն՝ գերակայողը նախական վերահսկողությունն է, Գերմանիա, Իսպանիա, Վաստրիա, Պորտուգալիա, Հունգարիա, Ռուսաստան եւ այլն՝ տիրապետողը հետագա վերահսկողությունն է):

Երկրորդ՝ պարտադիր վերահսկողության բացառումն զգակի թվով երկրների կողմից (օրինակ, Գերմանիա, Իտալիա, Ավստրիա, Իսպանիա, Սլովենիա, Հունգարիա եւ այլն):

Երրորդ՝ տարրեր ձեւերի գործադրման կարգերի տարրերությունները: Օրինակ, Գերմանիայում անհատական դիմումներով չեն կարող պահանջվել գործերի բանավոր քննություն եւ անհատական գանգատներ կարող են ներկայացվել վիճարկվող ակտը կամ դատական որոշումն ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում:

Ֆրանսիայում պարտադիր վերահսկողության օբյեկտ են ոչ միայն օրգանական օրենքներն ու պառանձնութիւն երկու պալատների կանոնակարգերը, այլև այն օրենքները, որոնք առնչվում են մարդու իրավունքներին ու ազատություններին: Ինչ վերաբերում է սովորական օրենքներին, ապա մինչեւ դրանց ստորագրումը եւ իրապարակումը նախագահը, Վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, Սենատի նախագահը, 60 պատգանավորներ կամ 60 սենատորներ կարող են վերացական ֆակուլտատիվ վերահսկողության կարգով դիմել սահմանադրական խորհուրդը: Տիպական այն է, որ ֆրանսիայում էապես սահմանափակ է մասնագիտացված մարմնի կողմից նորմատիվ ակտերի հետագա ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության հնարավորությունը:

Ուշագրավ առանձնահատկություններ կան Պորտուգալիայում: Այս երկրում սահմանադրական դատարանն իրավասու է նաև (Սահմանադրության 280 հոդված) կոնկրետ վերահսկողության ընթացակարգով քննելու ընդիանուր իրավասության դատարանների դատական հետեւյալ որոշումները.

ա) իրավական նորմի հակասահմանադրականության վերաբերյալ դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը,

բ) այն որոշումը, որով կիրառվում է իրավական նորմ, որի սահմանադրականությունը դատավարության ընթացքում վիճարկվում է,

գ) երբ դատարանը մերժում է կիրառել այն նորմը, որը բովանդակում է օրենսդրական ակտը, այն հիմնավորելով նորմի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելով եւ այլն:

Սահմանադրական դատարանն իրավասու է քննել նաև դատարանների այն որոշումների վերաբերյալ գանգատները, որոնք վերաբերում են այդ որոշումների հակասահմանադրականությանը կամ հակաօրինականությանը:

Նախագահի դիմումի հիման վրա, մինչեւ օրենքի ստորագրումը կամ միջազգային պայմանագրի վավերացումը, Պորտուգալիայի սահմանադրական դատարանը որոշում է դրանց սահմանադրականության հարցը: Սահմանված է օրենքների որոշակի շրջանակ (մասնավորապես, ընտրությունների, հանրաքվեի, սահմանադրական դատարանի, պաշտպանության, արտակարգ իրավիճակի մասին եւ այլն, որոնք պետք է ընդունվեն ձայների որակյալ մեծամասնությամբ), որոնց նախական վերահսկողության հարցով սահմանադրական դատարան կարող են դիմել վարչապետը

Կամ պատգամավորների 1/5-ը: Իսկ նախարարները կարող են նախնական վերահսկողության հարցով դիմել տարածքային (ռեգիոնալ) օրենսդրության հարցերով:

Դետաքրքիր առանձնահատկություններ կան գործերի քննության դատավարական կարգի առումով: Վերացական վերահսկողության հարցերով որոշումներն ընդունվում են դատարանի ամբողջ կազմով, իսկ կոնկրետ վերահսկողության հարցերով՝ քննությունը կազմակերպում եւ որոշում են ընդունում 6-ական անդամից կազմված պալատները: Նախատեսված է նաեւ, որ նախագահը կարող է որեւէ կոնկրետ գործի քննությունը նույնպես տեղափոխել լիազումար նիստի:

Պորտուգալիայի սահմանադրական արդարադատության էական առանձնահատկություններից մեկն է այն է, որ գործում է, այսպես կոչված, խաջը տիպի համակարգ: Այսինքն՝ կոնկրետ գործերով նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելու իրավասություն ունեն նաեւ ընդհանուր իրավասության բոլոր դատարանները: Միաժամանակ, այդ հարցերով նրանց որոշումները կարող են գանգատարկվել սահմանադրական դատարան: Դիմողը նույնպես կարող է պահանջել սահմանադրականության հարցի որոշումը փոխադրել սահմանադրական դատարան: Բոլոր դեպքերում, կոնկրետ գործով ընդունված որոշումը տարածվում է միայն տվյալ գործի վրա:

Սահմանադրական դատարանը որոշումներ է ընդունում նաեւ ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքներին համապատասխանության հարցերի վերաբերյալ: Սովորաբար այսպիսի վերահսկողությունը կոնկրետ է:

Տարբեր երկրների սահմանադրական արդարադատության փորձի համեմատական վերլուծության ընդհանուր հետեւությունն այն է, որ խիստ բազմազան է վերահսկողության տարբեր ձեւերի կիրառման պրակտիկան: Ընդհանուր վիճահարուց հարցը շարունակում է մնալ նախնական եւ հետագա վերահսկողության ձեւերի հարաբերակցության ու դրանցից որեւէ մեկին նախապատվություն տալու խնդիրը:

## **2.9. Դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձեւերի առավելություններն ու թերությունները**

Դատական սահմանադրական վերահսկողության առանցքային հարցերից է վերահսկման տարբեր ձեւերի ներդաշնակ համակարգի ընտրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է խորությանք պարզել վերահսկման յուրաքանչյուր ձեւի համեմատական առավելություններն ու թերությունները: Ամենից առաջ նշենք նախնական (կամ կանխարգելող) եւ հետագա (կամ վերջնական) ձեւերի առավելություններն ու թերությունները:

Նախնական (կանխարգելող) վերահսկողության առավելություններն են.

1. սահմանադրականության հարցի նախօրոք հստակեցումը, որն ամրապնդում է իրավական համակարգի հուսալիությունը,
2. նպաստում է օրենսդրի առավել արդյունավետ աշխատանքին եւ նրա հեղինակությանը՝ հետագայում հակասահմանադրական չհամարելով արդեն ընդունված ակտը,
3. կանխում է այն բարդությունները, որոնք կարող են առաջանալ, եթե տարիներ շարունակ գործող օրենքը կամ դրա դրույթը ճանաչվի հակասահմանադրական,
4. նախքան միջազգային պայմանագրի վավերացումը եւ պետության կողմից միջազգային պարտավորությունների ստանդանումն ապահովում է այդ պարտավորությունների սահմանադրականության հարցի վերաբերյալ վերջնական եւ հեղինակավոր որոշումը:

Նախնական վերահսկողության թերություններն են.

1. հաճախ նորմերի փաստացի եւ հնարավոր հետեւանքները հնարավոր չեն միարժեք պարզել վաղ փուլում: Առաջին հայացքից սահմանադրական գնահատված օրենքը կամ դրա դրույթը գործադրելու ընթացքում կարող է դրսեւորվել որպես հակասահմանադրական, եթե հարցը վերաբերում է կոնկրետ դեպքերի կամ կոնկրետ շահերի բախնան,
2. մեկ կամ մի քանի շաբաթվա ընթացքում օրենքի (հաճախ հարյուրավոր հոդվածներով) վերաբերյալ որոշում կայացնելը, ընդ որում վերջնական, դժվարին խնդիր է,

3. սոցիալական եւ տնտեսական, ինչպես նաև հասարակական պայմանները, որոնց ի սկզբանե հասցեագրված է եղել օրենքը, կարող են որակական փոփոխություն կրել, որի պայմաններում օրենքի գործողությունը կարող է հաճգեցնել հակասահմանադրական վիճակի: Դրա պատճառով այն նախապես սահմանադրական չի կարող համարվել,

4. օրենսդրական նորմերի նախական վերահսկողությունը կարող է խոչընդոտել օրենսդրի մարմնին արագ արձագանքելու շատ հարաբերությունների անհապաղ կանոնակարգմանը, հատկապես, եթե սահմանադրական դատարան գործի հարուցումը, ինքնարերաբար, արգելակում է օրենքի գործադրումը մինչեւ դատարանի որոշման ընդունումը:

Այս թերությունները հնարավոր է հաղթահարել վերահսկողության երկու ձեւերի ներդաշնակման միջոցով: Միաւ է խնդրի լուծումը փնտրել մեկ կամ մյուս ծայրահեղության մեջ՝ ընտրելով ձեւերից մեկը եւ մերժելով մյուսը: Չափազանց կարեւոր է բացահայտել ու գործադրել յուրաքանչյուր ձեւի դրական ներուժը: Նկատի ունենալով, որ իհմնական ժխտողական վերաբերմունքը դրսեւորվում է նախնական վերահսկողության նկատմամբ, ուստի անհրաժեշտ է ընդգծել, որ նախընտրելի է, երբ.

1. պառլամենտի պալատների կանոնակարգերը ենթակա են նախնական պարտադիր վերահսկման,
2. նախնական վերահսկողությունն իրականացվում է պառլամենտի կողմից օրենքն ընդունելուց հետո,
3. նախնական վերահսկողության դիմող սուբյեկտներ են հանդես գալիս պառլամենտի անդամների 1/5-ը, Հանրապետության նախագահը, կառավարությունը,
4. սահմանադրական դատարանն իրավունք ունենա օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով վերանայելու իր որոշումը:

Կցանկանայինք հատուկ կարեւորել նաև այն հանգամանքը, որ անցումային փուլում, արտակարգ իրավիճակներում առավել կարեւոր է հնարավոր բացասական դրսեւորումների կանխարգելունը, քան թե դրանց հետեւանքների հաղթահարումը: Այս առումով նույնպես չափազանց կարեւորվում է նախնական վերահսկողությունը:

Տարբեր ձեւերի համադրումը նույնպես ծնում է խնդիրներ: Օրինակ, սահմանադրական վերահսկողության մարմինը կարող է նախնական վերահսկողությամբ օրենքը ճանաչել սահմանադրական, սակայն հետազոտում, կոնկրետ վերահսկողության պարագայում, հակասահմանադրականության իրավիճակի առջեւ հայտնվել: Այստեղից հետեւում է, որ խստորեն պետք է հստակեցվեն նախնական եւ հետագա վերահսկողության շրջանակները:

Ինչպես նշվեց, կարեւոր է նախնական վերահսկողության պահի ընտրությունը՝ մինչեւ օրենսդրի կողմից որոշում կայացնելը, թե՝ դրանից հետո: Վերջին դեպքում առավելությունն այն է, որ, նախ՝ օրենսդիրն ինքը կարող է վերացնել թերությունը եւ, երկրորդ՝ սահմանադրական դատարանը չի միջամտի օրինաստեղծ գործումներությանը: Մյուս դեպքում նպատակաւուց են դարձվում խորհրդարանական քննարկումները եւ օրենսդիրն ինարավորություն է ընձեռվում խուսափելու հակասահմանադրական նորմ ընդունելուց: Այսուհանդերձ, այս ձեւը փոխում է դատարանի գործառնական դերը, եւ գերադասելի է առավելագույնս նեղացնել ընդունված ակտի վերահսկողության շրջանակները:

Դեռևս մեծ տարակարծությունների առարկա հանդիսացող հարցերից մեկն էլ այն է, թե ի՞նչ պետք է անել, եթե հակասահմանադրական իրավիճակն առաջանում է ոչ թե այս կամ այն նորմը կիրառելու հետեւանքով, այլ պետական իշխանության որեւէ մարմնի կողմից իր սահմանադրական պարտականությունները չկատարելու (կամ ժամանակին չկատարելու), ինչպես նաև անհրաժեշտ օրենսդրական ակտը նախատեսված ժամկետներում չընդունելու հետեւանքով:

Նման իրավիճակները, որոնք դարձյալ հիմնականում բնորոշ են անցման փուլերին, գրեթե ոչ մի երկրում սահմանադրորեն հստակ կանոնակարգված չեն: Սակայն ձեւավորվել է պրակտիկա, եթե այդ խնդրին լուծում է տալիս սահմանադրական դատարանը: Այս հարցում որոշ փորձ ունեն հատկապես Պորտուգալիայի, Իտալիայի, Հունգարիայի սահմանադրական դատարանները<sup>14</sup>: Օրինակ, Պորտուգալիայի Սահմանադրության 283 հոդվածը նախատեսում է, որ օրենսդրության բացի պատճառով հակասահմանադրական իրավիճակ արձանագրելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մասին տեղյակ է պահում օրենսդիր մարմնին: Նման խնդրի առաջացման դեպքում,

որպես կանոն, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են հանդես գալիս կամ երկրի Նախագահը կամ նարդու իրավունքների պաշտպանը (եթե կա նման ինստիտուտ):

Նորանկախ երկրների համար անհրաժեշտ է, որպեսզի այս հարցը դառնա իշխանության տարբեր թեւերի փոխհամաձայնեցված գործողության առարկա: Մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում նման վիճակից խուսափելու եւ Սահմանադրության անցումային դրույթներով նախատեսված ժամկետներում անհրաժեշտ աշխատանքներն իրականացնելու նպատակով ընտրվեց, այսպես կոչված, կանխարգելիչ ժամապարհը: ՀՀ Նախագահի հրամանագրով, Սահմանադրության 49 հոդվածի առաջին մասի հիման վրա, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների ներկայացուցիչների կազմով, ձեւավորվեց դատադրական բարեփոխումների իրականացնան աշխատանքները համակարգող պետական հանձնաժողով: Առանց նման համագործակցված աշխատանքի այդպիսի խնդիրների լուծումը կարող էր մտնել փակուղի:

Առկա է անցման փուլին բնորոշ մեկ այլ խնդիր եւս: Դա, մի կողմից, օրենսդրական վակուումն է, մյուս կողմից՝ օրենսդրական դաշտի ներքին հակասությունները: Օրինակ, Ռուսաստանում փորձագետների գնահատմամբ դաշնային օրենքների 70 տոկոսը պարունակում է Սահմանադրությանը չհամապատասխանող դրույթները<sup>15</sup>: Գրեթե համանման վիճակ գոյություն ունի նորանկախ երկրների մեծ մասում: Հայաստանի Հանրապետությունում այսօր գործում են երեք բնույթի նորմատիվ ակտեր (տես. հավելված, սխեմա - 10).

- ա) ընդունված խորհրդային ժամանակներում,
- բ) ընդունված մինչեւ 1995թ. Սահմանադրության ընդունումը ,
- գ) կյանք մտած Սահմանադրության ընդունումից հետո:

Որքանո՞վ են այդ բոլորը գերծ ներքին հակասություններից եւ ինչպիսի՞ն է Սահմանադրությանը դրանց համապատասխանությունը, ոչ ոք չի կարող ասել: Բանն այն է, որ իշխանության որեւէ օղակում այս ուղղությամբ ծրագրավորված աշխատանք չի տարվում, իսկ սահմանադրական դատարանը, Սահմանադրության 101 հոդվածի պահանջներից ելնելով, գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այն փաստը, որ նման պարագայում մեկ տարվա ընթացքում սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցով ընդամենը մեկ-երկու դիմում է ստանում, ակնհայտորեն խոսում է պետական մեքենայի անկատարության եւ թույլ իմունիհամակարգի մասին: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի երկրորդ մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության օրենքները եւ մյուս իրավական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում Սահմանադրությանը: Բայց ո՞վ եւ ինչպե՞ս է որոշում՝ կա՞ հակասություն, թե՝ ոչ, եթե այս հարցով սահմանադրական դատարան, նրա ստեղծման օրվանից չուրջ մեկուկես տարվա ընթացքում, ոչ մի դիմում չէր մուտքագրվել, իսկ ընդիհանուր իրավասության դատարանները սահմանադրական դատարանի հետ գործառնական որեւէ առնչություն չունեն: Ավելին, սահմանադրական դատարանի աշխատակազմի փորձագետների կողմից 1999թ. կատարված ուսումնասիրությունը վկայեց, որ ընտրանքային եղանակով ուսումնասիրված 114 օրենքներից 80-ը բռվանդակել են Սահմանադրությանը հակասող նորմեր: Բնական է, որ նման վիճակն անհապաղ շտկման անհրաժեշտություն ունի: Առավել արդյունավետ ուղին, որի մասին վկայում է նաև միջազգային փորձը, սահմանադրական դատարան դիմող սուրբեկությունների ցանկի լուրջ ընդլայնումն է: Տվյալ պարագայում նկատի ունենք նման իրավունքի ընձեռումն ընդհուպ պատգամավորական յուրաքանչյուր խմբակցության, կառավարությանը, ընդհանուր իրավասության դատարաններին եւ այլն:

Ուշադրության է արժանի այն փորձը, երբ սահմանադրական դատարաններին իրավունք է վերապահվում այս հարցերով տարեկան ուղերձով դիմելու պառավանդություն կամ իրավիրելու ընդիհանուր ժողով՝ պետական իշխանության տարբեր նարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նախատեսված է սահմանադրական տրիբունալի մասին Լեհաստանի սահմանադրական օրենքի 13 հոդվածով:

### ԳԼՈՒԽ III .

#### ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թեմայի հիմնական հարցերն են.

- բնութագրել սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգը: Որո՞նք են այդ համակարգի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները,
- ինչու՞ եւ ինչպե՞ս ձեւավորվեց դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգը: Որո՞նք են դրա բնորոշ գծերն ու հիմնական առանձնահատկությունները,
- որո՞նք են դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կազմավորման առանձնահատկությունները,
- ինչպիսի՞ն են սահմանադրական դատարանների փոխհարաբերությունները դատական իշխանության համակարգի այլ մարմինների հետ,
- ինչպիսի՞ գործառնական փոխհարաբերություններ են հաստատվում սահմանադրական դատարանների եւ պետական իշխանության այլ մարմինների միջեւ,
- որո՞նք են սահմանադրական վերահսկողության մարմինների անկախության երաշխիքները:

### **3.1. Սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգ եւ դրա առանձնահատկությունները**

Այսօր աշխարհի 164 երկրներ իրականացնում են նորմատիվ ակտերի դատական սահմանադրական վերահսկողություն: Դրանցից 74-ում գործում է մասնագիտացված կամ եվրոպական ինստիտուցիոնալ դատական համակարգ, 48 - ում գործում է սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը. 30-ում այդ երկուսի հիման վրա ձեւավորված խառը ձեւը: Մի շարք երկրներում գործում է պառական վերահսկողության տարբերակը: Եվրոպական - ֆրանսիական տարատեսակ համակարգ է գործում աշխարհի շուրջ 25 երկրներում:

Սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը, որին բնորոշ է վերահսկողության իրականացումն ընդհանուր իրավասության դատարանների միջոցով, գործում է նաև Արգենտինայում, Մեքսիկայում, Բոլիվիայում, Բրազիլիայում, Կոլումբիայում, Նիկարագուայում, սկանդինավյան երկրներում (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա), անգլիական դոմինիոններում՝ Ավստրալիա, Կանադա, Նոր Զելանդիա, Քարավաֆրիկյան Միություն, ինչպես նաև ճապոնիայում, Ճնոկաստանում, Մալազիայում եւ մի շարք այլ երկրներում:

Այս համակարգն ունի նաև այն առանձնահատկությունը, որ երկրներից մի մասում՝ ԱՄՆ, ճապոնիա, սկանդինավյան երկրներ եւ այլն, դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնում են ընդհանուր իրավասության բոլոր դատարանները: Մյուս խմբում (Գանա, Էստոնիա եւ այլն)՝ միայն ընդհանուր իրավասության դատարանների բարձրագույն ատյանը:

Առանձնահատկություններ կան նաև դաշնային կառուցվածք ունեցող երկրներում: ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Կանադայում, Ճնոկաստանում, Մալազիայում եւ մի շարք այլ երկրներում նաև նահանգներն ունեն նաև համակարգ, չնայած, որ, ի տարբերություն մյուս երկրների, ԱՄՆ-ում գործում է դաշնային եռաստիճան դատական համակարգ:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարանների գերագույն ատյանների անդամների նշանակումն իրականացվում է իշխանության մյուս մարմինների միջոցով: Սակայն դրա ձեւերը տարբեր են: Օրինակ, Շվեյցարիայի Դաշնային դատարանի անդամներին ընտրում է խորհրդարանը, ԱՄՆ-ում Գերագույն դատարանի անդամներին նշանակում է Նախագահը, որից հետո ներկայացնում Սենատի հաստատմանը (ԱՄՆ Գերագույն դատարանը կազմավորվել է 1789թ. եւ ներկայում կազմված է 9 անդամից, որոնք նշանակվում են անփոփոխական սկզբունքով եւ պաշտոնավարում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանց վարքն անբասիր է): Իսկ, օրինակ, Գանայում՝ Նախագահի ներկայացմանը հաստատում է պառականությունը:

Ֆիլիպիններում նշանակում է Նախագահ՝ դատավորների եւ փաստաբանների խորհրդի կողմից յուրաքանչյուր տեղի հանար ներկայացված երեքական թեկնածուներից:

Շվեդիայում սահմանադրական արդարադատությունն իրականացնում են գերագույն դատարանը եւ գերագույն վարչական դատարանը: Դատավորներին նշանակում է կառավարությունը (ընդհանուր

թիվն է 18 մարդ, որոնց առնվազն 2/3-ը պետք է լինեն իրավաբաններ): Նշանակվում են անփոփոխ սկզբունքի հիման վրա եւ պաշտոնավարում մինչեւ 65 տարին լրանալը:

Դետաքրքիր առանձնահատկություն ունի ճապոնիայի Գերագույն դատարանի ձեւավորումը: Այն կազմված է 15 անդամից, որոնք ճապոնիայի Սահմանադրության համաձայն (հոդվ.79) ցմահ նշանակվում են Կարինետի կողմից: Դատարանի նախագահին նշանակում է Կայսրը, սակայն պառլամենտի հաջորդ ընտրություններում եւ հետագայում, 10 տարի անց, առաջիկա ընտրություններում նշանակված դատավորները պետք է ստանան ժողովողի վստահությունը (նման մեխանիզմ կիրառվում է նաև ԱՄՆ նահանգային դատավորների նշանակման պարագայում՝ թվով 42 նահանգում):

Դիշատակման արժանի է նաև սահմանադրական վերահսկողության համակարգը Դանիայում: Դանիական թագավորությունում թագավորի կողմից 1661 թվականի դեկտեմբերի ստեղծվել է գերագույն դատարան: Սակայն 1849 թվականի Սահմանադրության հիման վրա, դառնալով սահմանադրական միավետություն, երկրում միաժամանակ դատարանը դարձավ անկախ մարմին ու ստանձնեց նաև սահմանադրական վերահսկողության առաքելությունը: Դանիայում ներկայում գործում են օկորուգային, բարձրագույն եւ գերագույն դատարաններ (Երաստիճան համակարգ է): Դատական սահմանադրական վերահսկողության հարցերը հիմնականում լսվում են գերագույն դատարանում: Սակայն այս երկրում արդարադատության նախարարն իրավատու է վճռել այս կամ այն հարցը տարբեր աստիճանի դատարաններում լսելու խնդիրը: Ավելացնենք նաև, որ գերագույն դատարանը կազմված է նախագահից ու 14 անդամից: Բոլորին նշանակում է թագուհին՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ, անժամկետ:

Նախորդ հարյուրամյակում՝ ամբողջ աշխարհում եւ ներկայում նշված երկրներում գործող դատական սահմանադրական վերահսկողության ամերիկյան համակարգը բնութագրվում է հետեւյալ հիմնական հատկանիշներով.

- այն ունի համընդգրկուն բնույթ, ներառում է ոչ միայն օրենքները, այլև՝ ցանկացած նորմատիվ ակտ,
- վերահսկողությունն իրականացվում է ապակենտրոնացված, ցանկացած դատարանի կողմից, ոչ կանոնավոր պարերականությամբ, ցանկացած գործ քննելիս, կոնկրետ գործի քննության ընթացքում, եթե օրենքը կամ նորմատիվ ակտն առնչվում է տվյալ գործը հարուցողի կոնկրետ շահերին,
- ունի հարաբերական բնույթ, քանի որ դատարանի վճռը պարտադիր է միայն դատական կողմերի համար եւ չի տարածվում իրավունքի կիրառման ամբողջ դաշտի վրա (տես. հավելված, սխեմա - 5):

### **3.2 Սահմանադրական արդարադատության եվրոպական համակարգը եւ դրա առանձնահատկությունները**

Ինչու<sup>18</sup> 20-րդ դարի Եվրոպան չընդունեց դատական սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը: Այս հարցին շատերն են փորձել պատասխանել: Մի դեպքում պատասխանը փնտրվել է «օրենք» եւ «Սահմանադրություն» հասկացությունների տարաբնույթ ընկալման հարթությունում: Մեկ այլ դեպքում շեշտը դրվել է դատարանակազմության եւ դատավորների գործելակերպի առանձնահատկությունների վրա (հատկապես կարեւորելով դատարանի անկախության աստիճանի եւ դատավորների կողմից օրենքի սահմանադրականության հարցով վճիռ կայացնելու ունակության պարագաները): Երրորդ դեպքում առաջին պլան է մոլոր տվյալ երկրում հասարակության առջեւ ծառացած խնդիրների բնույթն ու դրանց լուծնան բնորոշ առանձնահատկությունները:

Այսպես թե այնպես, մեկ դարից ավելի ամբողջ աշխարհում դատական սահմանադրական վերահսկողության լիազորություններն իրականացրեցին ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն 20-րդ դարի սկզբների հասարակական կյանքի վայրիկերումները՝ իշխանությունների տարանջատման պայմաններում, մասնագետների շրջանում առաջ բերեցին մի շարք մտահոգություններ.

1. հնարավոր էր դառնում օրենքի միջոցով իշխանության չափազանց մեծ կենտրոնացում, ընդհուածությունը<sup>19</sup>,

2. հասարակական կյանքի եւ դրան համապատասխան օրենսդրական համակարգի արագ փոփոխման պայմաններում միայն կոնկրետ գործերով իրականացվող վերահսկողությունն ակնհայտորեն անբավարար էր սահմանադրական արդյունավետ վերահսկողության համար,

3. իշխանությունների տարանջատման պայմաններում հասարակական անկայունության գլխավոր դետոնատորը դարձել էր իշխանության տարբեր ճյուղերի պայքարը՝ միմյանցից լիազորություններ կորզելու համար:

Բացի վերոհիշյալներից, մեր կարծիքով, այլ էր նաեւ մոտեցման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ մարդու կոնկրետ շահերից բխող եւ միայն նրան առնչվող խնդրի լուծումը, այլ օրենսդրական դաշտի սահմանադրականության ապահովման միջոցով հասարակական կայունության ու առաջընթացի խթանման խնդիրը: Առաջին պլան մղվեց կայուն պետություն, դիմամիկ առաջընթաց կարգախոսը: Ի դեպ, երրորդ հազարամյակ մուտքը նշանավորվեց մարդու իրավունքների եւ հասարակական անվտանգության հարաբերակցության նոր ուղենիշերի որոնելու նշանարանով:

Եվրոպական համակարգում ըստ առաջնայնության առանձնացվում է երեք գերխնդիր:

ա) նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովում եւ դրա միջոցով իշխանության տարանջատված թեւերի սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռության պահպանում,

բ) լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծման խնդրի հստակ կանոնակարգում,

գ) մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առավել ամբողջական եւ հուսալի համակարգի ստեղծում:

Այլ է հարցը, թե ինչպես լուծվեցին այս խնդիրները դարասկզբին: Մեր կարծիքով, իրականությունն այն է, որ նոր, հատուկ մասնագիտացված ու կենտրոնացված հանակարգով դատական սահմանադրական վերահսկողության իրականացումն ապահովում է աստիճանաբար, փուլ առ փուլ այդ խնդիրների լուծումը, եւ այդ միտումն է ընկած այսօր հանակարգի գարգացման ներքին տրամաբանության հիմքում:

Այս համակարգերի բնորոշ առանձնահատկությունը միայն այն չէ, որ վերահսկողությունն իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի միջոցով: Առանձնահատուկ կարեւորություն է ստանում այն պարագան, որ եապես փոխվում են նաեւ վերահսկման ձեւն ու բնույթը:

Մասնավորապես միայն Եվրոպական համակարգին է բնորոշ, ինչպես նշել ենք, նախնական, վերացական (արստրակտ), ֆակուլտատիվ եւ պարտադիր վերահսկողությունը: Նման մոտեցման շնորհիվ է, որ դատական սահմանադրական վերահսկողությունը ձեռք է բերում ամբողջական, համալիր բնույթ եւ կարող է իրականացվել հետեւողականորեն ու արդյունավետ:

Եվրոպական մոդելի հիմնադիր գաղափարախոսը Յանս Քելզենն է (Քելզենը 1920թ. դարձավ նաեւ Ավստրիայի առաջին սահմանադրական դատարանի անդամ):

Այս համակարգը, ունենալով այն հիմնական ընդհանրությունը, որ վերահսկողությունը կենտրոնացված է եւ իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի միջոցով, միաժամանակ ունի թե կառուցվածքային - կազմակերպական եւ թե գործառնական գգալի առանձնահատկություններ (տես. հավելված, սխեմա - 5): Յարկ է նշել, որ այդ առանձնահատկություններն արտացոլվում են այն բանում, թե ինչպես են ձեւավորվում դատական սահմանադրական վերահսկողության մարմնները, ինչպիսի՞ կազմ ու կառուցվածք ունեն, ո՞վ եւ ինչպես կարող է դիմել այդ մարմնին, ինչպիսի՞ն է վերահսկման բնույթը (վերացական, թե կոնկրետ, նախնական, թե հետագա, պարտադիր թե ֆակուլտատիվ), որո՞նք են վերահսկման օբյեկտներն ու ովքե՞՞ն են սուբյեկտները, ի՞նչ բնույթ ունեն դատական սահմանադրական վերահսկողության մարմնի կողմից ընդունված որոշումները եւ այլն:

Իշխանության ո՞ր թեւին է պատկանում մասնագիտացված սահմանադրական վերահսկողությունը: Այս հարցում նույնպես դեռ շարունակվում է բանավեճը: Մի շարք երկրների սահմանադրություններով այն ներառված է դատական իշխանության հանակարգում (Գերմանիա, Թուրքիա, Ռուսաստան, Վրաստան, Հայաստան), մյուսներում ներկայացվում է որպես հատուկ մարմին (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Լեհաստան եւ այլն): Բանավեճն ընթանում է ընդհուպ այն ուղղությամբ, որ դատական սահմանադրական վերահսկողության մարմնից կողմից ընդունված որոշումները եւ այլն:

Դատական սահմանադրական վերահսկողության առարկան ոչ թե օրենքի կիրառումն է, այլ օրենքն ինքը, դրա նորմերի համապատասխանությունը երկրի դիմնական օրենքին: Միաժամանակ,

սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը անառարկելիորեն իրավունքի աղբյուր է դառնում: Ավելին, Սահմանադրության ու օրենքների նորմատիվ մեկնաբանությունը եվրոպական համակարգի սահմանադրական դատարաններին ընդունակ մոտեցնում են նորմաստեղծ գործառույթի իրականացմանը: Այս առունով սահմանադրական դատարանի գործառնական բնույթը կարծեք թե առնչվում է օրինաստեղծ մարմնի գործունեության ոլորտին: Սակայն, ըստ Էռլյան, անգլոսաքոնական ողջ իրավական համակարգում դատարանի որոշումն իրավունքի աղբյուր է եւ երբեք դատարանի իրավական դիրքորոշումն օրինաստեղծ գործառույթ չի որակվում:

Ոմանք սահմանադրական վերահսկողությունն առանձնացնում են որպես իշխանության առանձին թեւ՝ վերահսկող իշխանություն, որն ակնհայտ չափազանցություն է:<sup>17</sup>

Ի դեպ, որոշ երկրներում սահմանադրական դատարանի տեղի հստակեցման հարցը դարձել է անգամ դատական նիստի քննության առարկա: Օրինակ, Չեխիայում 1995թ. գարնանը սահմանադրական դատարանը, հատուկ քննության առնելով այս հարցը, փաստեց, որ սահմանադրական դատարանը չի համարվում դատական համակարգի մարմին եւ այդ համակարգից դուրս է:

Այս ենթատերստում հարցի քննարկումն առաջին հերթին պահանջում է դատական սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգում հստակեցնել սահմանադրական դատարանի եւ ընդհանուր իրավասության դատական համակարգի գործառնական փոխհարաբերությունները: Այս հարցում տիպական կարող են հանդիսանալ, ասենք, Գերմանիայի, Խոստիայի և Պորտուգալիայի օրինակները: Խնդիրն այն է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը չի համարվում դատական իշխանության մարմին, միեւնույն է, նրա անկախ գործունեությունն անմիջականորեն առնչվում է մյուս դատարանների հետ՝ հատկապես կոնկրետ վերահսկողության եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով (տես. հավելված, սխեմա - 8):

Մեր կարծիքով, նման բանավեճերը հաճախ արհեստական ու անբովանդակ են: Գլխավոր հարցն այն է, թե երկրի ներսում ստեղծվե՞լ է, արդյոք, դատական սահմանադրական վերահսկողության այնպիսի համակարգ, որն ի գորու է առնվազն լուծում տալ երեք խնդիր. պահիվել Սահմանադրության գերակայությունը եւ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը, լուծել լիազորությունների հարցում իշխանության մարմինների վեճերը, պաշտպան կանգնել մարդու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին: Մնացած բոլոր հարցերն ածանցյալ են: Գլխավորը նշված երեք խումբ խնդիրների լուծման ինստիտուցիոնալ հստակ համակարգի նշակումն է: Թե որ մարմինները կլինեն դրա կրողը եւ ինչ կարգով այն կիրականացնեն, նույնապես երկրորդ պլանի (բայց ոչ երկրորդական) խնդիր է: Այսուհանդերձ, միջազգային փորձը վկայում է հենց այն մասին, որ այդ խնդիրներն առավել արդյունավետությամբ լուծում են սահմանադրական դատարանները:

Մասնագիտացված սահմանադրական վերահսկողության մարմինները տարբեր երկրներում միմյանցից զգալի չափով տարբերվում են թե առաջադրված խնդիրների լուծման նկատմամբ ունեցած մոտեցումներով եւ թե կազմավորման առանձնահատկություններով ու դատական սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերի ու եղանակների կիրառմամբ:

### **3.3. Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կազմավորման առանձնահատկությունները**

Մասնագիտացված կամ կենտրոնացված դատական սահմանադրական վերահսկողության համակարգը ենթադրում է այն իրականացնող յուրահատուկ կազմակերպական կառուցվածքը: Գոյություն ունեցող փորձը վկայում է, որ ի հիմնականում կան հետեւյալ ինստիտուտները. սահմանադրական դատարաններ (Եվրոպական եւ նորանկախ երկրների մեջ մասում), սահմանադրական խորհուրդներ (Ֆրանսիա, Մարոկո, Մոզամբիկ, Ղազախստան), հաշտարար դատարան (Բելգիա), Գերագույն դատարանների սահմանադրական պալատներ (Հունաստան, Եստոնիա, Բուրկինա-Ֆասո, Գվինեա, Կոստա-Ռիկա), սահմանադրական հետաքննության խորհուրդ (Եթովպիա):

Յետաքրքիր առանձնահատկություն գոյություն ունի Պորտուգալիայում, որտեղ կա սահմանադրական դատարան, բայց դատական սահմանադրական վերահսկողության գործառույթ ունեն նաև ընդհանուր իրավասության դատարանները՝ ինչպես ԱՄՆ - ուն: Սահմանադրական դատարանը դատական սահմանադրական վերահսկողության գործերով դիտվում է դատական վերին ատյան: Սա, փաստորեն, երկու մոդելների հետաքրքիր խառնուրդ է:

Կան նաև երկրներ, որտեղ սահմանադրական վերահսկողության ինստիտուտները խիստ առանձնահատուկ են եւ բնորոշ են իիմնականում այդ երկրին: Դրա տիպական օրինակ է

սահմանադրական վերահսկողության համակարգը մեր հարեւան իրանի խլամական Հանրապետությունում: Այստեղ Սահմանադրության 91 հոդվածի համաձայն խլամական խորհրդի մեջլիսում ընդունված որոշումների համապատասխանությունը խլամի նորմերին եւ Սահմանադրության ապահովելու նպատակով ստեղծվում է Սահմանադրության պահապան խորհրդը՝ հետեւյալ կառուցվածքով:

1. Արդար եւ ժամանակի պահանջներին, ինչպես նաև օրվա խորհրդներին լավատեղյակ 6 կրոնագետ (ֆաղիի), որոնց ընտրությունը կատարվում է երկրի Առաջնորդի կողմից:

2. Իրավագիտության տարբեր բնագավառների գծով 6 մահմեդական իրավաբան, որոնք Մեջլիս են ներկայացվում երկրի դատական իշխանության նախագահի կողմից եւ հաստատվում Մեջլիսում:

Սահմանադրության 92 հոդվածի համաձայն Պահապան խորհրդի անդամներն ընտրվում են 6 տարի ժամկետով, սակայն առաջին շրջանում, երեք տարի անց, յուրաքանչյուր խմբի անդամների կեսը վիճակահանությամբ փոխվում է:

Այս երկրում դատական սահմանադրական վերահսկողությունը նախնական է եւ պարտադիր: Խլամական խորհրդի մեջլիսի ընդունած բոլոր որոշումները պետք է հանձնվեն Պահապան խորհրդի քննարկմանը: Պահապան խորհրդուղ պարտավոր է փաստաթուղթն ստանալու պահից առավելագույնը 10 օրվա ընթացքում քննության արնել այն եւ որոշել դրա համապատասխանությունը խլամի նորմերին եւ Սահմանադրությանը: Դրանում հակասություն նկատելու դեպքում Պահապան խորհրդուղ այն վերադարձնում է Մեջլիսի Վերանայմանը: Յակասություն չլինելու դեպքում որոշումն օրենքի ուժ է ստանում: Եթե Պահապան խորհրդը գտնի, որ 10 օր ժամկետու բավարար չէ վերջնական կարծիք հայտնելու համար, կարող է անհրաժեշտ պատճառարարանություններից հետո եւս 10 օրով երկարացնել նշված ժամկետը:

Խլամական խորհրդի մեջլիսի որոշումների՝ խլամի նորմերի հետ հակասություններ հայտնաբերելիս վճիռը կայացվում է Պահապան խորհրդի կրոնագետների մեծամասնության կողմից, իսկ Սահմանադրության հետ հակասության մասին վճիռը կայացվում է Պահապան խորհրդի բոլոր անդամների մեծամասնության կողմից:

Սահմանադրության մեկնաբանումը կատարվում է Պահապան խորհրդի կողմից՝ նրա անդամների 3/4 ձայնով:

Սահմանադրության 98 հոդվածի համաձայն Պահապան խորհրդուղ իր վերահսկողությունն սահմանում Բանհմացների խորհրդի ընտրությունների, նախագահական ընտրությունների, Խլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընտրությունների եւ հանրաքվեների անցկացման վեա:

Սահմանադրական դատարանների անկախ ու արդյունավետ գործունեությունն իրականացնելու համար բացառիկ կարեւոր նշանակություն ունի դրանց կազմավորման կարգը: Այստեղ հարկ է առանձնացնել քննության արժանի հետեւյալ հիմնական հարցերը:

ա) ինչպիսի՞ն է դատարանի անդամների ընտրության կարգը,

բ) քանի՞ տարով են ընտրվում դատարանի անդամները,

գ) ի՞նչ պահանջներ են ներկայացվում դատարանի անդամներին:

Դատական սահմանադրական վերահսկողության մարմնի անդամները հիմնականում նշանակվում (կամ ընտրվում) են իշխանության տարբեր բեւերի կողմից: Միջազգային պրակտիկայում, սակայն, հանդիպում են տարատեսակ բազմաթիվ մոտեցումներ: Օրինակ, Հունգարիայում, Լեհաստանում, Պերուում, Սլովակիայում, Գերմանիայում, Լատվիայում, Բելառուսում սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում են պառլամենտի կողմից: Ավստրիայում, Ալբանիայում, Ջայաստանում, Ֆրանսիայում, Լիտվայում, Բենինում, Ղրղզստանում, Ռումինիայում, Ռուսաստանում նշանակում են նախագահը եւ պառլամենտը: Բուլղարիայում, Գարոնում, Իտալիայում, Իսպանիայում, Լիտվայում, Վրաստանում, Մոնղոլիայում, Թուրքիայում, Կորեայում նշանակում են նախագահը, պառլամենտը եւ դատական իշխանության ինստիտուտները (այսինքն՝ ապահովվում է երեք իշխանությունների մասնակցությունը):

Ի տարբերություն ընդհանուր իրավասության դատարանների, սահմանադրական դատարանի անդամ կարող են լինել ոչ միայն փորձառու դատավորներ, այլև իրավունքի գծով դասախոսներ, պետական ծառայողներ, քաղաքական գործիչներ, այդ թվում ոչ իրավաբաններ: Կան երկրներ, որտեղ ոչ իրավաբանների թիվն օրենքով սահմանվում է (Գարոնում եւ Մալիում 9-ից 2-ը, Շվեդիայում՝ դատավորների ընդհանուր թվի 1/3-ը): Բելգիայում սահմանադրական վերահսկողության մարմնի (կոչվում է Հաշտարար դատարան) անդամ կարող են դառնալ ոչ միայն դատավորներն ու իրավունքի պրոֆեսորները, այլև այն անդինք, ովքեր եղել են պատգամավոր: Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի անդամների համար մասնագիտական որեւէ սահմանափակում չի դրվում: Իսկ, օրինակ, Ուգրեկստանի սահմանադրական դատարանի մասին օրենքի 12 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանի անդամ կարող է ընտրվել Ուգրեկստանի քաղաքացին՝ իրավունքի եւ քաղաքականության ոլորտի մասնագետներից, որն ունի բարձր քարոյական հատկանիշներ եւ անհրաժեշտ որակավորում: Յետաքրքիր առանձնահատկություն գոյություն ունի Թուրքիայում, որտեղ կարող են ընտրվել ինչպես իրավաբաններ, այնպես էլ որոշակի վարչական աշխատանքի փորձ ունեցողներ:

Կան նաև ընդհանուր իրավասության դատարանների միջոցով սահմանադրական վերահսկողություն իրականացնող երկրներ, որտեղ այս լիազորությունը կարող են իրականացնել բոլոր նրանք, ովքեր համապատասխանում են պատգամավորին առաջդրով պահանջներին (օրինակ, Շվեյցարիան: Այս երկրում Դաշնային դատարանի անդամ կարող են դառնալ Շվեյցարիայի այն քաղաքացիները, ովքեր իրավունքը ունեն ընտրվելու Ազգային խորհրդում):

Որոշ տեսաբանների կարծիքով, սահմանադրական վերահսկողության հատուկ մարմնի կազմում այլ մասնագետների (հատկապես քաղաքագիտության, փիլիսոփայության եւ հասարակագիտական այլ ոլորտների), ինչպես նաև պետական կառավարման ոլորտում աշխատած քարձրաստիճան ու փորձառու մարդկանց ընդգրկումը կարող է ունենալ մեծ առավելություն եւ օգտակարություն:<sup>18</sup> Նման անհրաժեշտությունը յուրով է մեկնաբանել ԱՄ Գերագույն դատարանի անդամ Ջյուգ Բլեքը (նշանակվել է 1937թ.՝ Ֆրանկլին Ռուզվելտի կողմից, պաշտոնավարել է 34 տարի, մահացել է 1971թ.): Նա գտնում էր, որ ոչ իրավաբանի նշանակումը Գերագույն դատարանի անդամ նրան հաղորդում է անկախության ավելի մեծ լիքը, քանի որ հաղթահարվում է նաև հիերարխիկ կարիերայի տրամաբանությամբ թելադրված կախվածության հոգեբանությունը:

Կարեւոր է նաև այն փաստարկը, որ տվյալ պարագայում գործ ունենք ոչ այնքան օրենքի կամ այլ իրավական ակտի կիրառման տեխնոլոգիայի, որքան հասարակական հարաբերությունների կանոնակարգման ու կառավարման փիլիսոփայության հետ, եւ օրինաստեղծության հանգամանքն ու դրան տիրապետելու կարողությունը դառնում է առաջնահերթ խնդիր:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ը նախատեսում է, որ սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ, պետական մարմիններում կամ գիտական հաստատություններում իրավունքի ասպարեզի աշխատանքի փորձ, քարոյական բարձր հատկանիշներ եւ տիրապետում է հայերենին: Սահմանադրական դատարանի անդամը չի կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել Սահմանադրության 100 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված նորմատիվի իրավական ակտերի մշակման հեղինակ կամ համահեղինակ:

Առանձին վերլուծության խնդիր է սահմանադրական դատարանների անդամների նշանակման ժամկետի եւ քարմացման կարգի խնդիրը: Գործնականում կան տարաբեւեր լուծումներ: Նախ. կան երկրներ, որոնք գտնում են, որ սահմանադրական վերահսկողության անկախությունն ապահովելու նպատակով այն իրականացնող մարմնի անդամները պետք է ընտրվեն անփոփոխելիության սկզբունքով (ԱՄ, Ավստրիա, Բելգիա, Հայաստան եւ այլն):

Երկրների մյուս խումբը գտնում է, որ նշանակման կամ ընտրության ժամկետը պետք է լինի սահմանափակ (սովորաբար այն տատանվում է 5-15 տարվա միջակայքում): Այս երկրների թվին կարելի է դասել Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Թուրքիան եւ այլն: Երկրներից մի մասուն նախատեսվում է նաև դատարանի աստիճանական թարմացման մեխանիզմ (սովորաբար երեք տարին մեկ):

Տարբերություններից զատ, գրեթե բոլոր երկրներում կան նաեւ սահմանադրական դատարանի ձեւավորման նույնական լուծումներ: Ամենից առաջ դա վերաբերում է դատարանի անդամներին մերկայացվող որոշ պահանջմերի: Նախ նրանք չեն կարող այլ վճարովի աշխատանքով գրաղվել (միշտ երկրներում բացառություն է կազմում գիտանանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքը): Երկրորդ՝ դատական սահմանադրական վերահսկողության մարմնի անդամը չի կարող լինել քաղաքական կուսակցության անդամ կամ գրաղվել քաղաքական գործունեությամբ (գգալի թիվ են կազմում նաեւ այն երկրները, որոնք օրենքով արգելում են սահմանադրական դատարանի անդամներին լինել արհմիության կամ որեւէ այլ հասարակական կազմակերպության անդամ): Երրորդ՝ նույնիսկ եթե նշանակումը չի կատարվում անփոփոխելիության սկզբունքով, միեւնույն է, կիրառվում է որոշակի տարիքային ցենզ (65-70 տարեկանից բարձր եւ 35-40 տարեկանից ցածր տարիք ունեցող անձը, որպես կանոն, դատարանի անդամ չի նշանակվում կամ ընտրվում): Բացի դրանից, գրեթե բոլոր երկրներում նրանց վրա տարածվում է անձեռնմխելիության սկզբունքը, եւ իրենց պարտականություններն ստանձնելուց առաջ նրանք երդում են տալիս: Ի դեպ, երկրներից մեծ մասում միայն դատարանն է իրավասու պաշտոնից ազատելու իր անդամին՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում (Ալբանիա, Բուլղարիա, Գերմանիա, Լատվիա, Պորտուգալիա, Ռումինիա, Շվեյցարիա, Թուրքիա եւ այլն): Երկրների մեկ այլ խնդրում դատարանի եղբակացության հիման վրա վերջնական որոշումը կայացնում է նրանց նշանակած մարմններ (Սլովակիա, Հայաստան, ճախիկի Հարավսլավիայի Սակեդոնիայի Հանրապետություն եւ այլն): Ֆինլանդիայում, ճապոնիայում, ԱՄՆ-ում, Լիտվայում դատավորին պաշտոնից ազատելու համար գործում է պաշտոնանկության հատուկ կարգ:

Մի շարք երկրներ սահմանադրական վերահսկողության ինստիտուտները ձեւավորելիս հասուլ նշանակություն են տալիս լեզվի հարցին: Մասնավորապես Շվեյցարիան, Բելգիան եւ Կանադան, որոնք մեկից ավելի պաշտոնական լեզուներ ունեն, գերազույն դատարանի անդամներ ընտրելիս սահմանում են լեզվական տարբեր խմբերին պատկանողների որոշ համանասնություն: Օրինակ, Կանադայում երեք դատավոր գերազույն դատարանում պետք է լինեն քվերեկից եւ ունենան քաղաքացիական իրավունքի փորձառություն, իսկ վեցը՝ ընդհանուր իրավունքի գործնական աշխատանքի փորձ: Բելգիայի հաշտարար դատարանում (որպիսին անվանվում է սահմանադրական դատարանը) նշանակվում են երկու համանախազահողներ, որոնցից մեկը պետք է լինի ֆրանսախոս, մյուսը՝ ներկայացնի ֆլոնանդերենը:

Հետաքրքիր տարբերություններ կան նաեւ դատական սահմանադրական վերահսկողության մարմնի նախագահի ընտրության հարցում:

Ընտրությունը (նշանակումը) կատարում է.

ա) դատարանն ինքը (Բուլղարիա, Ռումինիա, Բելին, Շունգարիա, Իտալիա, Մոնղոլիա, Կոնգո, Պորտուգալիա, Ռուսաստան, Մոլդովա, Վրաստան եւ այլն),

բ) պետության գլուխը՝ առանց որեւէ համաձայնեցման (Ալժիր, Եգիպտոս, Մարոկկո, Մավրիտանիա, Ղազախստան, Ֆրանսիա եւ այլն).

գ) ընտրում (նշանակում) է պառլամենտը (Գերմանիա, Հայաստան, Լիտվա, Ղրղզստան),

դ) նշանակում է նախագահը՝ կառավարության խորհրդով (Ավստրիա),

ե) նախագահը՝ պառլամենտի համաձայնությամբ (Կորեայի Հանրապետություն):

Մի շարք երկրներում որոշում ընդունելիս՝ հավասար ձայների դեպքում սահմանադրական դատարանի նախագահի ձայնը վճռական է (Իտալիա, Խապանիա եւ այլն):

Սահմանադրական վերահսկողության արդյունավետ իրականացման, երկրի վարչատարածքային կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելու համար լուրջ ուշադրություն է դարձվում նաեւ դատական սահմանադրական վերահսկողության մարմնների կազմակերպական կառուցվածքի հարցերին: Սահմանադրական դատարանները սովորաբար լինում են միապալատ կամ երկպալատ:

Երկպալատ դատարանները հիմնականում բնորոշ են դաշնային կառուցվածքը ունեցող երկրներին: Երկպալատ դատարանների պարագայում օրենքը կարգավորում է պալատների ձեւավորման, դրանց նիստերում հարցերի քննարկման եւ լուծման կարգը, սահմանում է հարցերի այն շրջանակը, որոնց լուծման բացառիկ իրավունքը վերապահված է դատարանի ամբողջ կազմին՝ լիազումար նիստին:

Սակայն այս բաժանումն ունի նաեւ գործառնական բնույթ եւ հնարավորություն է տալիս առանձին հարցեր քննության առնել եւ դրանց լուծումներ տալ դատարանի անդամների մի նասի կազմով: Այս խնդիրը հատկապես առաջանում է այն դեպքում, երբ դատական սահմանադրական վերահսկողության մարմնին վերապահված է ընդհանուր իրավասության դատարաններին բնորոշ ինչ-ինչ իրավասություն եւ դրված է ժամանակային սահմանափակման մեջ: Մեր հանրապետությունում այս խնդիրը թերի է լուծված եւ կարող է առաջ բերել լուրջ փակուղային վիճակ: Բանն այն է, որ մի կողմից սահմանադրական դատարանը պարտավոր է 30 - օրյա ժամկետում որոշում կայացնել (ՀՀ Սահմանադրություն, հոդված 102), մյուս կողմից ամբողջ կազմով լուծել պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը (հոդված 100, կետ 3), որոնց միաժամանակյա թիվը կարող է մի քանի հարյուրի հասնել: Նման հնարավոր փակուղային վիճակները, որին կրկին կանդրադառնանք, սովորաբար լուծվում են կամ ժամանակային սահմանափակումները մեղմելու, կամ, նույնիսկ միապալատ դատարանների դեպքում, դատավորների որոշ թվով (սովորաբար 3 կամ 5 դատավորի կազմով) գործեր քննելու եւ որոշում կայացնելու իրավունք վերապահելով:

ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը սահմանված է Սահմանադրության 99 հոդվածով, որը նախատեսում է, որ սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից, որից հինգին նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության Նախագահը: Իսկ Սահմանադրության 83 հոդվածում ամրագրված է, որ օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ, նշանակում է սահմանադրական դատարանի անդամներ եւ սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահ: Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո երեսնօրյա ժամկետում Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում Հանրապետության Նախագահը նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:

Սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգում դատական մարմինների կազմավորման առանձնահատկություններն իրենց հիմքում ունեն նաեւ այն ընդհանուր նպատակը, որ յուրաքանչյուր երկրի հասարակական հարաբերությունների բնույթից ու օրգագոման խնդիրներից ելնելով, նպատակ է դրվում ստեղծել անկախ, քաղաքական ներագրեցություններից գերծ, բարձր բարոյական սկզբունքներով առաջնորդվող մի մարմին, որն ի գորու լինի ապահովել երկրի Հիմնական օրենքի ու իրավունքի գերակայությունը, նպաստել հասարակության կայուն ու դիմանիկ գարգամանը:

### **3.4. Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները դատական համակարգի այլ մարմինների հետ**

Միջազգային պրակտիկան վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հիմնականում երեք կարգի առանձնահատուկ մոտեցում: Առաջին, նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման խնդիրը բացառապես սահմանադրական դատարանի մենաշնորհն է (տիպական է Գերմանիային, Ավստրիային, Իտալիային, հսպանիային եւ սահմանադրական արդարադատության եվրոպական համակարգի բազմաթիվ այլ երկրների): Մյուս դատարաններն այս հարցով հանդես են գալիս որպես դիմող սուբյեկտներ:

Երկրորդ՝ բոլոր դատարաններն իրականացնում են դատական սահմանադրական վերահսկողություն, սակայն բողոքարկման կամ գանգատարկման դեպքում վերջին խոսքը պատկանում է սահմանադրական դատարանին (դասական օրինակ կարող է ծառայել Պորտուգալիան):

Երրորդ՝ երբ սահմանադրական վերահսկողության մարմինը՝ ի դեմս սահմանադրական դատարանի, գործառնական որեւէ փոխհարաբերություն չունի դատական համակարգի մյուս ինստիտուտների հետ: Այսպիսի եզակի ու ոչնչով իրեն չարդարացնող օրինակ է ծառայում ներկայումս Հայաստանը (տես. հավելված, սխեմա - 8):

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ շատ երկրներում սահմանադրական դատարանի կազմավորմանն անմիջական մասնակցություն ունեն դատական համակարգի մյուս ինստիտուտները (Խտալիա, հսպանիա, Թուրքիա, Վրաստան եւ այլն):

Ավստրիայում կա այն առանձնահատկությունը, որ սահմանադրական դատարանը, ըստ Սահմանադրության 140 հոդվածի, օրենքների սահմանադրականության հարցը քննության է առնուն վարչական դատարանի կամ Գերագույն դատարանի ներկայացմանք, ինչպես նաեւ այն դատարանի ներկայացմանք, որն իրավասու է եղել գործը քննել որպես երկրորդ ատյան: Իսկ այն դեպքում, երբ տվյալ օրենքը ենթակա է կիրառման սահմանադրական դատարանում՝ իրավական վեճի լուծման

առնչությամբ, ապա սահմանադրական դատարանը տվյալ օրենքի սահմանադրականության հարցը կարող է քննության առնել սեփական նախաձեռնությամբ:

Գերմանիայում սահմանադրական դատարանը վերահսկողական անուղղակի լուրջ գործառույթ է իրականացնում ամբողջ դատարական համակարգի նկատմամբ: Նրան է վերապահված ընդիուլա Դաշնային եւ Շողերի դատավորների պաշտոնանկության հետ կապված հարցերի լուծումը:

Իսպանիայի Սահմանադրության 163 հոդվածով նախատեսված է, որ եթե դատարական մարմինը որեւէ հարցի քննության ժամանակ գտնում է, որ այս կամ այն նորմը, որն ունի օրենքի ուժ եւ կիրավում է տվյալ գործով, կարող է հակասել Սահմանադրությանը, ապա առանց կասեցնելու օրենքի գործողությունը, սահմանված կարգով դիմում է սահմանադրական դատարան ստանալու համար վերջինիս եզրակացությունը:

Իսկ Թուրքիայի Սահմանադրության 152 հոդվածով նախատեսված է, որ եթե որեւէ կոնկրետ գործ քննող ընդիհանուր իրավասության դատարան հայտնաբերի, որ օրենքը, օրենքի ուժ ունեցող դեկրետը հակասահմանադրական է, կամ եթե հակասահմանադրականության վերաբերյալ որեւէ կողմի հարցապես դրա լուրջ հիմքեր ունի, ապա դատարանը պետք է հետաձգի գործի քննությունը՝ մինչեւ սահմանադրական դատարանն այդ հարցի կապակցությամբ որոշում կայացնի: Եթե դատարանը համոզված չէ հակասահմանադրականության վերաբերյալ դիմումի հիմնավորվածության հարցում, ապա այդ դիմումի եւ գործով հիմնական որոշման հարցը լուծում է վճռաբեկ դատարանը:

Պորտուգալիայի սահմանադրական արդարադատության էական առանձնահատկություններից մեկը, ինչպես նշել ենք, այն է, որ գործում է, այսպես կոչված, խառը տիպի համակարգ: Այսինքն՝ կոնկրետ գործերով նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցը որոշելու իրավասություն ունեն նաև ընդիհանուր իրավասության բոլոր դատարանները: Միաժամանակ, այդ հարցերով նրանց որոշումները կարող են գանգատարկվել սահմանադրական դատարան: Դիմումը նույնպես կարող է պահանջել սահմանադրականության հարցի որոշումը փոխադրել սահմանադրական դատարան: Դատարանում երկու մշտական ներկայացուցիչ ունի դատախազությունը: Եթե կոնկրետ գործերով տվյալ իրավանորմը երեք անգամ ճանաչվել է Սահմանադրությանը չհամապատասխանող, ապա դատարանում դատախազության ներկայացուցիչները կարող են սկսել վերացական վերահսկողության ընթացակարգը: Այս դեպքում դատարանի վճիռն ունենում է համընդգրկուն բնույթ, եւ տվյալ նորմը դադարում է գործելուց:

Բելառուսի Սահմանադրության 116 հոդվածով նախատեսվում է, որ սահմանադրական արդարադատության օբյեկտ են հանդիսանում նաեւ Գերագույն դատարանի ակտերը:

Բազմաթիվ երկրներում անհատական դիմումների համակարգը գործում է այն կարգով, որ անձը սահմանադրական դատարան դիմելու իրավունքը է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ ներպետական մյուս հնարավորություններն սպառվել են: Այս առումն նույնպես սահմանադրական դատարանները եւ ընդիհանուր իրավասության դատարանները գործառնական առնչություններ են ունենում:

Էապես այլ է այդ հարաբերությունների բնույթն այն երկրներում, որտեղ, սահմանադրական նորմի անմիջական գործողության ուժով, անհատական դիմումների հիմնան վրա, սահմանադրական դատարանն իրականացնում է մարդու իրավունքների պաշտպանություն: Նման պարագայում սահմանադրական վերահսկողության օբյեկտ է դաշնում ընդիհանուր իրավասության դատարանի որոշումը կամ վճիռը՝ ճիշտ այն կարգով, ինչ տեղի է ունենում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

### **3.5. Սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները պետական իշխանության այլ մարմինների հետ**

Պետական իշխանության այլ մարմինների հետ սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները պայմանավորված են.

- սահմանադրական դատարանի ձեւավորման կարգով,
- դատարանի լիազորություններով,
- գործունեության կարգով,

- որոշումների բնույթով:

Օրենսդիր մարմինը ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունենում սահմանադրական դատարանի ծեւավորման ու նրա գործունեության կարգը սահմանելու գործում, այլև պառաջանական դատարանի գործունեության կարգը սահմանադրական պարագաները (հաճախ նաև պառաջանական դատարանի գործունեության կամ նրա պայմանագրերը)՝ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են:

Հանրապետության Նախագահը, իր հերթին, ոչ միայն մասնակցում է սահմանադրական դատարանի ծեւավորմանը, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ է Եւ Սահմանադրությանը նախատեսված կարգով հետեւում է Սահմանադրության պահպանմանը: Կարեւոր է նաև այն, որ, ըստ էտքյան, Նախագահի գործունեության սահմանադրականության հարցը նույնպես վերահսկում է սահմանադրական դատարանը:

Ծատ երկրներում (Գերմանիա, Ավստրիա, Ռուսաստան, Չեխիա եւ այլն) սահմանադրական դատարանն ակտիվ առնչություններ ունի ոչ միայն կառավարության, այլև գործադիր իշխանության տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մի դեպքում որպես դիմոդ սուբյեկտ, մյուս դեպքում՝ եթե դրանց նորմատիվ ակտերն են դառնում վերահսկման առարկա:

Դաշնային պետություններում սահմանադրական վերահսկողության դաշնային մարմիններն ակտիվ գործառնական փոխհարաբերություններ ունեն նաև Դաշնության սուբյեկտների իշխանության բոլոր թեւերի հետ:

### **3.6. Սահմանադրական դատարանի անկախության երաշխիքները**

Այս հարցը սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկն է, որի լուծումը, սակայն, յուրաքանչյուր երկիր գտել է յուրովի:

Ի՞նչ ընդհանրություններ ու առանձնահատկություններ կան սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգի անկախ եւ անազար գործունեությունն ապահովելու հարցում: Նախ՝ ընդհանրությունների մասին:

Վերջիններիս թվին կարելի է դասել.

- դատական սահմանադրական վերահսկողության հատուկ մարմնի առկայությունը (Եվրոպական գրեթե բոլոր երկրներում ընդունված է, որ սահմանադրական դատարանը յուրովի դարձել է Սահմանադրության կենդանի վկայությունը եւ վեր է քաղաքական կոնյունկտուրայից),

- բոլոր երկրներում Սահմանադրությանը եւ օրենքներով ամրագրվում է, որ դատական սահմանադրական վերահսկողության մարմիններն անկախ են եւ ենթարկվում են միայն Սահմանադրությանը, իսկ նրանց գործունեությունը կարգավորվում է հատուկ օրենքով,

- սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում կամ ընտրվում են իշխանության տարրեր թեւերի կողմից, նրանք իրենց պարտականություններն ստանձնելուց առաջ երդում են, անձեռնմխելի են, իրենց պարտականությունների կատարումից կարող են ազատվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ընտրության (նշանակման) ժամանակ նրանց ներկայացվում են որոշակի պահանջներ,

- սահմանադրական արդարադատություն իրականացնողների համար Սահմանադրությանը նախատեսվում է գործունեության պվելի մեծ ժամանակահատված, քան նախատեսված է այս մարմինը ծեւավորող իշխանության մյուս թեւերի համար: Որպես հավելյալ երաշխիք, շատ երկրներում կիրառվում է նաև անփոփոխելիության սկզբունքը,

- սահմանադրական վերահսկողության մարմնի անդամներ օրենքով արգելվում է լինել որեւէ կուսակցության անդամ, գրադիվել քաղաքական գործունեությամբ (նաև նաև հասարակական գործունեությամբ), կատարել այլ վճարովի աշխատանք, տեղ գրադեցնել պառաջանական գործադիր իշխանության համակարգում,

- որպես կանոն, այս մարմնի որոշումը վերջնական է, իիմնականում վերանայման ենթակա չէ,

- Վերացական վերահսկողություն իրականացնելիս Սահմանադրությամբ նախատեսվում է դիմող սուբյեկտների այնպիսի շրջանակ, որպեսզի դատարանի գործունեությունը կախվածության մեջ չդրվի իշխանության որեւէ թելից: Պարտադիր վերահսկողության պարագայում՝ օրենքով հստակ սահմանվում են վերահսկման օբյեկտների շրջանակը և վերահսկման կարգը,

- դատական սահմանադրական վերահսկողության մարմիններն ունեն գործունեության կազմակերպման, ֆինանսական միջոցների տնօրինման, աշխատակազմի հետ տարվող աշխատանքի՝ օրենքով սահմանված որոշակի ինքնուրույնություն,

-անկախության ապահովման կարեւոր գործոն է նաեւ գործունեության իրապարակայնության ապահովումը:

Նշվածներից բացի, կան նաև մի շարք առանձնահատուկ հանգամանքներ, որոնք տարբեր երկրներում լրացուցիչ երաշխիքներ են ստեղծում սահմանադրական անկախ վերահսկողություն իրականացնելու համար: Օրինակ, երբ սահմանադրական դատարանն ինքը դառնում է սահմանադրական վերահսկողության սուբյեկտ, նրան վերապահվում է օրենսդրական նախաձեռնության իրավունք, ինչպես նաեւ սահմանադրական փոփոխությունները դառնում են նախնական պարտադիր վերահսկողության օբյեկտ: Կան նաև երկրներ, որտեղ անբողջ դատական համակարգի անկախությունն ապահովելու նպատակով վերջինի նկատմամբ վերահսկողության որոշակի լիազորություններ վերապահվում են սահմանադրական դատարանին:

Ընդհանուր առմամբ, սահմանադրական արդարադատության անկախության երաշխիքները կարելի է դասել օրգանապես փոխկապակցված չորս հիմնական խմբերի: Դրանք են. **գործառնական, կառուցակարգային, նյութական եւ սոցիալական երաշխիքները**: Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու առաջին եւ հիմնական պայմանն այն է, որ սահմանադրական դատարանն օժտված լինի անհրաժեշտ ու բավարար լիազորություններով: Երկրորդ խնդիրը դրանց իրացման նախադրյալների առկայությունն է, որը պայմանավորված է նշված վերջին երեք խումբ գործուներով:

Սահմանադրական արդարադատության անկախությունը միայն արտածին գործուների ազդեցության բացառմամբ եւ դատարանի մասնագիտական բարձր որակներով պայմանավորված չէ: **Զափազանց կարեւոր է, որպեսզի Սահմանադրության մեջ ամրագրված լինեն ներսահմանադրական կայունության պաշտպանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ**: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի սահմանադրական հիմնական սկզբունքների, նպատակների եւ կոնկրետ հարաբերություններ կարգավորող նորմերի ներդաշնակ կապը եւ ներքին հակասության բացակայության անհրաժեշտությունը:

#### ԳԼՈՒԽ IV.

##### ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**Թեմայի հիմնական հարցերն են.**

- բնութագրել սահմանադրական դատարանների հիմնական լիազորությունները: Որո՞նք են դրանց ընդհանրություններն ու տարբերություններն առանձին երկրներում,
- ինչպես է իրականացվում դատական սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում,
- ի՞նչ առանձնահատկություններ ունի անհատական դիմումների հիման վրա իրականացվող դատական սահմանադրական վերահսկողությունը,
- ինչպիսի՞ն է սահմանադրական դատարան դիմելու կարգը եւ որո՞նք են դրա առանձնահատկությունները,
- ի՞նչ կարգով է գործում սահմանադրական դատարանը,
- որո՞նք են սահմանադրական դատավարության հիմնական առանձնահատկությունները,

- ի՞նչ լիազորություններ ունի Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը,
- որո՞նք են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի գործունեության հիմնական առանձնահատկությունները:

#### **4.1. Սահմանադրական դատարանի լիազորությունները**

Սահմանադրական դատարանի լիազորությունները, որպես կանոն, սահմանվում են Սահմանադրությամբ, որը նույնականացնում է դատարանի անկախության կարեւոր երաշխիք է:

Բոլոր լիազորությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. ա) հիմնական կամ բնորոշ լիազորություններ, բ) լրացուցիչ կամ ածանցյալ լիազորություններ:

**Հիմնական լիազորությունների** կարգին կարելի է դասել.

- Առողմատիվ ակտերի սահմանադրականության որոշումը,
- Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանումը,
- Լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջեւ ծագած վեճերի լուծումը,
- մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

**Ածանցյալ լիազորությունների** թվին են պատկանում.

- ընտրությունների նկատմամբ վերահսկողությունը,
- տարբեր հարցերի առնչությամբ եզրակացություններ տալը,
- կուսակցությունների գործունեության առնչությամբ հարցերի քննությունը եւ այլն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի լիազորություններն ամբողջությամբ ամրագրված են Սահմանադրության 100 հոդվածում: 'Դրանք են.

- 1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.
- 2) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը.
- 3) լուծում է հանրաքենների, Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը.
- 4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները (նման իրավասություն ամրագրված է միայն Ֆրանսիայի Սահմանադրությամբ).
- 5) Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.
- 6) Եզրակացություն է տալիս Սահմանադրության 55 հոդվածի 13 եւ 14 կետերով նախատեսված միջոցառումների մասին (13 կետը Նախագահի այն իրավասությունն է, եթե նա որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում հայտարարում է ռազմական դրույթուն եւ կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի գորահավաք: 14 կետը այն իրավասությունն է, եթե Նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ

Վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում ժողովողին)։

7) Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին։

8) Եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին։

9) Օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին։

Դասական օրինակներից կարելի է առանձնացնել Ավստրիան, որտեղ բավականին լայն ու հստակ են սահմանադրական դատարանի լիազորությունները։ Այստեղ բացի նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշման ու Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման իրավասությունից, սահմանադրական դատարանը լուծում է նաև։

- միջազգային պայմանագրերի սահմանադրականության եւ օրինականության հարցերը,
- պետության բարձրագույն մարմինների (Երկրի Նախագահ, կառավարություն, Հողերի կառավարություններ, նահանգապետներ, Վիեննայի քաղաքապետարանի դեկավարություն եւ այլն) դեկավարների գործունեության սահմանադրականության հարցերով առաջացած վեճերը,
- տարբեր դատարանների եւ դատարանների ու վարչական մարմինների միջեւ ծագած վեճերը,
- իշխանության տարբեր մարմինների միջեւ առաջացած իրավական վեճերը,
- իրավական ակտերի ինչպես սահմանադրականության, այնպես էլ օրինականության հարցերը,
- կենտրոնական իշխանության եւ Հողերի ու վերջիններիս միջեւ առաջացած վեճերը,
- Ղաշնության Նախագահի եւ ներկայացուցչական մարմինների ընտրությունների (ցանկացած մակարդակի՝ սկսած համայնքներից) հետ կապված վեճերը (եթե խախտումներն էական ազդեցություն ունեն ընտրությունների արդյունքների վրա),
- քննում է Ղաշնության Նախագահի, կառավարության անդամների, Հողերի կառավարությունների անդամների եւ մի շարք այլ պաշտոնատար անձանց (ինչպես, օրինակ, մայրաքաղաքի դեկավարության, Հողերի դպրոցական խորհուրդների նախագահների կամ նրանց պաշտոնակատարների եւ այլն) դեմ հարուցված գործերը (այդ թվում՝ քրեական)՝ նրանց կողմից օրինախախտումների դեպքերում, եթե այն կապված է իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման հետ (հստակ սահմանված է, թե յուրաքանչյուր դեպքում պետական որ մարմինն է դիմում),
- որոշումներ է ընդունում միջազգային իրավունքի նորմերի խախտման հարցերով,
- լուծում է Մարդու իրավունքների պաշտպանի եւ պետական մարմինների միջեւ առաջացած վեճերը՝ կապված իրենց իրավունքների շուրջ առաջացած մեկնաբանությունների հետ։

Ղաշնային երկրների տիպական օրինակ է նաև Գերմանիան, որտեղ նույնպես սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելու իրավունք ունի։ Բացի դրանից, Սահմանադրության 93 հոդվածով նախատեսված է, որ Ղաշնային սահմանադրական դատարանը լուծում է գործեր։

1) կապված Հիմնական օրենքի մեկնաբանման հետ՝ պայմանավորված վեճերով, որոնք առաջանում են գերազույն դաշնային մարմինների կամ այլ մասնակիցների իրավունքների ու պարտականությունների հարցերով, եւ որոնք այդ իրավունքներն ստացել են Հիմնական օրենքով կամ բարձրագույն դաշնային մարմնի կանոնակարգով։ Ինչ վերաբերում է օրենքների սահմանադրականության հարցին, ապա այդ հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավասություն է վերապահված Ղաշնային կառավարությանը, Հողերի կառավարություններին, Բունդեստագի անդամների 1/3-ին,

2) Երբ տարակարծություն կամ կասկած կա դաշնային իրավունքի կամ Հողերի իրավունքի եւ Հիմնական օրենքի ձեւական կամ փաստական համապատասխանության հարցում, կամ Հողերի իրավունքի եւ դաշնային իրավունքի համապատասխանության հարցում՝ Դաշնային կառավարության, Հողերի կառավարությունների կամ Բունդեստագի անդամների մեկ երրորդի առաջարկով,

3) Երբ կարծիքները չեն համընկնում Դաշնային եւ Հողերի կառավարությունների իրավունքների ու պարտականությունների հարցում, մասնավորապես, Հողերի կողմից Դաշնային իրավունքը կիրառելիս եւ Դաշնային վերահսկողությունն իրականացնելիս,

4) Դաշնության ու Հողերի միջեւ, առանձին Հողերի միջեւ, դրանց ներսում հանրային - իրավական վեճեր առաջանալիս,

4-ա) (Աերառվել է 29.01.1969թ.) սահմանադրական այն գանգատներով, որոնք կարող են տրվել յուրաքանչյուրի կողմից, ով պնդում է, որ իշխանությունը խախտել է նրա որեւէ հիմնական իրավունք, կամ որեւէ իրավունք, որը շարադրված է Սահմանադրության 20 (մաս 4), 33, 38, 101, 103 եւ 104 հոդվածներում,

4-բ) (Աերառվել է 29.01.1969թ.) համայնքների սահմանադրական գանգատներով, եթե խախտվել է ինքնակառավարման մասին օրենքի 28 հոդվածով նախատեսված իրավունքը, իսկ Հողերի օրենքների առնչությամբ՝ այն պայմանով, որ գանգատ չբերվի Հողի սահմանադրական դատարան,

5) Սահմանադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

1993թ. հունիսի 28-ին կատարվեց սահմանադրական լրացում (հոդված 18-1), որով նախատեսվում է, որ նա, ով որպես ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերի դեմ պայքարի միջոց չարաշահում է կարծիքի ազատության, մասնավորապես, մանուլի ազատության (հոդվ. 5, մաս 1), դասավանդման ազատության (հոդվ. 3, մաս 3), ժողովի ազատության (հոդվ. 8), միավորման ազատության (հոդվ. 9), գաղտնի նամակագրության, փոստային ու հեռախոսակապի (հոդվ. 10), սեփականության (հոդվ. 14) կամ ապաստանի իրավունքը (հոդվ. 16-ա), զրկվում է այդ հիմնական իրավունքներից: Նշված իրավունքներից զրկումը եւ նրա ծավալը որոշում է Դաշնային սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 21 հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է.

(2) Կուսակցությունները, որոնք իրենց ծրագրերով կամ իրենց կողմնակիցների վարքով ձգտում են վճաս պատճառել ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերին, կամ այն վերացնել, կամ վտանգել Գերմանիայի Դաշնային Հանրապետության գոյությունը, հակասահմանադրական են: Հակասահմանադրականության հարցը որոշում է Դաշնային սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 61 հոդվածով նախատեսված է.

(1) Բունդեստագը կամ Բունդեսրատը կարող են Դաշնային սահմանադրական դատարան գրո՞ծ հարուցել Դաշնության նախագահի դեմ, եթե նրա կողմից կանխամտածված խախտվել է Հիմնական օրենքը կամ դաշնային այլ օրենք: Մեղադրանքը կարող է ներկայացվել Բունդեստագի կամ Բունդեսրատի անդամների ձայների ոչ պակաս, քան մեկ քառորդի կողմից: Բունդեստագը կամ Բունդեսրատը որոշումը կարող են կայացնել ձայների երկու երրորդով: Մեղադրանքը պաշտպանվում է այն ներկայացրած մարմնի կողմից:

(2) Եթե Դաշնային սահմանադրական դատարանը գտնում է, որ նախագահը մեղավոր է Հիմնական օրենքի կամ դաշնային օրենքների կանխամտածված խախտման մեջ, ապա նրան կարող է պաշտոնանկ անել: Մեղադրանքը ներկայացնելուց հետո Դաշնային սահմանադրական դատարանն իրավասու է ժամանակավոր կարգադրությամբ որոշել, որ Դաշնության նախագահը չի կարող կատարել իր պաշտոննեական պարտականությունները:

Սահմանադրության 98 հոդվածով սահմանվում է.

Եթե դաշնային դատավորը ծառայության վայրում կամ դրանից դուրս խախտում է Հիմնական օրենքի սկզբունքները կամ որեւէ Հողի սահմանադրական կարգերը, ապա Դաշնային սահմանադրական դատարանը կարող է Բունդեստագի առաջարկով կամ իր անդամների երկու երրորդից ոչ պակաս ձայներով կարգադրություն անել այդ դատավորին այլ աշխատանքի փոխադրել կամ հեռացնել՝ նրան

պաշտոնագրկելով: Եթե կանխամտածված խախտում է, կարող է որոշում կայացնել պաշտոնից հեռացնելու մասին:

Հոդված 100-ում նախատեսվում է, որ եթե դատական վեճ է առաջանում միջազգային պայմանագրի նորմերի վերաբերյալ, դատարանը պետք է դիմի սահմանադրական դատարան:

1968թ. հունիսի 24-ին Դաշնային Սահմանադրությունը լրացվել է մի ամբողջ բաժնով, որում 115-գ հոդվածով նախատեսվել է, որ չի կարող վնաս հասցվել Դաշնային սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակին եւ նրա ու իր դատավորների կողմից իրենց սահմանադրական պարտականությունների իրականացմանը:

Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքը կարող է փոփոխվել միայն համատեղ կոմիտեների օրենքով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է, եւ Դաշնային սահմանադրական դատարանի կարծիքով կնպաստի նրա գործունեության արդյունավետ իրականացմանը: Մինչեւ նման օրենքի հրապարակումը սահմանադրական դատարանը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ դատարանի գործունակությունը պահպանելու ուղղությամբ: Սահմանադրական դատարանի կողմից, երկրորդ եւ երրորդ առաջարկություններին համապատասխան, որոշումներն ընդունվուն են ներկաների ձայնների մեջանանությամբ:

Անցումային դրույթների մասին 126 հոդվածով նախատեսված է, որ եթե վեճ է առաջացել, ապա Դաշնային սահմանադրական դատարանն է որոշում, թե տվյալ դաշնային իրավունքը շարունակում է գործել, թե՝ ոչ:

Մենք ստորեւ կանդրադառնամք ՀՀ սահմանադրական դատարանի լիազորություններին: Սակայն հարկ է նշել, որ այսօր աշխարհում գործող շուրջ 110 սահմանադրական դատարաններն իրականացնում են ընդիհանուր առնամբ թվով 37 լիազորություն, սակայն դրանք բոլորը միաժամանակ որեւէ դատարանում առկա չեն: Ըստ լիազորությունների բոլոր դատարանները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: 1. Որոնցում լիազորություններն ամբողջական են ու լիարժեք նախադրյալներ են ստեղծում Սահմանադրության գերակայությունը գործնականում երաշխավորելու համար: 2. Որոնցում այդ հնարավորությունը բավարար չափով երաշխավորված չէ՝ հատկապես սահմանադրական վեճերի լուծման, Սահմանադրության մեկնարանման, մարդու իրավունքների ուղղակի պաշտպանության եւ մի շարք այլ լիազորությունների բացակայության պատճառով:

Դայաստանն այն երկրներից է, որտեղ սահմանադրական արդարադատության ոլորտից դուրս են թողնվել այնպիսի բացարիկ լիազորություններ, ինչպիսիք են. օրենքների նախնական վերահսկողությունը (իրականացվում է 46 երկրում), կոնկրետ վերահսկողությունը՝ ընդիհանուր իրավասության դատարանների դիմումների հիմնա վրա (իրականացվում է 46 երկրում), Սահմանադրության կամ օրենքի պաշտոնական մեկնարանումը (իրականացվում է 42 երկրում), իշխանության մարմինների միջև լիազորությունների հարցերով վեճերի լուծումը (իշխանության կենտրոնական մարմինների միջև՝ 43 երկիր, տարածքային եւ այլ մարմինների միջև՝ 60 երկիր), մարդու իրավունքների անմիջական պաշտպանությունը՝ անհատական դիմումների հիմնա վրա (52 երկիր) եւ այլն: Ի դեպ, գրեթե չկա մեկ այլ երկիր, որտեղ նշված բոլոր լիազորությունները միաժամանակ բացակայում են: Նման վիճակում անխուսափելի են դաշնում հասարակական ցնցումները, չլուծված խնդիրների կուտակման եւ պայթյունային հանգուցալուծումների հնարավորությունները: Ավելին, եթե սահմանափակ են ոչ միայն լիազորությունները, այլեւ սահմանափակված է դատարան դիմու սուբյեկտների շրջանակը, որի հետեւանքով նույնիսկ առկա մի շարք լիազորություններ գործնականում անհրագործելի են դաշնում, ապա սահմանադրական արդարադատության համակարգը պարզապես ի գորու չի կարող լինել լիարժեք կատարելու իր առաքելությունը<sup>19</sup>:

Բերված օրինակներն իիմնականում սպարիչ ներկայացնում են սահմանադրական դատարանների լիազորությունների շրջանակը: Դրա հետ մեկտեղ, ինչպես արդեն նշել ենք, մի շարք երկրներում (մասնավորապես, Թուրքիա, Իրան, Հունաստան եւ այլն) կան առանձին բնորոշ առանձնահատկություններ:

#### **4.2. Սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում**

Մարդու իրավունքների պաշտպանությունը պետության սահմանադրական եւ միջազգային-իրավական կարեւոր պարտականություններից մեկն է: Պետության խնդիրն է ստեղծել մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության քաղաքական ու իրավական երաշխիքների հուսալի համակարգ, որը պետք է ներառի սկզբունքների, օրենքների, կառույցների, մեխանիզմների մի ամբողջություն: Որպես

Խնդրի լուծման սուբյեկտ են հանդես գալիս պետական իշխանության բոլոր ինստիտուտները: Առանձնահատող կարեւոր դեր է վերապահվում պետության առաջին դեմքին, պառլամենտին, դատական համակարգին, կառավարությանը:

Մարդու բնական եւ անօտարելի իրավունքները եւ ազատությունները պետության կողմից պետք է ճանաչվեն որպես բարձրագույն արժեք, երաշխավորված ծեւով պաշտպանվեն, նախանշեն պետության ու ժողովրդի կողմից իշխանության իրականացման բնույթին ու սահմանները՝ իրենց հիմքում ունենալով մարդու արժանապատվության սահմանադրական երաշխիքների ամրագրման անհրաժշտությունը<sup>20</sup>: Սահմանադրական իիմնական պահանջը՝ այդ իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի, անօտարելիության ճանաչումն ու ամորագումն է: Եթե չկա այդ ճանաչումը, ապա անխուսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ Սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կդնի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ մարդկանց ազատությունների վրա:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդման համար ելակետային են.

- մարդը, որպես սոցիալական երեւույթ, հասարակական հարաբերությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով ու իր մարդկային արժանապատվությամբ,
- պետությունը պարտավոր է ճանաչել մարդու իրավունքները որպես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես սահմանադրորեն ամրագրված անմիջական գործող իրավունք,
- ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք կարող ե սահմանափակել միայն ու միայն այն չափով, որչափով դա անհրաժշտ է ժողովրդավարական հասարակության մեջ այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար,
- այդ իրավունքները համընդիանուր են, ունեն պաշտպանության ոչ միայն ներպետական, այլև միջազգային երաշխիքներ:

Սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հրաշակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլև առավելագույն հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման բոլոյատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համարժեք, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով: Միայն այս դեպքում է հնարավոր քաղաքացիների սահմանադրական արդարադատության իրավունքի անկաշկանդ իրացումը, Սահմանադրության գերակայության երաշխավորված ապահովումը:

Միջազգային սահմանադրական պրակտիկայի համեմատական վերլուծությունը վկայում է, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում կամ սահմանադրական նորմերի բնույթը ունեցող՝ մարդու իրավունքների հրաշակագրերում ամրագրվում է հայեցակարգային մոտեցումը մարդու իրավունքների նկատմամբ, իսկ 65-ից ավելի երկրների սահմանադրություններում հստակ մոտեցում է դրսեւորված նաեւ անձի արժանապատվության սահմանադրական սկզբունքի նկատմամբ: Վերջինիս նվիրված է մեկ կամ ավելի հոդված, շեշտվում է անձի արժանապատվության անձեռնմխելիությունը՝ որպես անքակտելի իրավունք, անօտարելիությունը, հարգման եւ պաշտպանման՝ պետության պարտավորությունը, ինչպես նաեւ առնչությունները մարդու իրավունքների ու ազատությունների հետ: Օրինակ, Գերմանիայի Դաշնության Սահմանադրության առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու անձեռնմխելի ու անօտարելի իրավունքները՝ որպես ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մոտեցումը, ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Նմանօրինակ մոտեցում է արտացոլված նաեւ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2, 17, 18 եւ 21, իսպանիայի՝ 10, Չեխիայի՝ 1-3, Վրաստանի՝ 7, Ուկրաինայի՝ 8, Լեհաստանի՝ 30, Ռումինիայի՝ 1, Սլովենիայի՝ 15, Պորտուգալիայի՝ 1, 18 հոդվածներում: Բոլոր այդ օրինակները վկայում են, որ ոչ թե իշխանությամբ իրավունքն է սահմանափակվում, այլ իրավունքով՝ իշխանությունը: Այն սահմանադրությունները, որոնք նման որոշակիությամբ մերութարանական այս մոտեցումը չեն որդեգրել, թերի են, եապես անկատար ու նաեւ բռնապետության հաստատման պոտենցիալ մեծ վտանգ են պարունակում: Մարդու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական

հոչակագրում շատ դիպուկ է բնորոշված՝ «...մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների եւ կառավարությունների այլասերման»:

Դայաստանն անդամակցելով Եվրախորհրդին, միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագորության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»:

Թերեւս, անհրաժեշտ է հատուկ առանձնացնել նաեւ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության նախարար» կոնվենցիան (4.11.1950թ.), որի նախարանում ոչ միայն ամրագրված են վերոհիշյալ դրույթները, այլև շեշտադրված են այնպիսի հասկացություններ ու ծեւակերպումներ, ինչպիսիք են՝ «մարդու իրավունքների համընդհանուր եւ արդյունավետ ծանաչում», «մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավորապես պայմանավորված է... համակարգի իրական ժողովրդավարական բնույթով», «ազատությունների հարգում եւ իրավունքի գերակայություն» եւ այլն: Դատկապես ուշադրության է արժանի վերջին ծեւակերպումը: Այն օգտագործվում է Կոնվենցիայի նախարանում՝ որպես Եվրոպական երկրների քաղաքական ավանդույթների ու իդեալների, միասնական արժենկալման արտահայտություն: Այս Կոնվենցիան առանձնահատուկ է նաեւ նրանով, որ վերջինիս նորմերն ուղղակի գործողության նորմեր են եւ պաշտպանվում են Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից: Ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, Կոնվենցիան սահմանում է նաեւ դրանց սահմանափակման եւ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղման քույլատրելի սահմանները: Ընդ որում, այդ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի եռությունը: Կոնվենցիայի պահանջն է նաեւ՝ սահմանազատել հիմնական իրավունքները սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքներից՝ յուրաքանչյուրի նկատմամբ դրսերելով միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով սահմանված համապատասխան մոտեցում: Կոնվենցիան ու դրան կից աղճանագրությունները բովանդակում են մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ այնպիսի նորմեր, որոնց ուղղակի գործողությունը պետք է երաշխավորված լինի Եվրախորհրդի անդամ յուրաքանչյուր երկրում: Դետեւաբար, այդ նորմերը պետք է լիարժեք խորությամբ ու հստակությամբ սահմանադրական ամրագրում ու պաշտպանվածություն ունենան:

Սահմանադրականության զարգացման ներկա միտումները միարժեքորեն վկայում են, որ Սահմանադրության գերակայության ապահովման հիմնահարցը, վերջին հաշվով, հանգում է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությանը՝ տարածատված իշխանությունների ներդաշնակ գործակցության ապահովման ծանապարհով: Եվ քանի որ այդ իրավունքները «... անմիջականորեն գործող իրավունքներ» են, դրանց պաշտպանության գլխավոր երաշխիքներն են սահմանադրուեն մեթոդաբանական ճշշտ մոտեցմամբ ամրագրում եւ կենսունակ արդարադատական համակարգը:

Մասնավորապես, Եվրոպական երկրների վերջին տասնամյակների փորձն անառակելիորեն վկայում է, որ մարդու իրավունքների պաշտպանությունն առավելապես երաշխավորված է, եթե մարդն իր խախտված իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունք ունի: Այսինքն՝ արդարադատության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության կարեւոր երաշխիքն է դառնում: Սակայն նման ծեւակերպումն անկատար ու թերի է, եթե խարսխավում է մարդու իրավունքների հայեցական ընթացման վրա: Բանն այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքները, նույնիսկ եթե դրանք անբողջական արտացոլում չեն գտել Սահմանադրության մեջ (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 43), չեն կարող, նրանից օտարվելով, դառնալ պետական կառավարման գործառույթ: Եթե այդ իրավունքները ճանաչվում են ամրագրվում են Սահմանադրության մեջ, եթե Սահմանադրությամբ են որոշարկվում դրանց սահմանափակման շրջանակները, եւ եթե այդ իրավունքները կարող են նաեւ ոտնահարվել ոչ միայն տարաբնույթ գործողությունների ու անգործության, այլև «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող» օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով, ապա այդ իրավունքների պաշտպանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, եթե ընդունվում են իրավական օրենքներ եւ մարդն օժտված է նաեւ սահմանադրական արդարադատության իրավունքով: Այս խնդիրը միջազգային սահմանադրական արակտիկայում առավել անբողջական լուծում ստացավ վերջին 40-50 տարիների ընթացքում:

Ուշագրավ է նաեւ այն, որ այս հարցը առանձնահատուկ կարեւորություն է ստացել Դակոր ու Շահամիր Շահամիրյանների «Որոգայթ փառաց» - ում, որը ոչ միայն հայ, այլև միջազգային սահմանադրական մտքի եզակի կորողներից է:

Միջազգային պրակտիկան վկայում է նաեւ, որ մարդու իրավունքների իրավական պաշտպանության արդյունավետ իրականացման գործում առկա են առաջընթացի կայուն միտումներ: Ուշադրության են արժանի հետեւյալ հարցերը:

ա) սահմանադրական վերահսկողության մարմնի մասնակցությունը որքանո՞վ է ապահովում այս խնդրի համակարգված եւ ամբողջական լուծումը,

բ) մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության հ՞նչ ձեւ ու դիմող սուբյեկտների հ՞նչ համակարգ է ընտրվում,

գ) մասնավորապես այս խնդրում ինչպե՞ս են փոխհարաբերվում քաղաքացին, ընդհանուր իրավասության դատարանները, ժողովրդի պաշտպանի ինստիտուտը եւ սահմանադրական դատարանը:

Առաջին հարցն անմիջականորեն շաղկապվում է պետության ներսում մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքների գործուն ու ամբողջական համակարգի ստեղծման խնդրի հետ: Ամենից առաջ դա վերաբերում է օրենսդրական եւ ինստիտուցիոնալ երաշխիքներին:

Մարդու իրավունքների պաշտպանության հարցն ամենեւին չի սահմանափակվում սահմանադրորեն այդ իրավունքի ամրագրմամբ: Արդյո՞ք ստեղծվում են դրա համար բավարար օրենսդրական երաշխիքներ: Որքա՞ն է ամբողջական ու ավարտուն օրենսդրական համակարգը, հաղթահարված են, արդյոք, ներքին հակասությունները, կա՞ն բավարար երաշխիքների օրենքների կիրարկման համար, ստեղծվե՞լ ու պատրա՞ստ են պետական ու ոչ պետական համապատասխան ինստիտուտներն այդ խնդրիները լուծելու համար: Այս հարցերի պատասխանները պետք է դասվեն պետական քաղաքականության առաջնայնությունների շարքը:

Պակաս կարեւոր չէ մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության ձեւի խնդիրը: Միջազգային պրակտիկայում կարելի է առանձնացնել մի քանի հիմնական մոտեցումներ: Պայմանականորեն դրանք նախ կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի վերահսկողություն եւ անուղղակի վերահսկողություն: Առաջին խմբի տիպական օրինակ են այն երկրները, որտեղ քաղաքացիներն առանց որեւէ նախապայմանի սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են:

Երկրորդ խումբն իր հերթին կարելի է բաժանել երկու ենթախմբի. նախ. Եթե մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքի պաշտպանության հարցը կոնկրետ վերահսկողության շրջանակներում միջնորդավորված ձեւով դառնում է սահմանադրական դատարանի քննության առարկա: Երկրորդ՝ եթե այս հարցը քննության առարկա է դառնում վերացական, ֆակուլտատիվ վերահսկողության ճանապարհով (այսպիսի օրինակ կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները Գերմանիայի, Եգիպտոսի, Վրաստանի հետ կնքված միջազգային պայմանագրերի առնչությամբ, որոնցում առանձին նորմներ ճանաչվեցին ՀՀ սահմանադրությանը չի համապատասխանող՝ հենց մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով):

Առաջին ենթախմբի լավագույն օրինակ է Խոալիան: Այստեղ քաղաքացին նախ պետք է հայցադիմում ներկայացնի ընդհանուր իրավասության դատարան: Եթե կողմերը կամ դրանցից մեկը գտնում են, որ հայցն առնչվում է նորմատիվ ակտի սահմանադրականության խնդրին, ապա դատավորը, եթե գտնում է (կամ կասկածում է), որ այդպես է, ապա ժամանակավորապես դադարեցնում է գործի քննությունը եւ դիմում սահմանադրական դատարան:

Գրեթե ննանատիպ համակարգ է գործում նաեւ Խսպանիայում: Ընդ որում, եթե Խտալիայում եւ Խսպանիայում այս իրավասությունը ունեն բոլոր դատարանները, ապա Ավստրիայում դրանց օգտվում են միայն երկրորդ աստիճանի եւ բարձրագույն դատական ատյանները: Այս դեպքերում գործ ունենք մասնակի կոնկրետ եւ մասնակի վերացական մի խառը համակարգի հետ: Սակայն Խսպանիայում բացի մարդու իրավունքներին առնչվող իրավանորմերի դատական սահմանադրական վերահսկողությունից, ինչպես նշել ենք, գործում է նաեւ սահմանադրական իրավունքների ուղղակի պաշտպանության համակարգը (Amparo):

Փաստորեն, սահմանադրական վերահսկողությունը մարդու իրավունքների բնագավառում կարող է հանդես գալ կամ որպես վերացական վերահսկողություն, կամ կոնկրետ գործերի քննության ընթացքում, ինչպես նաեւ անհատական դիմումների հիման վրա:

Վերջին չորս տասնամյակների փորձը վկայում է, որ անհատական դիմումների հիման վրա սահմանադրական վերահսկողությունը սովորաբար արմատավորվում է սահմանադրական դատարանների կազմավորումից որոշ ժամանակ հետո: Օրինակ, Ավստրիայում անհատական դիմումների հիման վրա սահմանադրական դատարանի կողմից քաղաքացու իրավունքների պաշտպանության կարգն արմատավորվեց միայն 1975 թվականից հետո: Այն հետագայում է արմատավորվել նաև Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում: Իսկ Սլովակիան 2000 թվականից արմատավորեց նաև սահմանադրական դատարանի կողմից նարդու սահմանադրական իրավունքների անմիջական պաշտպանության համակարգը:

Սակայն այս իրավասության աստիճանական արմատավորման հանգամանքը չի կարելի նաև բացարձակեցնել: Գլխավորն այն է, որ մարդու իրավունքների պաշտպանության հարցը ներկայումս դարձել է սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկը, եւ այն հաջողությամբ կարելի է իրականացնել առաջին հերթին անհատական դիմումների հիման վրա: Ուստի, մեր կարծիքով, ճիշտ վարկեցին այն նորանկախ երկրները, որոնք, առանց հապաղելու եւ ժամանակ կորցնելու, ստեղծեցին նման հնարավորություն:

Նշված երկրների փորձը վկայում է նաև, որ նման իրավասությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է հստակ օրենսդրական կարգավորում մտցնել: Սովորաբար գործում են, այսպես կոչված, զտիչների այնպիսի մեխանիզմներ, որոնք ապահովում են, մի կողմից, մարդկանց համար սահմանադրական դատարան դիմելու մատչելիությունը, մյուս կողմից՝ դիմել այնպիսի հարցերով, որոնք իրավամբ սահմանադրականության խնդիր են բովանդակում<sup>21</sup>: Այդ նպատակով գործադրվում են. ընդհանուր իրավասության դատարանների հնարավորությունները (որպեսզի սահմանադրական դատարան դիմելու իրավունք ձեռք բերեն այլ հնարավորություններն սպառելուց հետո), դատարան դիմելու համար վճարի կարգը (օրինակ, Գերմանիայում 1985 թվականից այն կազմում է 1000 մարկ, իսկ այդ իրավունքի չարաշահնան դեպքում՝ 5000 մարկ), նորմատիվ ակտերի շրջանակի սահմանումը (օրինակ, Ռուսաստանում կարող են դիմել միայն օրենքի սահմանադրականության հարցով), մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը (Երբ վերջինս է դառնում սահմանադրական դատարան դիմոլ սուբյեկտ) եւ այլն:

Կարեւոր է նաև այն հարցը, թե տվյալ պարագայում ինչպիսի՞ն պետք է լինի սահմանադրական դատարանի որոշումը՝ համապարփա՞կ, թե՞ հարաբերական: Այս հարցում նույնպես հանդիպում ենք խիստ տարբեր մոտեցումների: Եթե հսպանիայում եւ իտալիայում այն հարաբերական բնույթ ունի, ապա Գերմանիայում համապարփակ է եւ այստեղ պահանջվում է, որպեսզի ընդհանուր իրավասության դատարանը սահմանադրական դատարան դիմի միայն նորմատիվ ակտի կամ տվյալ դրույթի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու հարցում համոզված լինելու դեպքում:

Սակայն այս հանգամանքը մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության հարցում արգելակող դեր չունի, քանի որ Գերմանիայում քաղաքացին կարող է նաև ուղղակի դիմել սահմանադրական դատարան:

Ընդհանրապես այս խնդիրի առնչությանը սահմանադրական վերահսկողության մարմինները կարելի է բաժանել 3 խմբի:

1. Երբ յուրաքանչյուր անձ կարող է նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով դիմել սահմանադրական դատարան (օրինակ, Ավստրիա, Գերմանիա, Ռուսաստան, Հունգարիա, Սլովենիա, Վրաստան),
2. Երբ կարող են դիմել միջնորդավորված՝ ընդհանուր իրավասության դատարանների կամ ժողովրդական պաշտպանի ինստիտուտի միջոցով (Իտալիա, Պորտուգալիա եւ բոլոր այն երկրները, որտեղ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարանների միջոցով),
3. Երբ քաղաքացիներն ընդհանրապես գրկված են սահմանադրական դատարան դիմելու իրավունքից (Ֆրանսիա, Ռումինիա, Հայաստան, Շվեյցարիա):

Մի շարք երկրներում (մասնավորապես՝ Իսպանիայում, Պորտուգալիայում, Լեհաստանում եւ այլն) քաղաքացիների այդ իրավունքն իրացվում է նաև միջնորդավորված՝ օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպանի կամ հաճախ անվանվում է ժողովրդական պաշտպանի) ինստիտուտի միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում դատական սահմանադրական վերահսկողությունն իրականացնում է երկակի ֆունկցիա: Սի կողմից, պաշտպանվում են մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված անհատական իրավունքները, մյուս կողմից՝ վերահսկվում է այս հարցում պետական իշխանության մարմինների պարտականությունների կատարումը եւ վերաբերմունք է դրսերովում դրա նկատմամբ: Այս հանգամանքի թերագնահատումը եւ սահմանադրական դատարանին այդ իրավասությունից զրկելը միարժեք ենթադրում է խնդիրը դարձնել անլուծելի եւ պետության ներսում չունենալ մարդու իրավունքների պաշտպանության ամբողջական ու գործուն համակարգ:

Սահմանադրական վերահսկողության պրակտիկայում միշտ բանավիճային բնույթ է կրում այն հարցը, թե սահմանադրական հ՞նչ նորմների շրջանակներում է գերադասելի անհատական դիմումների հնարավորությունը, կամ արդյո՞ք անհրաժեշտ են սահմանափակումներ, զտիչների ինչ - որ մեխանիզմներ: Ուսումնասիրությունները հանգեցնում են այն հետեւությանը, որ առավել հիմնավորված է մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների շրջանակով սահմանափակվելը: Դայաստանի պարագայում դա վերաբերում է Սահմանադրության երկրորդ գլխին: Նման նոտեցումը հնարավորություն է ընձեռում առավել առարկայական ու արդյունավետ դարձնել սահմանադրական վերահսկողությունը, ինչպես նաև հստակություն նսցնել թե դատական իշխանության եւ թե իշխանության այլ համակարգերի ինստիտուտների գործառնական փոխհարաբերություններում:

Կարեւոր է նաև այն հարցը, թե հ՞նչ նորմատիվ ակտերի վրա է տարածվում վերահսկողությունը: Այստեղ նույնպես կան էական տարբերություններ: Օրինակ, Ավստրիայում, Գերմանիայում, Սլովենիայում եւ մի շարք այլ երկրներում որեւէ սահմանափակում չի դրվում, եւ ցանկացած նորմատիվ ակտ սույն խնդրի առնչությամբ կարող է սահմանադրական վերահսկողության օբյեկտ դառնալ: Մակայն Իտալիայում, Խսաբանիայում, Ռուսաստանում այն տարածվում է նիայն օրենքների եւ օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերի վրա: Իսկ, օրինակ, Ավստրիայում, Խորվաթիայում եւ այլուր, վերահսկողությունը տարածվում է նաև գործադիր իշխանությունների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի վրա: Մեր կարծիքով, կարելի է անել այն հետեւությունը, որ անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հստակ ու գործուն համակարգ չի ձեւափորված, իսկ օրենսդրական դաշտն ունի ներքին բազմաթիվ անհամաձայնություններ ու հակասություններ, նախապատվությունը պետք է տրվի նորմատիվ ակտերի շրջանակը չսահմանափակելուն:

Տարբեր երկրներում մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական վերահսկողության բազմաբնույթ առանձնահատկությունների հետ մեկտեղ կա գրեթե համընդիանուր ճանաչում գտած ճշմարտություն: Դա այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների ուժնահարումը կանխելու, օրենսդրության մեջ նման հնարավորությունը բացառելու արդյունավետ եւ գործուն ճանապարհն այս հարցով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակի հնարավոր ընդլայնումն է:

#### **4.3. Սահմանադրական դատարան դիմելու կարգն ու առանձնահատկությունները**

Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների լիազորությունների ու նրանց կողմից սահմանադրական արդարադատության իրականացման առանձնահատկությունները պայմանավորում են նաև դատարան դիմելու կարգն ու վերջինիս առանձնահատկությունները: Այսուհետեր, կան ընդհանրություններ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր սահմանադրական դատարաններին: Դրանցից հիմնականն այն է, որ սահմանադրական դատարանները գործեր կարող են քննության ընդունել միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101 հոդվածով այդպես էլ սահմանված է «Սահմանադրական դատարանը գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում»: Էական է նաև այն, որ բոլոր երկրներում օրենսդրությանը սահմանվում են դիմելու կարգն ու դիմումին ներկայացվող պահանջները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլուխը նվիրված է այդ խնդրի կարգավորմանը: Այստեղ, մասնավորապես, հոդված 27-ը ամփոփում է դիմումին ներկայացվող պահանջները, որոնք հանգում են հետեւյալներին: Դիմումը սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի, անձանց կամ մարմնի կողմից ստորագրված: Դիմումի մեջ պետք է նշվեն

- 1) սահմանադրական դատարանի անվանումը,
- 2) դիմողի անունը (անվանումը), հասցեն (իրավաբանական հասցեն),
- 3) դիմողի ներկայացուցչի մասին անհրաժեշտ տվյալներ, եթե կան այդպիսիք,
- 4) Սահմանադրության այն հոդվածը, որը սահմանադրական դատարան դիմելու իրավունք է տալիս,
- 5) դիմողի դիրքորոշումն իր առաջադրած հարցի առնչությամբ՝ Սահմանադրության համապատասխան

Նորմերին կատարված հղումներով,

6) սահմանադրական դատարանին ներկայացվող խնդրանքը՝ դիմումի էռթյունը,

7) դիմումին կցվող փաստաթորերի ցանկը: Լրացուցիչ պահանջ է ներկայացվում Սահմանադրության 100 հոդվածի 1 և 2 կետերով նախատեսված հարցերով դիմելիս, որի դեպքում նշվում է նաեւ վիճարկվող ակտն ընդունող մարմնի անվանումը, ակտի անվանումը, ընդունման տարին, ամսաթիվը: Օրենքով սահմանվում է նաեւ (հոդվ. 28), թե դիմումին կից ինչ փաստաթորեր կարող են ներկայացվել եւ ինչ կարգով: Այն երկրներում, որտեղ գործում է անհատական դիմումների համակարգը, որպես կանոն, սահմանադրական դատարան քաղաքացիները կարող են դիմել միայն ներպետական այլ հնարավորություններն սպառելուց հետո: Առանձին դեպքերում դրվում է նաեւ այն սահմանափակումը, որ քաղաքացիները պետք է դիմեն փաստաբանի միջոցով: Դիմելու կարգի առանձնահատկություններին է դասվում նաեւ դիմումը հետ վերցնելու կարգը, որը նույնական տարբեր կերպ է լուծվում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ով նախատեսված է, որ սահմանադրական դատարան ներկայացված դիմումը կարող է դիմողի կողմից հետ վերցվել մինչեւ սահմանադրական դատարանի նիստում գործի քննության սկսվելը: Նման կարգն արդեն իսկ ենթադրում է, որ գործի քննությունն սկսելուց հետո, անկախ դիմողի ցանկության ու դիրքորոշման փոփոխության, սահմանադրական դատարանը պարտավոր է շարունակել գործի քննությունը եւ ընդունել որոշում:

#### **4.4. Սահմանադրական դատարանի գործումներության կարգը ու դրա առանձնահատկությունները**

Սահմանադրական դատարանի գործումներության կարգը սահմանվում է օրենքով կամ առանձին հարցեր հստակեցվում են դատարանի կողմից հաստատվող կանոնակարգում:

Այստեղ հստակեցվում են հետեւյալ հարցերը.

- դիմումի ընդունման կարգը,
- դիմումի նախնական ուսումնասիրման կարգը,
- գործը քննության ընդունելու կամ այն մերժելու կարգը,
- գեկուցողների նշանակման եւ գործի քննությունը նախապատրաստելու կարգը,
- դատական նիստի հրավիրման եւ նիստի կազմակերպման կարգը:

Նշված հարցերը լուծման մեջ ընդհանրություններ ունեն տարբեր երկրներում: Յիմնական տարբերությունները պայմանավորված են դատարանների կառուցվածքով (միապալատ կամ բազմապալատ), լիազորություններով ու դիմող սուբյեկտների կազմով:

Հայաստանի Հանրապետությունում այս հարցերը կարգավորված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 7 և 8 գլուխներում: Սասնավորապես, սույն օրենքի 29, 30 և 31 հոդվածները սահմանում են սահմանադրական դատարանի կողմից դիմումի ընդունման, դրա նախնական ուսումնասիրման եւ գործը քննության ընդունելու կարգը: Այս կարգի վրա իր կնիքն է դրեւ այն հանգամանքը, որ ըստ Սահմանադրության 102 հոդվածի՝ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո: Դրանց ելնելով՝ օրենքը նախատեսում է, որ դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի դրա մոլուքագործումց ոչ ուշ, քան 8 օր հետո: Բացի դրանից, դիմումի նախնական ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանի անդամի գեկուցումից հետո դատարանի նախազարդ պարտավոր է երօրյա ժամկետում նիստ հրավիրել եւ լուծել գործը քննության ընդունելու հարցը: Նման որոշումը կայացնելու դեպքում սահմանադրական դատարանը պարտավոր է գործի քննությունն սկսել դիմումի մոլուքագործումց ոչ ուշ, քան 20 օր հետո:

Բնականաբար, նման խիստ սահմանափակումներ չկան բոլոր այն երկրներում, որտեղ դատարանին է թողնված ժամկետների սահմանումը եւ քննության կազմակերպման կարգը:

Սահմանադրական դատարանի ամբողջ գործառնական աշխատանքը կարելի է բաժանել երկու փուլի.

1. դիմումի ընդունում եւ գործի քննության նախապատրաստում,

2. գործի քննություն:

Առաջին խումբ աշխատանքներն իրականացվում են դատարանի կողմից ընդունվող աշխատակարգային որոշումների հիման վրա: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանը գործերի քննության նախապատրաստման եւ քննության հարցերով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ՝ նիստին ներկա անդամների ձայների մեջամասնությամբ (բացառությամբ նույն օրենքով նախատեսված այլ դեպքերի):

Ուշադրության է արժանի այս հարցում Ռուսաստանի Դաշնության փորձը: Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքը (հոդվ. 3) նախատեսում է, որ ցանկացած հարց քննելիս սահմանադրական դատարանը ձեռնպահ պետք է մնա գործի կոնկրետ փաստական հանգամանքների ուսումնասիրումից, դրանք համարելով այլ մարմինների կամ ընդհանուր իրավասության դատարանների գործը: Իրենց հերթին, բոլոր կարգի դատարանները, ցանկացած գործի քննության ժամանակ, եթե կապահանջում են, որ կիրառվող օրենքը կամ իրավանորմը հակասում է: Սահմանադրությանը, դիմում են սահմանադրական դատարան: Մինչեւ սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելը տվյալ գործի քննությունը կասեցվում է:

Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի գործունեությունը կազմակերպվում է իր կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա: Դատարանը երկպալատ մարմին է: Գործերը քննում է ինչպես լիազումար, այնպես էլ պալատների նիստերում: Պալատների անհատական կազմը որոշվում է վիճակահանությամբ:

Լիազումար նիստերում կարող է քննարկվել ցանկացած հարց: Միաժամանակ սահմանադրական դատարանի մասին օրենքի 22 հոդվածով նախատեսվում է, որ պալատների նիստերում նույնպես կարող են քննվել.

- Դաշնության օրենքների, Նախագահի նորմատիվ ակտերի, պառամենտի պալատների, կառավարության կողմից ընդունված ակտերը,
- Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների իշխանության մարմինների նորմատիվ ակտերը,
- Դաշնության եւ նրա սուբյեկտների իշխանության մարմինների միջեւ կմքված պայմանագրերը,
- ուժի մեջ չմտած միջազգային պայմանագրերը:

Պալատների նիստերում կարող են լուծվել նաև դատարանի իրավասությանը վերաբերող վեճերը:

Քաղաքացիների դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը սովորաբար լսվում են պալատների նիստերում:

Գործերի քննությունը կազմակերպելու համար ժամանակը կանոնակարգված է, սակայն ժամկետներն այնպիսի խստություն չունեն, ինչպես Ֆրանսիայում կամ Ճայաստանում: Գործը քննության ընդունելու (կամ չընդունելու) մասին որոշում պետք է կայացվի դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Այնուհետեւ մեկամսյա ժամկետում պետք է կազմակերպվի գործի քննությունը: Քննությունն անընդհատ է մինչեւ գործի վերաբերյալ կամ դրա քննության հետաձգման մասին որոշում կայացնելը: Գործի քննությունը դատարանը կարող է հետաձգել, եթե գտնում է, որ այն բավարար նախապատրաստված չէ կամ կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրման:

Ռուսաստանում կա այն առանձնահատկությունը, որ առանձին հարցերի քննության ժամանակ կարող է դատավորը մասնակից չդարձվել քննությանը եւ որոշում կայացնելուն, եթե նա նախկինում մասնակցել է այն ակտի ընդունմանը, որը դարձել է քննության օբյեկտ, ինչպես նաև այն դեպքերում, եթե դատավորի օբյեկտիվությունը տվյալ հարցով կասկածահարույց է կապված կողմերի հետ նրա բարեկանական կամ ամուսնական կապով: Ննան դեպքերում դատավորը կարող է իմբնաբացարկ հայտնել:

Գործի քննության արդյունքներով, որոշման հետ համամիտ չկինելու դեպքում, դատավորը կարող է ներկայացնել գրավոր հատուկ կարծիք, որը հրապարակվում է որոշման հետ միասին:

Անկախ այն բանից, թե նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով ով է դիմել դատարան, որոշումը նույն բնույթն ունի՝ համընդգրկուն է եւ Սահմանադրությանը չհամապատասխանելու դեպքում կասեցվում է ակտի կամ նորմի գործողությունը:

Ընդհանրապես նորմատիվ ակտերի սահմանադրական վերահսկողությունն իր բնույթով **հետագա** վերահսկողություն է: Բացառություն են կազմուն միայն միջազգային պայմանագրերը:

Թերեւս առանձնահատուկ ուշադրության է արժանի այս երկրի սահմանադրական դատարանի մասին օրենքի 96 հոդվածով սահմանված քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների խախտման հարցերով անհատական ու կոլեկտիվ դիմումների հիման վրա **օրենքի** սահմանադրականության որոշման կարգը (ի տարբերություն շատ երկրների, Ռուսաստանում քաղաքացիներն այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմել չեն կարող):

Անհրաժեշտ է առանձնացնել հետեւյալ հանգամանքները.

- Նախ՝ քաղաքացին, կամ նրանց խումբը, կարող է դիմել սահմանադրական դատարան, եթե նրա սահմանադրական իրավունքը ոտնահարվում է կոնկրետ գործով տվյալ օրենքն իրենց նկատմամբ կիրառելու դեպքում (իրականացվում է կոնկրետ վերահսկողություն),
- Երկրորդ՝ դատարանում քաղաքացին կարող է հանդես գալ իր ներկայացուցչի միջոցով,
- Երրորդ՝ նման հարցերով դիմելու իրավունք ունեն նաեւ օտարերկրացիները,
- չորրորդ՝ ընդհանուր առմանք քաղաքացու դիմումը միայն առիթ է, որպեսզի սահմանադրական դատարանը քննության առարկա դարձնի տվյալ օրենքի սահմանադրականության հարցը: Այս առնչությամբ հաճախ արտահայտվում է այն նտավախությունը, որ կոնկրետ գործի հետ քաղաքացու դիմելու իրավունքը խստիվ չկապելու դեպքում անուղղակի հնարավորություն է ստեղծվում, որ սահմանադրական դատարանն իր հայեցողությամբ նույնպես կազմակերպի գործերի քննություն:

Առավել ամբողջական ներկայացնելով Ռուսաստանի Դաշնության օրինակը, ցանկացանք ընդգծել, որ սահմանադրական դատարանի գործունեության բնույթը ոչ միայն դատավարական առանձնահատկություններով է պայմանավորված, այլև դատարանի լիազորություններով ու կառուցվածքային առանձնահատկությամբ:

#### **4.5. Սահմանադրական դատավարության առանձնահատկությունները**

Միջազգային պրակտիկան վկայում է, որ սահմանադրական դատարաններում գործերի քննությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ, դա պայմանավորված է նրանով, թե ի՞նչ սկզբունքներ են դրվում գործերի քննության հիմքում: Դայատանի պարագայում դրանց թվին դասվում են կոլեգիալության (հոդվ. 19), իրապարակայնության (հոդվ. 20), բանավորության (հոդվ. 21), գրավորության (հոդվ. 21-1), մրցակցության (հոդվ. 21-2), անընդհատության (հոդվ. 22), կողմերի իրավահավասարության (հոդվ. 23) սկզբունքները:

Սովորաբար օրենքը սահմանում է նաեւ տարերե լիազորություններով գործերի քննության առանձնահատկությունները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում դրան է նվիրված ամբողջությամբ 9-րդ գլուխը:

Գործերի քննության առանձնահատկությունները ներառում են.

- ովքե՞ր կարող են այս կամ այն հարցով դիմել սահմանադրական դատարան,
- գործերի նախապատրաստման եւ քննության ժամանակային ի՞նչ սահմանափակումներ են դրվում,
- ովքե՞ր են դատավարության կողմերը, ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ նրանք ունեն դատավարության ընթացքում,
- նյութերի հետազոտման ի՞նչ կարգ է սահմանված,
- գործով որոշումների կամ եզրակացությունների ընդունման ի՞նչ կարգ է սահմանված,
- գործի կարծնան ի՞նչ մեխանիզմներ են գործում եւ այլն:

Հայաստանի պարագայում ուշագրավ են հետեւյալ մոտեցումները.

- Ժամանակային լրացուցիչ սահմանափակում է դրվում մեկ դեպքում՝ Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտմերն անհաղթահարելի ճանաչելու հարցով սահմանադրական դատարան կարելի է դիմել ոչ ուշ, քան Հանրապետության Նախագահի ընտրության օրվանից տասն օր առաջ: Սահմանադրական դատարանը դիմումն ընդունում է նախնական քննարկման, գործը քննում եւ գործով որոշում է կայացնում դիմումն ստանալուց հետո չորսօրյա ժամկետում (հոդվ. 58),

- Սահմանադրության 100 հոդվածի 1 եւ 3-9 կետերով նախատեսված հարցերի լուծման ժամանակ սահմանադրական դատարանում կողմեր կարող են լինել՝

1) սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող պետական մարմիններն ու անձինք,

2) սահմանադրական դատարանում վիճարկվող ակտն իրապարակած պետական մարմինն ու պաշտոնատար անձը,

3) պետական այն մարմինը, պաշտոնատար անձը, կուսակցությունը, որոնց գործողությունների օրինականությունը վիճարկվում է սահմանադրական դատարանում,

4) սահմանադրական դատարանի անդամն՝ Սահմանադրության 100 հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպքերում:

Գործի քննության ընթացքում կողմերն իրավունք ունեն.

1) ծանոթանալ գործի նյութերին, անել քաղվածքներ,

2) ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստաթղթեր,

3) գործի առնչությամբ ներկայացնել իրենց դիրքորոշումը,

4) հարցեր տալ մյուս կողմին, նրա ներկայացուցչին, մասնագետին, վկային.

5) միջնորդություններ հարուցել, առաջարկություններ անել:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածով սահմանված է, որ դատավարության ընթացքում կողմերը պարտավոր են.

1) ներկայանալ սահմանադրական դատարանի իրավերուվ,

2) բացատրություններ տալ եւ պատասխանել հարցերին,

3) սահմանադրական դատարանի պահանջով ներկայացնել գործին առնչվող փաստաթղթեր, տեղեկանքներ, նյութեր,

4) ենթարկել սահմանադրական դատարանում գործերի քննության կանոններին:

Օրենքը սահմանում է նաև (հոդվ. 47), որ կողմերն իրավունք չունեն իրենց ելույթներն օգտագործել քաղաքական հայտարարությունների համար:

Օրենքով որոշարկված է նաև նիստի ընթացակարգը (հոդվ. 44), ըստ որի նախագահողը, նշանակված ժամին, հավաստիանալով, որ նիստն իրավագոր է, բացում է այն եւ հայտարարում քննության ենթակա գործը: Նախագահողը պարզում է կողմերի եւ իրավիրկած անձանց ներկայությունը եւ ստուգում կողմերի ներկայացուցիչների լիազորությունները, այնուհետեւ քննարկման է դնում գործի քննությունն սկսելու հարցը: Եթե դատարանը հնարավոր չի համարում սկսել գործի քննությունը, որոշում է կայացնում այն հետաձգելու մասին: Քննությունն սկսելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո նախագահողը կողմերին պարզաբանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Սահմանադրական դատարանի նիստում գործի քննությունն սկսվում է գեկուցողի հաղորդմամբ:  
Ձեկուցողին կարող են հարցեր տալ սահմանադրական դատարանի անդամները:

Ձեկուցման ավարտից հետո սահմանադրական դատարանը լսում է գործի նյութերի հետազոտման կարգի մասին դատարանի անդամների կարծիքը, կողմերի առաջարկությունները եւ այդ կապակցությամբ ընդունում է որոշում:

Օրենքով սահմանվում է նաեւ սահմանադրական դատարանում մասնագետների եզրակացությունների եւ վկաների բացատրությունների ներկայացման կարգը:

Սահմանադրական դատավարության բնորոշ առանձնահատկություններից է այն, որ դատավարության օբյեկտը ոչ թե օրենքի կիրառումն է, կոնկրետ իրավահարաբերությունները կամ իրավախսուման հանգամանքները, փաստերը, այլ նորմատիվ ակտը, օրենքի, որոշման դրույթները, որոնց սահմանադրականության բացահայտման խնդիրն է դրված:

Նաեւ այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում վեճերի հարց է քննում, ապա նրա խնդիրը ոչ թե գործի հանգամանքներին գնահատական տալն է, այլ գործողության սահմանադրականության որոշումը:

Սահմանադրական դատավարության հետաքրքիր առանձնահատկություններ կամ տարրեր երկրներում: Օրինակ, Ավստրիայում 1946 թ. հոկտեմբերի 3-ին սահմանադրական դատարանը հաստատել է իր գործունեության կանոնակարգը, որն անփոփոխ գործում է առ այսօր: Այդ կանոնակարգը բաղկացած է 16 հետեւյալ բաժիններից. 1. դեկավարությունը, 2. ռեֆերենտները (քննող դատավորները), 3. ամհատական կազմով Սենատը, 4. դատարանի նիստը, 5. նախարարնական գործընթացը, 6. դատարանի անդամների հրավիրումը դատավարությանը եւ նիստերին, 7. արձակուրդը, 8. կողմերի հրավիրումը դատավարությանը, 9. դատավարությունը եւ նիստերը, 10. քննարկումը եւ քվեարկությունը, 11. որոշումները, 12. ուղղումները, 13. առարկությունների ընդունումը, 14. քաղվածքներ արդարադատության մասին, 15. դատարանի գործունեության մասին տարեկան գեկույց, 16. եզրակակի դրույթներ: Վերջինում հիմնականում տրվում են արտասահմանյան կազմակերպությունների հետ դատարանի փոխհարաբերությունները:

Սահմանադրական դատարանում կողմերը կարող են իրաժարվել մասնակցել նիստին: Դա որեւէ կերպ չի խանգարում դատարանի որոշման կայացմանը:

Սահմանադրական դատարանի հեղինակության եւ դատական պրոցեսը բնականոն իրականացնելու համար այս երկրում նախագահողին իրավունք է վերապահված տեղում կիրառել վարչական տույժ՝ 500- 1500 շիլինգի չափով եւ (կամ) կալանք՝ 3-9 օրով: Առավել խիստ պատիժներ են կիրառվում վիրավիրական խոսքերի, ժամանակի կանխամտածված զգացման, ոչ ճիշտ ցուցմունքներ տալու համար: Գործի քննության ընթացքում օրենքով նախատեսված չէ դատարանի անդամի բացարկի կամ ինքնարաբարկի հնարավորություն: Սակայն դատարանը դրանիվակ նիստով կարող է որոշել եւ թույլ չտալ իր անդամներ մասնակցել կոնկրետ գործի քննությանը, եթե նա ուղղակի առնչություն է ունեցել տվյալ գործի հետ:

Սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում սահմանված կարգով պաշտոնական հրապարակման օրվանից: Միաժամանակ, դատարանն իրավասու և սահմանել իրավական ակտերի ուժը կորցնելու որոշմամբ նախատեսված այլ ժամկետ:

Ուշադրության է արժանի նաեւ այն, որ յուրաքանչյուր տարվա գործունեության արդյունքներով սահմանադրական դատարանը կազմում է ամփոփ տեղեկատվություն եւ այն ներկայացնում Դաշնության Կանցլերին: Այն բովանդակում է նաեւ սահմանադրական արդարադատության իրականացման վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ:

Գերմանիայում սահմանադրական դատարանը գործում է Սահմանադրության, սահմանադրական դատարանի մասին 1951 թ. ընդունված (հետագա փոփոխություններով, մասնավորապես՝ 1969, 1993թթ.) օրենքի եւ իր կանոնակարգի (ընդունված 1986թ. եւ վերանայված 1989 թ.) հիման վրա: Դատարանը գործում է անընդհատ: Պալատներից մեկի աշխատանքները դեկավարում է դատարանի նախագահը, նյուսինը՝ փոխնախագահը: Որոշումները սովորաբար ընդունվում են ծայների մեծամասնությամբ: Եթե ծայները հավասար են (պալատներում 4:4 հարաբերակցություն է), ապա դադարեցվում է գործի քննությունը:

Կարեւոր է ընդգծել, որ հիմնականում գործերի քննությունն իրականացվում է գրավոր: Դատարանն իրավունք ունի կազմակերպել նաեւ բանավոր լսումներ՝ եթե կողմերը չեն առարկում: Անհատական դիմումներով չեն կարող պահանջվել բանավոր լսումներ, դրանց քննությունը կազմակերպվում է գրավոր: Ի դեպ, անհատական գանգատներ կարող են ներկայացվել վիճարկվող ակտը կամ դատական որոշումն ընդունելուց հետո մեկամսյա ժամկետում: Եթե բողոքարկվում է օրենքը, ապա այդ ժամկետը մեկ տարի է: Օրենքով սահմանված է, որ սահմանադրական դատարան անհատական գանգատ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, եթե դատական կարգով հարցի լուծման այլ հնարավորությունները լրիվ սպառվել են: Օրենքը պահանջում է նաեւ, որ կողմերը դատարան ներկայանան իրավաբանների միջոցով:

Ուշադրության են արժանի նաեւ սահմանադրական դատավարության որոշ առանձնահատկություններ Պորտուգալիայում: Մասնավորապես, գործով գեկուցողներն ընտրվում են վիճակահանությամբ եւ պարտավոր են ներկայացնել նաեւ որոշման նախագիծ: Որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Վերացական վերահսկողության հարցերով որոշումներն ընդունվում են դատարանի ամբողջ կազմով, իսկ կոնկրետ վերահսկողության հարցերով՝ քննությունը կազմակերպում եւ որոշում են ընդունում 6-ական անդամից կազմված պալատները: Նախատեսված է նաեւ, որ նախագահը կարող է որեւէ կոնկրետ գործի քննությունը նույնպես տեղափոխել լիազումար նիստի: Կողմերը դատարան են ներկայանում փաստարանի միջոցով, գործի քննությունը գրավոր է, չի կազմակերպվում բաց դատավարություն:

Դատարանում երկու մշտական ներկայացուցիչ ունի դատախազությունը: Եթե կոնկրետ գործերով տվյալ իրավանորմը երեք անգամ ճանաչվել է Սահմանադրությանը չիամապատասխանող, ապա դատարանում դատախազության ներկայացուցիչները կարող են սկսել վերացական վերահսկողության ընթացակարգը: Այս դեպքում դատարանի վճիռն ունենում է համընդգրկում բնույթ եւ տվյալ նորմը դադարում է գործելուց: Այս երկրում նույնպես դատարանին իրավունք է վերապահված ինքնուրույն որոշել իր որոշումների ուժի մեջ մտնելու ժամկետները:

#### **4.6. ՀՀ սահմանադրական դատարանի լիազորություններն ու գործունեության կարգը**

ՀՀ Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը, որի կազմում դիտարկվում է նաեւ սահմանադրական դատարանը:

Սահմանադրության 100 հոդվածով նախատեսվում է, որ սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով.

- 1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.
- 2) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը.
- 3) լուծում է հանրաքվեների, Հանրապետության նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը.
- 4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները (նման իրավասություն ամրագրված է միայն ֆրանսիայի Սահմանադրությամբ).
- 5) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.
- 6) եզրակացություն է տալիս Սահմանադրության 55 հոդվածի 13 եւ 14 կետերով նախատեսված միջոցառումների մասին (13 կետը նախագահի այն իրավասությունն է, եթե նա որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում հայտարարում է ռազմական դրություն եւ կարող է հայտարարել ընդհանուր կամ նախակի գորահավաք: 14 կետն այն իրավասությունն է, եթե նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ

վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում ժողովողին:

7) Եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:

8) Եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Սահմանադրության 101 հոդվածով սահմանված են սահմանադրական դատարան դիմող սուբյեկտները:

Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Հանրապետության Նախագահը.

2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը.

3) Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքում (59 հոդվածում նախատեսվում է՝ Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհադրահարելի խոչընդոտների առկայության դեպքում Ազգային ժողովը կառավարության առաջարկով եւ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդիանուր թվի ծայների առնվազն երկու երրորդորոշ որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին):

Սահմանադրության 57 հոդվածով նախատեսված է, որ Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:

Հանրապետության Նախագահի պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդիանուր թվի ծայների մեծամասնությամբ ընդունած որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդիանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով:

Սահմանադրությունն ամրագրել է, որ սահմանադրական դատարանը գործեր քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Ի տարբերություն բազմաթիվ երկրների, Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված է նաև (102 հոդված), որ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում իրապարակնան պահից: Ընդ որում, սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածի 1 - 4 կետերով նախատեսված հարցերը լուծում է անդամների ընդիանուր թվի ծայների մեծամասնությամբ, իսկ 5 - 9 կետերով նախատեսված հարցերը՝ առնվազն երկու երրորդով:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում սահմանվում են նաև սահմանադրական դատարանում գործերի քննության կոնկրետ առանձնահատկությունները (գլուխ 9):

## ԳԼՈՒԽ V.

### ՍԱՐԱՎԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՉՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Թեմայի հիմնական հարցերն են.

- ի՞նչ որոշումներ է ընդունում սահմանադրական դատարանը,
- ի՞նչ իրավական հետեւանքներ ունեն սահմանադրական դատարանի որոշումները,
- ինչպես եւ ո՞ր դեպքերում է սահմանադրական դատարանն ընդունում եզրակացություններ, ինչպիսի՞ն են դրանց իրավական հետեւանքները,
- սահմանադրական դատարանների ակտերի ընդունման հարցում ի՞նչ առանձնահատկություններ կան տարբեր երկրներում,
- սահմանադրական դատարանների ակտերի իրավական հետեւանքների առնչությամբ ի՞նչ էական առանձնահատկություններ կան տարբեր երկրներում:

#### **5.1. Սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց իրավական հետեւանքները**

Սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների բնույթով է մեծապես պայմանավորված պետական իշխանության համակարգում նրանց տեղն ու դերը եւ Սահմանադրության գերակայությունն ապահովելու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանի որոշումը, որպես կանոն, պարտադիր է կատարման համար եւ վերանայման ներակա չէ: Սակայն որոշ երկրներում պառլամենտը կարող է վերանայել սահմանադրական դատարանի որոշումները (Նամիբիա, որոշ իմաստով՝ Ռումինիա, Էկվադոր, Եթովպիա):

Մոնղոլիայում նույնապես սահմանադրական դատարանի որոշման նկատմամբ պառլամենտն ունի վետոյի իրավունք: Եթե բարձրագույն պետական խորալը մերժում է դատարանի որոշումը, դատարանը նորից է անդրադարձնում եւ ընդունում վերջնական որոշում (Ա. 66 հոդված): Ղազախստանում վետոյի իրավունք ունի Նախագահը, որը հաղթահարվում է ծայների 2 / 3 -ով: Լեհաստանում այս համակարգը վերացվեց 1997թ. Սահմանադրությանը:

Պարտադիր որոշումներն իրենց հերթին լինում են երկու կարգի՝ նախ. որ ունեն համընդհանուր բնույթ եւ պարտադիր են բոլորի համար եւ, երկրորդ՝ հարաբերական ներազդեցություն ունեն եւ վերաբերում են միայն տվյալ գործի հետ առնչվող իրավասությեկտներին:

Անհրաժեշտ է հատուկ կարեւորել սահմանադրական դատարանների որոշումների ներազդեցության հանգամանքը: Կցանկանայինք այս հարցը պարզաբանել երկու օրինակով: Նախ. Անդաշ Շայոյի այն ծեւակերպմամբ, որ արել է Հունգարիայի սահմանադրական դատարանի որոշումների առումով՝ սոցիալ-տնտեսական իրավունքների առնչությամբ: Բանաձեւումն հետեւյալն է. «Սոցիալ-տնտեսական իրավունք + սահմանադրական դատարան = պետական սոցիալիզմի ռեժիմիկ»<sup>22</sup>: Հարցադրման ամբողջ ինաստն այն է, որ հատկապես նորանկախ երկրներում առանձնահատուկ կարեւորություն ու նոր երանգ է ստանում այն մարմնի որոշումը, որը խնդիրն վերջնական լուծում է տալիս, եւ որ այդ որոշումը վերանայման ներակա չէ: Տվյալ պարագայում, բացարձակեցնելով օրենքի տառը (ընդ որում, նաեւ այն օրենքի, որն իր հիմնադրույթներով արդեն իսկ հակասության մեջ է նոր իրականության փիլիսոփայության եւ բարեփոխումների տրամաբանության հետ, սակայն, հաճախ նաեւ զուտ տեխնիկական պատճառներով, փոփոխությունների հերթը դրան չի հասել), անուղղակի ծեւով թելադրվում է մի մոտեցում, որն իր հիմքում հակասության մեջ է մտնում հասարակական հարաբերությունների վերափոխումների գործընթացի եւ սահմանադրորեն ամրագրված նոր հարաբերությունների բնույթի հետ: Այս խնդիրը, ցավոք, քիչ է ուսումնասիրված եւ անհրաժեշտ խորությամբ չի արտացոլված նորանկախ սահմանադրական արդարադատության մարմինների նախանքած ընդունված օրենքներում: Նման իրավիճակը հաճախ կարող է հանգեցնել նաեւ ծայրահեղ եւ ոչ ճիշտ լուծումների: Օրինակ, Հունգարիայի նոր Սահմանադրության նախագծով, վիճակից ելք գտնելու համար, նախատեսվում է վերացնել քաղաքացիների՝ սահմանադրական դատարան անմիջական դիմելու իրավունքը: Նման մոտեցմանն իր վերաբերմունքն արտահայտեց Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի

հանձնաժողով) իր 1997թ. մարտի 7-ի նիստում, որին մասնակցում էր նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակությունը, եւ այդ քայլը համարվեց անթույլատրելի ու լուրջ նահանջ:

Կցանկանայինք բերել նաեւ երկրորդ օրինակը: Այն վերաբերում է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 1997թ. փետրվարի 18-ի որոշմանը՝ կառավարության 1995 թ. փետրվարի 28-ի թիվ 197 որոշման սահմանադրականության վերաբերյալ<sup>23</sup>\* : Բանն այն է, որ սահմանադրական դատարանը, համոզված լինելով, որ կառավարության որոշումը բովանդակում է Սահմանադրությանը չհամապատասխանող նորմեր, նույնքան համոզված էր նաեւ, որ այդ որոշման գործողության անմիջական կասեցումն իր հերթին (կապված բյուջեի եկամտային մասի սպասվելիք փոփոխությունների հետ), կարող է առաջ բերել հակասահմանադրական իրավիճակ:

Սահմանադրական դատարանը ելքը տեսել է նրանում, որ կառավարության որոշումն ուժը կորցրած է ճանաչվում սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Ննան որոշումը կարելի է, թերեւս, համարել նաեւ փոփոխողական եւ տիպական հատկապես անցման փուլի համար: Սակայն այս հարցադրման իմաստը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանները կամա թե ականա անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն նաեւ իրենց որոշումների հնարավոր հետեւանքներին ու հասարակական գործընթացների վրա դրանց ուղղակի եւ ածանցյալ ազդեցությունների վրա: Այս նկատառումներով Լեհաստանի նոր Սահմանադրությունը նախատեսեց (հոդվ. 190), որ սահմանադրական տրիբունալը ինքը կարող է որոշել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ուժը կորցնելու ժամկետը եւ այն կարող է երկարացնել օրենքի սահմանադրականության որոշման պարագայում մինչեւ 18 ամիս, այլ նորմատիվ ակտերի առնչությամբ՝ մինչեւ 12 ամիս:

Միջազգային պրակտիկայում փորձ է կատարվում օգնել նորանկախ երկրների սահմանադրական դատարաններին՝ կայացման եւ հատկապես անցումային փուլի խնդիրներին ճիշտ լուծումներ տալու հարցում: Յսկայական փորձ է կուտակել այս առումով Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը (ժողովրավարություն՝ իրավունքի միջոցով), որը տարբեր երկրներում կազմակերպում է դատական սահմանադրական վերահսկողության հիմնահարցերին նվիրված սեմինարներ, օրենքների, դրանց նախագծերի փորձաքննություն, պրոբեմային քննարկումներ եւ այլն: Սակայն աննախարեա էր Յանձնաժողովի 1997թ. մարտի 7-ի նիստում ընդունած որոշումը: Յարցը վերաբերում էր Խորվաթիայի սահմանադրական դատարանին: Որոշման եռթյունն այն էր, որ Եվրախորհրդուրդը խորվաթիայի սահմանադրական դատարանի կողմից ներկայացված 3 եւ Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված 3 թեկնածուներից ընտրում է երկուսին եւ որպես մշտական դիտորդ է նշանակում խորվաթիայի սահմանադրական դատարանում: Դիտորդներին իրավունք է տրվում մինչեւ որոշման ընդունումը կարծիք արտահայտել, իսկ որոշումն ընդունելուց հետո՝ հանդես գալ գրավոր հատուկ կարծիքով: Չանդրադառնալով հարցի մանրամասներին, հատկապես այն հանգամանքին, որ սա շատ վտանգավոր նախարեա է ու կարող է քաղաքական գործոն դառնալ, կցանկանայինք միայն շեշտել, որ ճգնաժամային իրավիճակներում եւ հանակարգային վերափոխումների խնդիրները լուծելիս սահմանադրական վերահսկողությունն ավելի է կարեւորվում, իսկ որոշումները կարող են լինել բախսորոշ, եւ պահանջում են զգույշ ու հավասարակշիռ մոտեցում:

Յաճախ նաեւ կարծիք է հայտնվում, որ անցման շրջանի համար սահմանադրական նորմերը նույնպես պետք է ունենան ժամանակավոր բնույթ եւ չկաշկանդեն հատկապես տնտեսական բնագավառում ակտիվ բարեփոխումների իրականացում<sup>24</sup>. Բնականաբար, նման իրավիճակները դժվարացնում են սահմանադրական դատարանների խնդիրը եւ նոր երանգներ են հաղորդում Սահմանադրության տարին կամ ոգուն նախապատվություն տալու հին բանավեճին: Մեր կարծիքով, առաջնային է դառնում սահմանադրական դատարանների հարաբերականորեն «անկաշկանոր» գործունեության ապահովման եւ Սահմանադրության մեկնաբանության ուղղակի իրավասություն ունենալու հարցը: Սակայն տվյալ պարագայում պետք է բացառվի դատարանի կողմից իր նախաձեռնությամբ որեւէ հարցով գործ քննելու եւ որոշում կայացնելու հնարավորությունը: Յակառակ պարագայում լիովին կարդարացվի ֆրանսիացի իրավագետ Լեշարյերի արտահայտությունն այն մասին, որ «Սահմանադրական խորհրդը ֆրանսիական սահմանադրական իրավունքի ամենից ավելի ծիծառելի է քանի Անգամ առավել պահպանողական խնդիրը չէին կարող հնարել վետոյի իրավունք եւ այն վերապահել բարեհած հովանավորչության շնորհիվ կամայականորեն ընտրված ու նշանակված ոչ որի առջեւ պատասխանատվություն չկրող ինը պարուների»<sup>25</sup>. Մեր կարծիքով, չպետք է ընկնել նաեւ նման ծայրահեղությունների մեջ եւ հաշվի պետք է առնել, որ նույնիսկ օրինաստեղծ աշխատանքի նկատմամբ սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս սոսկ որպես ժողովրդի ինքնիշխանությունն ապահովելու միջոց:

Սահմանադրական վերահսկողության պրակտիկայում չափազանց մեծ նշանակություն ունի դատարանի կողմից որոշում կայացնելու ժամանակամիջոցի կարգավորման խնդիրը: Ինչպես արդեն նշել ենք, Յայաստանի Յանրապետության Սահմանադրության 102 հոդվածի առաջին մասով միանշանակ սահմանված է. որ «Սահմանադրական դատարանը ընդունում է որոշումներ եւ

Եզրակացություններ՝ դիմում ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օր հետո»: Նման շրջանակներում է գործում նաեւ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը: Սակայն Ֆրանսիայի պարագայում դա հնարավոր է դառնում այն պատճառով, որ վերահսկողությունն իրականացվում է հիմնականում գորավոր սկզբունքով, չկա մրցակցային դատավարություն, որոշումը կայացվում է դրամիկ քննարկումների արդյունքով: Բոլոր այն երկրներում, որտեղ որոշումը կայացվում է կողմերի մասնակցությամբ եւ դատավարության արդյունքով, որպես կանոն, ժամկետային նման խիստ սահմանափակումներ չեն դրվում: Կան նաեւ ծայրահետ օրինակներ, երբ, ասենք, ԱՄՆ-ի Գերագույն դատարանը որոշումը կայացրել է գործի քննությունից մի քանի տարի հետո: Տիրապետող եւ, թերեւս, ծիշտ մոտեցումն այն է, երբ ժամկետի որոշման հարցում սահմանադրական դատարանին որոշակի ինքնուրույնություն է տրվում: Նման իեպքերում գործնականում միջին ժամկետը տատանվում է 5-6 ամսվա շրջանակում: Դա է վկայում Իտալիայի, Գերմանիայի, Ալովակիայի, Ալովենիայի, Յունագարիայի Ռուսաստանի եւ մի շարք այլ երկրների փորձը:

Կարեւոր է նաեւ տարբերակում մտցնել առանձին լիազորություններն իրականացնելիս: Օրինակ, Հայաստանն այն ոչ մեծ թվով երկրներից մեկն է, որտեղ սահմանադրական դատարանին տրված է պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը լուծելու իրավասություն: (ՀՀ Սահմանադրություն, հոդված 100, կետ 3): Միաժամանակ, դատարանը որոշում պետք է կայացնի բանավոր քննությամբ, դրեբաց նիստում, լրիվ կազմով (ապահովելով քվորում) եւ 30 օրվա ընթացքում: Տեսականորեն չի բացառվում, որ ընտրություններից հետո միաժամանակ սահմանադրական դատարան դիմեն պատգամավորության հարցուրավոր թեկնածուներ: Անխուսափելիորեն կամ առաջանալու է փակուղային վիճակ, կամ դատարանը դրսեւրելու է խիստ ծեւական մոտեցում, որը բացասաբար կանդրադառնա նրա հեղինակության վրա: Սրանք հարցեր են, որոնք, մեր պարագայում, ընդհուպ սահմանադրական հստակեցնան կարիք ունեն:

Առանձնահատուկ կարեւորության խնդիր է սահմանադրական դատարանների որոշումների ոչ միայն վերջնական լինելու եւ անփոփոխելիության հանգամանքը, այլև այն, որ, ինչպես նշել ենք, այդ որոշումներն իրավունքի կարեւոր աղբյուր են դաշնում: Այս առումով, վճռորոշը ոչ միայն դատարանի վերջնական եզրականգումն է՝ որոշման ծեւով, այլև իրավական դիրքորոշումը, որն արտահայտվում է նախարանում: Ուստի սահմանադրական դատարանի որոշումը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ եւ հաշվի նստել դրանում ամրագրված իրավական դիրքորոշման հետ:

## 5.2. Սահմանադրական դատարանի եզրակացությունները եւ դրանց իրավական հետեւանքները

Սահմանադրական դատարանը գործի քննության արդյունքով մի շարք դեպքերում ընդունում է եզրակացություններ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածի 5-8 կետերում թվարկված հարցերի վերաբերյալ ընդունում է եզրակացություններ: Բացի դրանց, Սահմանադրության 102 հոդվածով նախատեսված է, որ այդ հարցերը սահմանադրական դատարանը լուծում է դատարանի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով:

Նման մոտեցումը նախ, պայմանավորված է նրանով, որ գործ ունենք պետության ու հասարակության համար բացառիկ կարեւորության խնդիրների հետ եւ նվազագույնի պետք է հասցվի սխալի աստիճանը: Միաժամանակ, հարցը վերաբերում է ճգնաժամային իրավիճակներին, որտեղ ազդեցություն ունի նաեւ ժամանակի գործոնը, եւ պետք է արագ ու անսխալ որոշում կայացնել:

Իրավական հետեւանքների առումով էապես տարբերվում են սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացությունները: Եթե սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են նտնում իրապարակման պահից ու պարտադիր են կատարման Հանրապետության տարածքում, ապա եզրակացությունները դառնում են կողմնորոշչի Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 100 հոդվածի 5-8 կետերում նշված հարցերով որոշում կայացնելու համար: Սակայն կարեւոր է այն պարագան, որ դատարանի եզրակացությունը ոչ թե խորհրդատվական նշանակություն ունի, այլ օրենսդիր մարմինը դատարանի բացասական եզրակացության դեպքում դրան հակառակ որոշում ընդունել չի կարող:

Օրենքը սահմանում է թե որոշման եւ թե եզրակացության ծեւակերպման նկատմամբ որոշակի պահանջներ:

Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետեւյալ տեղեկությունները (հոդվ. 68):

1) որոշման կամ եզրակացության անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ վայրը,

- 2) կողմերի մասին անհրաժեշտ տվյալներ,
  - 3) քննվող հարցը, առիթները եւ հիմքերը,
  - 4) Սահմանադրության այն հոդվածը, որի համաձայն դատարանն իրավասու է քննել տվյալ գործը,
  - 5) դիմումի համառոտ բովանդակությունը,
  - 6) փաստական եւ այլ հանգամանքները, որոնք հետազոտվել են դատարանի կողմից,
  - 7) Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի մասին օրենքի այն հոդվածները, որոնցով դեկավարվել է դատարանը որոշում կամ եզրակացություն ընդունելիս,
  - 8) դատարանի կողմից ընդունված որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող փաստարկները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այն փաստարկները, որոնք հերքում են կողմերի պնդումները,
  - 9) որոշման կամ եզրակացության ձեւակերպումը:
- 10) որոշման վերջնական լինելու եւ վերանայման ենթակա չլինելու մասին նշումը.
- 11) որոշման՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու մասին նշումը:

Եզրակացություններ տալու համար գործերի քննության առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 59 - 62 հոդվածներում:

### **5.3. Սահմանադրական դատարանների կողմից ընդունվող ակտերի եւ դրանց իրավական հետեւանքների առանձնահատկությունները տարբեր երկրներում**

Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կողմից ակտերի ընդունման կարգի եւ դրանց իրավական հետեւանքների գգալի առանձնահատկություններ կան տարբեր երկրներում: Այստեղ մենք կանդրադառնանք բնորոշ եւ ուշադրության արժանի առանձնահատկություններին: Օրինակ, Ավստրիայում դատարանն իր անդամներից 3 տարի ժամկետով ընտրում է մշտական գեկուցողներ, որոնք, նախագահի հանձնարարությամբ, նախապատրաստում են գործի քննությունը: Սովորաբար որոշումներն ընդունվում են ձայների մեջամասնությամբ, իսկ նախագահի ձայնը, ձայների հավասարության դեպքում, վճռական չէ:

Ուշադրության արժանի առանձնահատկություն է այն, որ, չնայած դատարանը միապալատ է եւ որոշումներն ընդունում է ամբողջ կազմով, սակայն կան հարցեր, որոնք կարող են քննել եւ որոշում ընդունել չորս դատավորներ: Այս մոտեցումը միանգամայն կիրառելի կարող էր լինել Հայաստանի պարագայում՝ սահմանադրական դատարանում պատգամավորների ընտրությունների հետ կապված վեճերը լուծելիս:

Գերմանիայում սահմանադրական դատարանը գործում է Սահմանադրության, սահմանադրական դատարանի մասին 1951 թ. ընդունված (հետագա փոփոխություններով, մասնավորապես՝ 1969, 1993թ.) օրենքի եւ իր կանոնակարգի (ընդունված 1986թ. եւ վերանայված 1989 թ.) հիման վրա: Դատարանը գործում է անընդհատ: Հետաքրքրություն է ներկայացնում դատարանի կողմից ընդունվող որոշումների բնույթը: Սահմանադրական դատարանը կարող է իրավանորմ համարել ուժը կորցրած, եւ այդ որոշումը կարող է ունենալ նաև հետադարձ ուժ: Միաժամանակ, դատարանը կարող է գտնել, որ իրավանորմ չի համապատասխանում Սահմանադրությանը, եւ այդ դեպքում տվյալ նորմը շարունակում է գործել մինչեւ օրենսդրի կողմից դրա վերանայումը: Ընդ որում, սահմանադրական դատարանը կարող է վերանայման համար ժամկետ սահմանել (սահմանադրական դատարանի մասին օրենքի 31 եւ 79 պարագրաֆներ): Սահմանադրական դատարանը կարող է նաև չեղյալ հայտարարել սովորական դատարանի որոշումը եւ գործն ուղարկել այլ դատարան (որպես կանոն, սահմանադրական դատարանը սովորական դատարանների գործերով որոշումներ չի կայացնում):

Իտալիայի սահմանադրական դատարանը Հիմնական օրենքի 75 հոդվածի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով նախադեպերը (մասնավորապես դա վերաբերում է 1976թ. ընդունած թիվ 16 որոշմանը), կարող է որոշել առանձին նորմերի արգելման հարցերով հանրաքվե կազմակերպելը թույլ տալու հարցը (նկատի պետք է ունենալ, որ շատ երկրների սահմանադրական դատարաններ, որոնց գործերում որոշումներ չի կայացնում):

մասնավորապես նաեւ ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը, գտնում են, որ իրենք իրավասու չեն քննության առնելու հանրաքվեների անցկացման հետ կապված հարցերը):

Ֆրանսիայում որոշման ընդունման ժամկետը 1 ամիս է (կառավարության պահանջով կարող է իջեցվել մինչեւ 8 օր): Խորհուրդը որոշումներ է ընդունում քվորումի առկայության (անդամներից 7-ի մասնակցության) դեպքում: Որոշումն ընդունվում է գրավոր բնության եւ կողմների մասնակցության արդյունքով: Ընդ որում, նախատեսված չէ հատուկ կարծիքի իրավունքը եւ քննարկումների ու քվեարկության արդյունքները չեն հրապարակվում:

Այն երկրներում, որտեղ նախատեսված է սահմանադրական դատարանի անդամի հատուկ կարծիքի իրավունքը, հատուկ կարծիքը հրապարակվում է որոշման հետ մեկտեղ (Իսպանիա, Ռուսաստան եւ այլն):

Իսպանիայում սահմանադրական դատարան իրավասու է հետաձգել որոշման ընդունումը (թե՝ լիազումար նիստում եւ թե պալատներում), հանձնարարել լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնել՝ այդ ընթացքում կասեցնելով վիճարկվող նորմի գործողությունը (ոչ ավելի, քան հինգ ամսով): Ընդ որում, կոմկրետ գործերով նորմատիվ ակտերի սահմանադրականության վերաբերյալ ընդունված որոշումները նույնպես ունեն համընդգրկուն պարտադիր բնույթ:

Թուրքիայում սահմանադրական դատարանը գործով որոշում պետք է կայացնի եւ այն հրապարակի դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան հինգ ամսվա ընթացքում: Եթե դիմումն ստացվել է ընդհանուր իրավասության դատարանից եւ այդ ժամանակամիջոցում որոշում չի կայացվել, ապա առաջին ատյանի դատարանը գործը պետք է ավարտի օրենսդրությանը համապատասխան: Սակայն, եթե սահմանադրական դատարանի կողմից գործով կայացվել է վերջնական որոշում, ապա առաջին ատյանի դատարանը պարտավոր է դեկավարվել դրանով: Օրենսդրության միեւնույն դրույթի վերաբերյալ կրկնակի դիմում չի կարող ներկայացվել, եթե 10 տարի չի լրացել սկզբնական դիմումը ներժելու մասին սահմանադրական դատարանի որոշման պաշտոնական հրապարակումից հետո:

Այս երկրի Սահմանադրության 153 հոդվածով որոշարկվում են սահմանադրական դատարանի որոշումների բնույթը եւ հրապարակման կարգը: Նախատեսվում է, որ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: Իրավական ակտի ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշումները չեն կարող հրապարակվել առանց պատճառների գրավոր հիմնավորման: Օրենքների, օրենքի ուժը ունեցող դեկրետների կամ դրանց առանձին դրույթների ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հարցի քննության ընթացքում սահմանադրական դատարանը որպես օրինաստեղծ հանդես գալ չի կարող, եւ չի կարող իր որոշմամբ նոր իրավակիրառություն հաղորդել վիճարկվող ակտին:

Օրենքը, օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերը կամ թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընթացակարգային կանոնները կամ դրանց առանձին դրույթներ դադարում են գործելուց՝ դրանց ուժը կորցնելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումների պաշտոնական հրատարակման օրվանից: Անհրաժեշտության դեպքում սահմանադրական դատարանը կարող է որոշել նաեւ իրավական ակտի ուժը կորցնելու վերաբերյալ իր որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը: Այդ ժամկետը որոշման պաշտոնական հրատարակման օրվանից մեկ տարվանից ավելի լինել չի կարող: Սահմանադրական դատարանի որոշումները պետք է հրապարակվեն անհապաղ, տպագրվեն պաշտոնական թերթում, եւ պարտադիր են կատարման օրենսդիր, գործադիր ու դատական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների եւ իրավաբանական անձանց համար:

Դատարանի գործունեության առանձնահատկություններից, թերեւս, կարելի է առանձնացնել նաեւ այն, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության վերացական վերահսկողության պարագայում դիմում կարող է ներկայացվել տվյալ ակտի հրապարակումից հետո 60 օրվա ընթացքում:

Ինչպես արդեն նշել ենք, ի տարբերություն շատ երկրների, Ռումինիայում օրենքների եւ պառլամենտի որոշումների սահմանադրականության հարցով սահմանադրական դատարանի որոշումը վերջնական չէ: Այն կարող է քննության առնվել պառլամենտի կողմից: Վերջնինիս յուրաքանչյուր պալատի ձայների 2/3-ով իր որոշման վերահսկողության դատարանը այլեւս իրավասու չէ անդրադառնալ տվյալ ակտի սահմանադրականության հարցին: Կա մեկ բացառություն: Վերջնական է սահմանադրական դատարանի որոշումը պառլամենտի պալատի կանոնակարգերի հարցով: Այս դեպքում պառլամենտն իրավասու չէ քննարկման առարկա դարձնել դատարանի որոշումը: Նման հարց առաջացավ 1994 թվականին, եթե պառլամենտի երկու պալատների նախագահներն առանձին-առանձին դիմեցին սահմանադրական դատարան՝ իրենց պալատների կանոնակարգերի սահմանադրականության հարցերով: Դատարանը երկու դեպքում էլ գտավ, որ դրանք բովանդակում են հակասահմանադրական նորմեր (պատգամավորների պալատի կանոնակարգի 213 դրույթներից

25-ը եւ Սենատի կանոնակարգի 184 դրույթներից 29-ը), եւ պառլամենտնը ստիպված եղավ ակտերը համապատասխանեցնել Սահմանադրությանը:

Ուստաստանի Դաշնությունում սահմանադրական դատարանի մասին օրենքով հստակ սահմանված է (հիդված 79), որ սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում դատարանում հրապարակելուց անմիջապես հետո: Գործնականում ձեւավորվել է այնպիսի կարգ, երբ Ուստաստանի սահմանադրական դատարանը հաճախ է իր որոշումներում սահմանում դրանց կատարման կարգ, կամ հանձնարարում է համապատասխան մարմիններին կատարել իրենց իրավասության շրջանակներում այս կամ այն գործողությունը: Դատկապես կան նման դրույթներ՝ ուղղված պառլամենտին օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու կամ հարցին օրենսդրական լուծում տալու պահանջով: Նման մոտեցումը միարժեքորեն չի պաշտպանվում, քանի որ կան նաև կարծիքներ, որ դատարանն ստանձնում է օրենսդիրի ֆունկցիաներ:

## ԳԼՈՒԽ VI.

### ՍԱՐՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԳԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՈՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Թեմայի հիմնական հարցերն են.

- որո՞նք են սահմանադրական արդարադատության համակարգերի պատմական էվոլյուցիայի հիմնական դասերը,
- ինչպիսի՞ք են սահմանադրական արդարադատության համակարգերի հետագա զարգացման հիմնական միտումները,
- ինչպես է ներկայացված սահմանադրական արդարադատության համակարգը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ եւ որո՞նք են այդ համակարգի բնորոշ առանձնահատկությունները,
- ի՞նչ է բովանդակում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, ի՞նչ կառուցվածք եւ առանձնահատկություններ ունի այն,
- որո՞նք են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման հիմնական ուղղությունները:

#### **6.1. Սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումները**

Սահմանադրական արդարադատության միջազգային փորձի համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս նախ՝ բացահայտել այն ընդհանուրն ու անհրաժեշտը, առանց որի այս համակարգերը կդադարեն որպես այդպիսին գոյություն ունենալուց:

Երկրորդ՝ վեր հանել կոնկրետ երկրների սահմանադրական արդարադատության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք կարող են ուսանելի ու օգտակար լինել մյուս երկրների համար:

Երրորդ, որը կցանկանայինք հատուկ նշել, անհրաժեշտություն է առաջանում ի մի բերել սահմանադրական արդարադատության համակարգերի պատմական զարգացման դասերը՝ որպես հասարակության կայուն առաջընթացի ապահովման կարեւոր պայման:

Ուստի, սահմանադրական արդարադատության համակարգերի հետագա զարգացման միտումներն ամփոփ ներկայացնելուց առաջ, փորձենք անել մի շարք ընդհանրացումներ:

Միջազգային փորձը, օրենքի սահմանադրականության ապահովման երկու համակարգերի զարգացման դիալեկտիկան, անցումային փուլի առանձնահատկություններից բխող նոր խնդիրներն ու դրանց լուծման տրամաբանությունը վկայում են, որ, պայմանականորեն, պատմական էվոլյուցիայի հիմնական դասերը հանգում են հետեւյալներին.

1. 20 - ըդ դարի սկզբին ստեղծվեցին օբյեկտիվ նախադրյալներ սահմանադրական արդարադատության որակապես նոր համակարգի անցնելու համար: Դրանք առաջին հերթին վերաբերում էին հասարակական հարաբերությունների որակական ակտիվ վերափոխումներին՝ ընդուական համակարգային փոփոխություններին, ինչպես նաև միաժամանակ մի շաբթ երկրներում հասարակական կառավարման էքստրեմալ իրավիճակների առաջացմանը,

2. օրենքի եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման խնդիրը դադարեց միայն կամ առավելապես մարդու իրավունքների պաշտպանության խնդիր լինելուց: Առաջին պլան մովեց հասարակական կայունության ապահովմանն ու զարգացմանը կայուն դինամիզմ հաղորդելու եւ այդ գործում պետական իշխանության բոլոր մարմիններին, ինչպես նաև քաղաքացիներին ակտիվ ու փոխհամաձայնեցված մասնակից դարձնելու խնդիրը,

3. որակապես նոր բնույթ ստացավ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների ծեւավորման խնդիրը, որտեղ առանձնահատուկ տեղ հատկացվեց դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտներին: Ելակետ ընդունվեց մեթոդաբանական այն մոտեցումը, որ մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների ու ազատությունների ակլունքն է: Իսկ մարդու բնական իրավունքները սահմանադրորեն ճանաչվում են որպես բարձրագույն արժեք, անմիջական գործող իրավունք, պայմանավորում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման բնույթը ու բովանդակությունը, ենթակա են հարգման ու պաշտպանության: Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը դառնում է նրա իրավունքների պաշտպանության կարեւոր երաշխիք,

4. առավել եւս անցումային ու էքստրեմալ իրավիճակներում կարեւորվում է ոչ այնքան հետեւանքների հաղթահարումը, որքան բացասական երեւույթների կանխակայումը եւ հնարավոր վնասը նվազագույնի հասցնելը: Այս առումով չափազանց կարեւոր է նախնական վերահսկողության համակարգի արմատավորումը, որն անհամատելի է սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելին,

5. հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգն ստեղծում է առավելագույն հնարավորություններ՝ գտնելու քաղաքական անհամաձայնությունների իրավական լուծումներ: Փաստորեն, ստեղծվում է իրական հնարավորություն փակուղային բոլոր իրավիճակներից իրավական, սահմանադրական ելք գտնելու համար: Սահմանադրական արդարադատության արդյունավետությունն իր հերթին պայմանավորված չէ դատարանի կողմից քննության առնված գործերի կամ մուտքագրված դիմումների թվով: Սահմանադրական դատարանների գործունակության գնահատման հիմնական չափազանց հասարակական գործընթացների վրա նրանց իրական ազդեցությունն է, որն ուղղված է սահմանադրական հավասարակշռության պահպաննան ու հասարակության կայուն եւ դինամիկ առաջընթացին,

6. նոր համակարգերի կողմից Սահմանադրության գերակայության երաշխավորումը եւ օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության շարունակական վերահսկումը փոխեց նաև մոտեցման մեթոդաբանությունը՝ խնդիրն իրավակիրառական հարթությունից տեղափոխվեց հասարակական կառավարման հարթություն,

7. մասնագիտացված համակարգերի ծեւավորումը հնարավորություն տվեց համալիր մոտեցում դրսեւորել օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման խնդիրին՝ ոչ միայն սահմանադրականության հարցը քննության առարկա դարձնելով դրանց մշակման, ընդունման եւ կիրառման բոլոր փուլերուն, այլև հաստատելով լայն ժողովրդավարություն, էապես ընդլայնելով սահմանադրական վերահսկողության սուբյեկտների եւ այդ նպատակով սահմանադրական դատարան դիմումների ցանկը,

8. սահմանադրական դատարանների մասնագիտացված համակարգը եապես մեծացրեց սահմանադրական արդարադատության ներազեցությունն օրենսդրական համակարգի բարելավման, ընդուական սահմանադրական լուծումների հետագա կատարելագործման գործում, սահմանադրական դատարանի որոշումները եւ իրավական դիրքորոշումը դարձան իրավունքի կարեւոր աղբյուր,

9. ստեղծվեց ավելի մեծ հնարավորություն պահպանելու իշխանությունների տարանջատման հաշվեկշիռը, արդյունավետ գործադրելու զայումների ու հակակշիռների մեխանիզմը: Այս խնդիր լուծմանը էապես նպաստող հանգամանքներից կցանկանայինք առանձնացնել հատկապես պառլամենտի պալատների կանոնակարգերի նկատմամբ սահմանադրական նախնական վերահսկողության պրակտիկան, սահմանադրական վերահսկողության հարցում պառլամենտական

փոքրամասնությանն ընձեռվող հնարավորությունը, սահմանադրական դատարանների վերահսկիչ ֆունկցիան նախագահական ընտրությունների եւ կուսակցությունների գործունեության սահմանադրականության նկատմամբ, ինչպես նաև դատական սահմանադրական վերահսկողության մարմինների միջոցով պետական իշխանության տարրեր մարմինների միջեւ առաջացած անհամաձայնությունների լուծման հնարավորությունը եւ այլն,

10. մի շաբ երկրներում սահմանադրական արդարադատության մարմիններն սկսեցին ծանրաբեռնվել իրենց գործառնական դերին ոչ բնորոշ լիազորություններով, ինչը հաճախ բացասաբար է անդրադառնում դրանց գործունեության արդյունավետության վրա,

11. որպես կարեւոր հետեւություն կցանկանայինք առանձնացնել նաեւ այն, որ սահմանադրական վերահսկողության մարմինների հետեւողական ու արդյունավետ աշխատանք կարելի է ակնկալել այնտեղ եւ այն դեպքում, որտեղ եւ եր այդ համակարգի ձեւավորմանը ցուցաբերվում է համալիր մոտեցում, նախապես հստակ որոշվում ու Սահմանադրության մեջ ամրագրվում է լիազորությունների ամբողջությունն ու դրանց իրականացման իրական նախադրյալները: Տվյալ դեպքում մոտեցումը չպետք է թելադրված լինի այդ պահին բնորոշ այս կամ այն քաղաքական նկատառումով, այլ իր հիմքում պետք է ունենա համակարգային կառավարման մերոդարձանությամբ առաջադրվող պահանջները: Անշախ քաղաքական իրավիճակի փոփոխություննից, պետք է երաշխավորված լինի սահմանադրական արդարադատության մարմնի անձեռնմխելիությունն ու անկախ գործունեությունը: Դա հատկապես կարեւորվում է անցման շրջանում: Այս խնդիրը թելադրում է նաեւ սահմանադրական դատարանների միջազգային համագործակցության էական բարելավման պահանջ,

12. բացառիկ կարեւոր նշանակություն ունի այն իրողության գիտակցումը, որ ցանկացած հասարակություն, այդ թվում նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաեւ դրանց պահպանության ու իշխանությունների նկատմամբ վերահսկողության (կամ արգելակների) ամբողջական համակարգ: Դրա կարեւոր բաղադրիչներն են եղել հավատը (եկեղեցին), բարոյական վարքագիր նորմերը, ավանդույթները (հասարակական, ընտանեկան), մեծ կամ փոքր համակարգի առանձնահատկություններով պայմանավորված վարքի կանոնները, սովորության իրավունքը, իրավական նորմերը եւ այլն: Խնդիրն այն է, որ սահմանադրական վերահսկողությունը ոչ թե հակադրվի, այլ ներդաշնակվի այս ամենին: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր երկրում, իր բազում առանձնահատկությունների հիման վրա, պետք է վեր հանվեն ու ներդաշնակվեն բոլոր բաղադրանասերը: Յետեւությունը նաեւ այն է, որ անձնակենտրոն համակարգերում երբեք նույն կանոնները չեն կարող գործել, ինչ՝ ազգակենտրոն համակարգերում,

13. հիմնական չափանիշները, որոնք պետք է դրվեն կենսունակ սահմանադրական արդարադատության համակարգերի ծեւավորման հիմքում, հետեւյալներն են.

- սահմանադրական դատարանների գործառնական լիարժեքությունը եւ լիազորությունների ու դրանց իրացման նախադրյալների ներդաշնակությունը,
- սահմանադրական վերահսկողության համակարգի ամբողջականությունն ու այն իրականացնող մարմինների գործառնական հստակ փոխհարաբերությունների առկայությունը,
- համակարգի ռացիոնալ աշխատանքի ու գործունեության անընդհատության ապահովումը,
- սահմանադրական արդարադատության գործառնական, կառուցակարգային, կազմակերպական եւ դատավարական նախադրյալների ներդաշնակ ամբողջականության ապահովումը,
- հասարակական պրակտիկայի հետ հաստատուն հետադարձ կապի ապահովումը,
- սահմանադրական խախտված հավասարակշռության վերականգնման ընթացքում հակասահմանադրական նոր իրավիճակներ ստեղծելու բացառումը,

14. սահմանադրական արդարադատությունը պետք է հենվի իրավունքի գերակայության սկզբունքի վրա, եւ այդ սկզբունքը պետք է Սահմանադրության հենքը լինի: Անառարկելիորեն պետք է ընդունվի, որ Սահմանադրությունն իրավական օրենք է, հենվում է իրավունքի վրա եւ պաշտպանում է մարդու անօտարելի բնական իրավունքները, որոնք Սահմանադրության ուժով ճանաչվում են որպես անմիջապես գործող իրավունք: Միաժամանակ Սահմանադրությունը պետք է օժտված լինի ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներով՝ հնարավորինս բացառելով ներքին հակասություններն ու «նեղ տեղերը»: Այլ կերպ, յուրաքանչյուր օրգանիզմ, այդ թվում հասարակական (որի դիմայիկ ընդհանրական նորելն է Սահմանադրությունը), պետք է օժտված լինի կայունության պահպանման ներքին իմունային համակարգով, որն ի զորու կլինի բացահայտել, գնահատել, վերականգնել խախտված գործառնական հավասարակշռությունը,

15. սահմանադրական արդարադատության համակարգը կարող է արդյունավետ գործել միայն անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայության պայմաններում: Դրանցից հատկապես կարեւորվում են:

- դատական սահմանադրական վերահսկողության գործառնական, կառուցակարգային, նյութական եւ սոցիալական անկախությունը,
- սահմանադրութեան իշխանությունների հստակ տարանջատումը եւ գործակցական նախադրյալների ապահովումը,
- սահմանադրական հիմնական սկզբունքների եւ կոնկրետ նորմերի ներդաշնակության ապահովումը,
- դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների ամբողջական ու հիմնավոր ընտրությունը,
- սահմանադրական արդարադատության սուբյեկտների օպտիմալ շրջանակի որոշումը,
- դատական իշխանության ճեւավորմանը համակարգային նոտեցման դրսեւորումը եւ գործառնական ամբողջականության երաշխավորումը,
- օրենսդրական հստակ ու ծրագրված քաղաքականության առկայությունը,
- ժողովրդավարական արժեքների ճանաչման անհրաժեշտ մակարդակն ու հասարակության իրավագիտակացության բավարար աստիճանը եւ այլն,

16. Քայաստանում սահմանադրական արդարադատության արդյունավետ համակարգ ստեղծելու հնարավորությունները բավարար չեն օգտագործվել, եւ այդ խնդիրը կարող է լուծվել ինչպես սահմանադրական բարեփոխումների, այնպես էլ գործող օրենսդրության կատարելագործման ճանապարհով:

Որո՞նք են սահմանադրական արդարադատության գործող համակարգերի հետագա զարգացման հիմնական միտումները եւ դրանք ի՞նչ նոր խնդիրներ ու նոտեցումներ են թելադրում նորանկախ երկրներին:

Այս առումով կցանկանայինք կատարել հետեւյալ շեշտադրումները.

1. սահմանադրական արդարադատության հատուկ կամ մասնագիտացված մարմինները դաշնում են պետական իշխանության համակարգի կարեւոր, հավասարակշռություն, կայունություն, իրավունքի գերակայություն ապահովող, ժողովրդավարության հաստատման ու խորացմանը նպաստող բացարձիկ կարեւորության ինստիտուտներից նեկը,

2. գործող համակարգերի զարգացումն ընթանում է կազմակերպման ծեւերի կատարելագործման, լիազորությունների հստակեցման ու ամբողջականացման, վերահսկողության սկզբունքների, ծեւերի ու ներքոդների բարելավման, դիմող սուբյեկտների ցանկի ընդլայնման, վերահսկողության օբյեկտների որոշարկման, նախնական վերահսկողության դերի բարձրացման եւ մի շարք այլ ուղղություններով:

Անհրաժեշտ է ընդգծել, որ շատ կարեւոր է նախնական ու հետագա վերահսկողության ճիշտ հաշվեկշռի հաստատումը, ինչպես նաև պարտադիր ու ֆակուլտատիվ վերահսկողության խելամիտ ներդաշնակումը, եւ այս ուղղությամբ տարբեր երկրներ շարունակում են փնտրել ռացիոնալ լուծումներ,

3. օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման գործում բացարձիկ կարեւորություն է ներկայացնում սահմանադրական արդարադատության մարմինների կողմից ընդունվող որոշումների իրացման եւ դատարանի իրավական դիրքորոշումը որպես իրավունքի աղբյուր հաշվի առնելու խնդիրը: Մեր կարծիքով, այս հարցին պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ ըստ իրավական ակտի տեսակի եւ ըստ վերահսկողության ծեւի սահմանելով որոշման իրավական հետեւանքների ու դրա իրացման ամբողջական մեխանիզմ:

4. գմալով ավելի է կարեւորվում լիազորությունների հարցով իշխանությունների միջեւ առաջացած վեճերի լուծման եւ այդ ուղղությամբ սահմանադրական դատարանների կողմից իրականացվող կանխարգելիք քայլերի դերն ու նշանակությունը,

5. սահմանադրական արդարադատության համակարգն անկատար է ու թերի այնքան ժամանակ, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության վերահսկողությունը չի դարձել այդ համակարգի անքակտելի մասը: Բոլոր այն երկրները, որոնք ձգտում են հասարակական զարգացմանը կայունություն եւ բարի հաղորդել, ուր գիտակցվել է քաղաքացիական հասարակության ծեւավորման

ամիրաժեշտությունը, որտեղ կարեւորվում է հասարակության ստեղծագործական ներուժի խելամիտ օգտագործման խնդիրը, ձգուում են ամրապնդել նարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքները՝ նաեւ հարցը սահմանադրական արդարադատության առարկա դարձնելու ճանապարհով:

Նորանկախ երկրների համար կարեւոր է, որ ժողովրդավարական հաստատուն ավանդույթներ ունեցող եվրոպական օրգագում երկրներուն նույնական սահմանադրական արդարադատության ինստիտուտները կազմավորվել են վերջին տասնամյակների ընթացքում, ինտեւարար, կարելի է առավել ակտիվ ծերով հաշվի առնել նրանց փորձը՝ խուսափել սեփական սխալներն անընդհատ շտկելու ճանապարհով առաջ գնալուց:

Սահմանադրական արդարադատության դերը, ինչպես նշեցինք, առանձնապես կարեւոր է հասարակության դինամիկ ու ներդաշնակ օրգագում ապահովելու համար: Դա նոր հազարամյակի կարեւոր բնութագրիչներից է: Հասարակական ներկա գործընթացները վկայում են համակարգային սահմանադրականացման եւ սահմանադրական կայունության բացահի կարեւոր դերի մասին: Դրա ապահովումը պահանջում է նաեւ հասարակական պրակտիկայի շարունակական ներազդեցության գնահատում եւ կուտակվող բացասական հասարակական էներգիայի շարունակական պարագում՝ պայքունային լուծումներից խուսափելու համար: Այստեղ էական դեր կարող է խաղալ նաեւ իրավական կիբեռնետիկայի հնարավորությունների խելամիտ օգտագործումը<sup>26</sup>. Մասնավորապես ուսումնասիրվող նյութի տեսանկյունից չափազանց կարեւոր է հասարակական համակարգի իրավական, սոցիալական եւ ժողովրդավարական բնութագրիչների շարունակական վերահսկումը եւ այդ չափորոշիչների համեմատական վերլուծությունը: Վերջինս հնարավորություն է տալիս նաեւ առաջադրել եւ լուծել հասարակական համակարգի այդ որակների օպտիմալ բարեփոխման խնդիր:

Յավելվածի թիվ 9 սխեմայում ներկայացված են հասարակական համակարգի սոցիալական, իրավական եւ ժողովրդավարական գործընթացների մի շարք հիմնական բնութագրիչներ, որոնք հնարավորություն են տալիս թիվ 1 սխեմայում բերված կարգով առանձին-առանձին գնահատել դրանց ընդհանրական մակարդակը՝ տարբեր երկրների համանուն բնութագրիչների համադրման ճանապարհով: Սկզբունքի հույսունը կայանում է նրանուն, որ բոլոր երկրների համանուն բնութագրիչներից ծեռավորվում է մի պայմանական էտալոնային համակարգ, որին բաղդատվում են կոնկրետ երկրների բնութագրիչները (չեզոքացնելով առանձին բնութագրիչների կոռուպցիոն կախվածությունը) եւ տվյալ խունքը բնութագրիչներով որոշվում է երկրի «ռեյտինգը» (ուստի է համեմատել շախմատում էլոյի գործակցի որոշման հետ): Նման հաշվարկի արդյունքում ոչ միայն համեմատական սահմանադրական վերլուծության նոր հնարավորություններ են ծնվում, այլև առարկայական են դաշնում սահմանադրական հիմնական սկզբունքների իրացման մասին պատկերացումները:

Առավել կարեւորություն է ստանում սույն մեթոդի կիրառումը կայուն օրգագուման գործընթացի օպտիմալ կառավարման խնդիր առաջադրելու տեսանկյունից, որն ընդհանրական տեսքով ներկայացվում է հավելվածի թիվ 2 սխեմայում: Բերված մոդելի ամփոփ ինաստն այն է, թե ինչպես կարելի է հասնել ժողովրդավարական գործընթացների, իրավական երաշխիքների եւ սոցիալական պաշտպանվածության ամրապնդման՝ հասարակության հնարավորությունների օպտիմալ իրացման եւ սահմանադրական հիմնական սկզբունքները օրգագուման ամեն մի փուլում առավելագույնս հաշվի առնելու ճանապարհով: Զարմանալի չէ, որ նույնիսկ մասնագետների շրջանում, օրինակ, այն կարծիքն է արտահայտվում, որ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված իրավական, սոցիալական եւ ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքների լոկ վերացական բնույթ ունեն եւ լավագույն դեպքում կարող են դիտվել որպես բաղադալի նպատակ: Իրականում դա հայեցական եւ ոչ ճիշտ մոտեցում է: Աշխարհի ցանկացած պետություն այդ բնութագրիչների վերջնագծին չի հասնել եւ չի էլ կարող հասնել, որովհետեւ դա օրգագուման անընդհատությունն է խորհրդանշում: Այլ հարց է, թե առաջընթացն այդ ուղղությամբ է, թե ոչ, կամ այդ ուղղությամբ ինչ մակարդակ է ապահովվել: Ահա այս հարցի պատասխանն ստանալու համար ոչ միայն նման ամփոփ գնահատում է անհրաժեշտ, այլև կարեւոր է, թե առկա հնարավորությունների ինչպիսի՝ գործադրմանը կարելի է տվյալ սահմանադրական սկզբունքների իրացման առավելագույն արդյունք արձանագրել:

## 6.2. Յայաստանի Յանրապետությունում սահմանադրական արդարադատության համակարգի բնորոշ առանձնահատկություններն ու հետագա զարգացման հիմնական ուղղությունները

Սահմանադրական արդարադատության միջազգային փորձի ուսումնասիրումը հանգեցնում է այն ինտեւությանը, որ Յայաստանի Յանրապետությունում այս համակարգը դեռեւս զարգացման լուրջ ճանապարհ պետք է անցնի:

Հայաստանն այն երկրներից է, որտեղ, նախ՝ սահմանափակված է դատարանի գործունեության ոլորտը: Սահմանադրական մակարդակով անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծման խնդրին: Եթե ուղական իրացվածք չէ իշխանությունների տարանջատման սկզբունքը եւ բույլ է համակարգային մոտեցումը պետական իշխանության ձեւավորմանը: Զի ապահովված նաեւ դատական իշխանության ամբողջական ու անկախ գործող համակարգի ձեւավորման անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ: Այսօր Հայաստանը, մասնավորապես, այն բացառություններից մեկն է, որտեղ ընդհանրապես բացակայում է որեւէ գործառնական փոխհարաբերություն սահմանադրական դատարանի եւ դատական համակարգի մյուս մարմինների միջև:

Մեծապես կարեւորելով ժողովրդավարությունը որպես մեր երկրի զարգացման համար այլընտրանք չունեցող ուղի, Հայաստանում միաժամանակ վերահսկողական անհրաժեշտ երաշխիքներ չեն ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Առանց վարանելու պետք է ասել, որ այս հարցը սահմանադրական վերահսկողության համակարգից արհեստականորեն կտրելը պատճականորեն երբեք չի արդարացվելու:

Հայաստանի սահմանադրական արդարադատության համակարգին բնորոշ են նաեւ մի շարք, այսպես կոչված, կիսալուծումներ, որոնք ամբողջականացման ու շտկման անհրաժեշտություն ունեն: Բարդությունն այն է, որ դրանց մի զգալի մասն անմիջականորեն առնչվում է սահմանադրական լուծումներին: Այսուհանդերձ, մենք կանորադառնանք դրանց մի մասին, որոնց նմանօրինակ խնդիրներն ուսումնասիրված երկրների մեջ մասում ժամանակի ընթացքում հաջողությանք լուծվել են:

Նախ, Հայաստանում անտեղի բացարձակեցվել էր սահմանադրական դատարանում գործերի քննության բանավորության սկզբունքը: Այսօր դժվար թե գտնվի երկորոր մի երկիր, որտեղ ցանկացած հարց սահմանադրական դատարանում քննվում է միայն դրնբաց ու բանավորության կարգով (Հայաստանում այդպես էր մինչեւ 1997թ. դեկտեմբերը): Հակառակը, սովորաբար գերակայում է գրավոր քննությունը, կամ դատարանին է թողնված քննության ձեւի ընտրության իրավունքը: Հատկապես դա վերաբերում է ամհատական դիմումներին, միջազգային պայմանագրերին, ինչպես նաեւ նախնական վերահսկողության օբյեկտ հանդիսացող ակտերից մեջ մասին:

Այս հարցն անմիջականորեն առնչվում է նաեւ գործերի քննության կարգին: Երկրների մեջ մասում, որտեղ նաեւ սահմանադրական դատարանները միապալատ են, իրավունք է վերապահված դատարանին առանձին գործեր քննել 3 կամ 5 անդամի կազմով: Լավագույն օրինակներից մեկը Շունգարիան է, որի սահմանադրական դատարանում 3 դատավորի կազմով իրականացվում է քննություն եւ կայացվում որոշում: Բնականաբար, նման դեպքերում սահմանվում են նաեւ ներքին վերահսկման մեխանիզմներ: Սակայն այնպիսի փակուլյային իրավիճակների հնարավորություն, ինչպիսին կարող է տեղի ունենալ Հայաստանում պատգամավորների ընտրությունների ժամանակ, ուղղակի բացարկում է:

Երկորորդ Հայաստանը դարձյալ այն եզակի երկրներից է, որտեղ սահմանադրական դատարանների հիմնական լիազորություններից մեկը՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման հարցը, մեր կարծիքով, չափազանց խրին ու անհստակ է լուծված: Այն պարագայում, երբ չկա նաեւ լիազորությունների հարցերով առաջացած վեճերի լուծման հստակ մեխանիզմ, նման վիճակը, ժողովրդավարության խորացմանը զուգընթաց, ավելի մեծ չափով է իրեն զգացնել տալու, կամ, վատագույն դրսեւորման մեջ, ուղղակիորեն կարող է դառնալ ժողովրդավարական գործընթացների խոչընդոտ:

Երրորդ՝ չնայած խիստ սահմանափակ են սահմանադրական արդարադատության օբյեկտները, դրա հետ մեկտեղ, հստակություն չկա հատկապես Ազգային ժողովի կողմից ընդունված, սակայն Նախագահի կողմից դեռևս չստորագրված օրենքների սահմանադրական վերահսկողության հարցում: Այս խնդրի լուծման լավագույն օրինակ են տալիս Ֆրանսիան, Էստոնիան, Ռումինիան եւ այլ երկրներ: Հայաստանում տեսականորեն հնարավոր է նման վերահսկողություն: Սակայն գործնականում անհնարին է մի շարք պատճառներով եւ, ամենից առաջ նրանով, որ սահմանադրորեն նման պարագաներում հստակեցված չեն Ազգային ժողով-Նախագահ- սահմանադրական դատարան փոխհարաբերություններն ու օրենքի ստորագրման ժամկետների հետ կապված հարցերը:

Չորրորդ՝ պետությունների սահմանադրական պրակտիկայում քիչ են դեպքերը, երբ նորմերի անհամաձայնեցվածությունը գործնականում առաջացնի փակուլյային իրավիճակ: Նման վիճակում հայտնվեց Հայաստանը նախագահական ընտրությունների առնչությամբ: Երկար խոսակցությունների առիթ տվեց, մասնավորապես, այն հարցը, որ օրենքով սահմանված ժամկետային անախորնիզմի հետեւանքով դեռևս սահմանադրական դատարանի կողմից ընտրությունների հարցով գործի

քննությունը չավարտված, Նախագահը պարտավոր էր երդմել եւ ստանձնել իր պարտականությունների կատարումը: Սակայն, ինչպես ասում են, ամեն ինչ դեռ դրանով չի վերջանում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51 հոդվածով սահմանվում է, որ եթե քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու եւ նրանցից որևէ մեկը չի ստացել անհրաժեշտ ծայներ, ապա քվեարկությունից հետո տասնչորսերորդ օրը անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավել ծայներ ստացած երկու թեկնածուները: Սա ընդհանուր կանոն է եւ ճիշտ է ծեւակերպված: Բայց պարզվում է, որ այն առաջին իսկ թեկնածուի սահմանադրական իրավունքի իրացման նոյն Սահմանադրության 101 հոդվածի հիման վրա սահմանադրական դատարան դիմելու դեպքում, դադարում է գործելուց եւ երկրորդ փուլի կազմակերպումը միանգամից դուրս է գալիս 14-օրյա ժամանակացանկից եւ դաշնում է կամ անհնարին, կամ՝ հակասահմանադրական: Ավելին, կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ չի գործի նաեւ Սահմանադրության 51 հոդվածով նախատեսվող այն նորմը, ըստ որի, եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո քառասուներորդ օրն անցկացվում է նոր ընտրություն: Չե որ բացառված չէ, ասենք, այն դեպքը, եթե թեկնածուն դիմել է սահմանադրական դատարան կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո օրենքով իրեն վերապահված ժամկետի վերջում, իսկ սահմանադրական դատարանը, Սահմանադրության 102 հոդվածի պահանջները պահպանելով, գործը քննել եւ որոշում է կայացրել: Բայց պարզվում է, որ ԿԸՆ կողմից 40 օր հետո կազմակերպվել է նոր ընտրություն, այն դեպքում, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմունատուն իրավացի է եւ անհրաժեշտ է, օրինակ, կազմակերպվել ընտրությունների երկրորդ փուլ:

Պետական բացարձի կարեւորություն ունեցող հարցերի լուծման գործում տեղ գտած նման օրենսդրական բացերն անհապաղ շտկման կարիք ունեն:

Դիմքերորդ՝ շատ երկուներուն սահմանադրական վերահսկողության օբյեկտ են միջազգային պայմանագրերը (Ավստրիա, Իսպանիա, Պորտուգալիա, Հունգարիա, Ռուսաստան, Լեհաստան, Սլովակիա, Ռումինիա, Հայաստան եւ այլն): Այս իրավասության իրականացման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ միջազգային պայմանագրերը հանդիսանում են նախական, ֆակուլտատիվ, վերացական վերահսկողության օբյեկտ: Հայաստանի Հանրապետությունում միջազգային պայմանագրերը դարձել են միջանկյալ պարտադիր վերահսկողության առարկա:

Շուրջ վեց տարվա փորձառությունը վկայում է, որ այս հարցը նույնպես շտկումների անհրաժեշտություն ունի: Նորանկախ երկրի համար քաղաքական, տնտեսական եւ բազմապիսի այլ հետեւանքներ կարող են ունենալ բոլոր այն դեպքերը, եթե արդեն իսկ բարձր մակարդակով ստորագրված միջազգային պայմանագրի նորմերը սահմանադրական դատարանի վերջնական ու փոփոխության ոչ ենթակա որոշմամբ ճանաչվում են Սահմանադրությանը չիամապատասխանող, առավել եւս, եթե շատ հարցեր առաջ են գալիս այդ փաստաթղթերի անորակ նախապատրաստման հետեւանքով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը մեկ տարում չորս անգամ «կարմիր լույս է վառել» միջազգային պայմանագրերի վավերացման առջեւ (Գերմանիա, Եգիպտոս, Թուրքմենիա, Վրաստան): Սա մենք համարում ենք արտաքող իրավիճակ: Նման նախադեպ միջազգային պուալիտիկայում գրեթե չկա: Ստորագրված պայմանագրի չվավերացման հետեւանքով առաջացած բարդություններից խուսափելու լավագույն ելքը մեխանիզմն առավել խելամիտ դարձնելը է: Մեր կարծիքով, նպատակահարմար է միջազգային պայմանագրերի նախնական պարտադիր վերահսկողությունն իրականացնել դրանց ստորագրմանը նախորդող փուլում: Բացի դրանից, նման գործերը սահմանադրական դատարանում քննության առարկա պետք է դրանան միայն գրավորության սկզբունքի հիման վրա:

Հարկ է նշել նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի 7-րդ կետի այն դրույթի շտկման անհրաժեշտության մասին, ըստ որի Հանրապետության Նախագահին իրավասություն է տրվում ստորագրել Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերը: Սա այն դեպքն է, եթե ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Վեցերորդ՝ Հայաստանում սահմանադրական վերահսկողության սահմանադրական եւ օրենսդրական կարգավիրման լուրջ թերություններից է նաեւ այն, որ թերի են սահմանված սահմանադրական դատավարության կանոնները: Սովորաբար սա կամ արվում է օրենքով, կամ այդ իրավասությունը տրվում է դատարանին: Վերջինս ավելի տարածված ձեւ է: Հայաստանի պարագայում դատարանը նման իրավասություն չունի, օրենքն այն հստակ չի կարգավորում: Ավելին, դատարանը հաճախ արհեստականորեն դրվում է այնպիսի կապանքների մեջ, որ նիստուն անգամ հետաձգել չի կարող: Այստեղ նույնպես եզակի օրինակներից ենք: Միջազգային փորձը, ընդհակառակը, վկայում է այն մասին, որ ընդարձակվում է նմանօրինակ հարցերի լուծման գործում դատարանների ինքնուրույնությունը: Սահմանադրական դատարաններին ընդհուպ իրավունք է վերապահվում նաեւ

օրենքով նախատեսված որոշակի հանգամանքներում վերանայելու իրենց որոշումները կամ ընդունել միջանկյալ որոշումներ:

Չմտնելով լրացուցիչ մանրամասների մեջ, հարկ է ընդգծել, որ բացի վերոհիշյալներից, Հայաստանում սահմանադրական վերահսկողության համակարգի հետագա կատարելագործումը պետք է ընթանա նաեւ հետեւյալ ուղղություններով.

ա) օրենքի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների զգալի ընդլայնում: Ժամանակի ընթացքում այդ ցանկը պետք է համալրեն Ազգային ժողովի նախագահը, պատգամավորների առնվազն 1/5-ը կամ յուրաքանչյուր խմբակցություն, վարչապետը, վճռաբեկ դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, ընդհանուր իրավասության դատարանները, ֆիզիկական անձններ, տեղական ինքնակառավարման մարմինները, եկեղեցին (քնական է, որ օրենքով կիստակեցվեն յուրաքանչյուր դիմոց սուբյեկտի իրավասության շրջանակները եւ այն իրավական ակտերը, որոնց վերաբերյալ այս կամ այն սուբյեկտը կարող է դիմել սահմանադրական դատարան),

բ) սահմանադրական վերահսկողության օրյեկտ հանդիսացող նորմատիվ ակտերի ցանկի ճգրտում (վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ներառում եւ Ազգային ժողովի ներքին աշխատակարգին վերաբերող որոշումների դուրսբերում այս ոլորտից): Միջազգային պրակտիկան վկայում է, որ կառավարման համակարգի արդյունավետությունն զգալի չափով բարձրանում է, եթե սահմանադրական վերահսկողության օրյեկտ են դառնում գործադիր իշխանության բոլոր մարմինների նորմատիվ ակտերը: Առավել կարեւոր է ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի եւ այդ ակտերի ու օրենքի՝ միջազգային պայմանագրերին համապատասխանության հարցի դատական վերահսկողության հստակ համակարգի արմատավորումը: Բազմաթիվ երկրներում այդ իրավասությունն իրականացնում է սահմանադրական դատարանը,

գ) յուրաքանչյուր անձի սահմանադրական դատարան դիմելու հնարավորության ընձեռում, մարդկանց սահմանադրական արդարադատության իրավունքի ճանաչում եւ դրա իրացման հնարավորությունների ընձեռում,

դ) մի շարք օրենքների (հատկապես Ազգային ժողովի աշխատանքը կանոնակարգող եւ այլն) նախական պարտադիր վերահսկողության ապահովում մինչեւ Հանրապետության նախագահի կողմից դրանց ստորագրումը եւ հրապարակումը (սա նաեւ խորհրդարանական փոքրանականությունների շահերի պաշտպանության երաշխիք է եւ ընդունված է մի շարք երկրներում),

ե) «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունների եւ սահմանադրական դատավարության մասին կանոնակարգի ընդունում:

Սահմանադրական արդարադատության համակարգի սահմանադրական բարեփոխումների համար ելակետային կարող են հանարկել հետեւյալ մոտեցումները.

1. ՀՀ սահմանադրական դատարանը Ավստրիայի, Բելգիայի, Դանիայի, ԱՄՆ-ի եւ մի շարք այլ երկրների օրինակով օժտված է անկախության այնպիսի կարեւոր նախադրյալով, ինչպիսին անդամների մինչեւ յոթանասուն տարին լրանալը անփոփոխելիության սկզբունքով նշանակումն է: Նման դրույթը գնալով ավելի ու ավելի է կարեւորվում սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում: Սակայն անհրաժեշտ է, որպեսզի բավարար կենսունակությանը օժտված լինեն նաեւ դատարանի անկախության մյուս բաղադրիչները: Սահմանադրական դատարանների իրավասությունների եւ դրանց իրացման կարգին առնչվող հարցերը վերջին շրջանում ակտիվ քննության առարկա են եղել Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովում՝ կապված հատկապես Լատվիայի եւ Խորվաթիայի սահմանադրական դատարանների վերաբերյալ սահմանադրական օրենքների քննարկման հետ: Հաշվի առնելով այս ոլորտում միջազգային զարգացումների հիմնական միտումները, կարելի է ընդհանրացնել, որ արդյունավետ սահմանադրական արդարադատություն կարող է իրականացվել, եթե բոլոր սահմանադրական սուբյեկտներն իրավասու են դիմելու սահմանադրական դատարան եւ սահմանադրական բոլոր սուբյեկտների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օրյեկտ: Բացի դրանց, քանի որ սահմանադրական արդարադատության հիմնական բովանդակությունը Սահմանադրության գերակայության ապահովումն է, ապա այդ խնդիրը կմնա անլուծելի, եթե սահմանադրական դատարանը չերաշխավորի մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրականացնան ճանապարհով նրա սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը, ինչպես

Նաեւ չլուծի սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության նարմինների միջեւ առաջացած վեճերը:

Պետական իշխանության նարմինների սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծնան իրավասություն ունեն սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգ ունեցող ավելի քան հիսուն երկրների սահմանադրական դատարաններ: Մասնավորապես, տես. Աղրբեջանի Սահմանադրություն, հոդվ. 130, Բուլղարիա - 149, Վրաստան - 89, Գերմանիա - 93, Իտալիա - 134, Ղրղզստան - 82, Լեհաստան - 189, Ռուսաստան - 125, Սլովակիա - 126, Սլովենիա - 160, ԽՍՀՄ - 161, Տաջիկստան - 89 եւ այլն: Բացի դրանից, Սահմանադրության վերացական կամ, այսպես կոչված, բացարձակ մէկնարաննան իրավասություն ունեն, ինչպես նշել ենք, 29 երկրների սահմանադրական դատարաններ, այդ թվում՝ Աղրբեջանում, Բուլղարիայում, Գարունում, Գերմանիայում, Ղունգարիայում, Ղազախստանում, Ղրղզստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Խամբիայում, Սլովակիայում, Ուգրեստանում եւ այլն: Բազմաթիվ երկրներում (Լեհաստան, Սլովակիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Լիտվա, Սլովենիա, Աղրբեջան եւ այլն) այլ նորմատիվ ակտերի՝ ոչ միայն Սահմանադրությանը, այլեւ օրենքներին (հաճախ նաեւ միջազգային պայմանագրերին) համապատասխանության հարցը նույնպես լուծում է սահմանադրական դատարանը, եւ արդյունավետ չի համարվում այդ նպատակով նոր նարմիններ ստեղծելը (նման տեսակետը պաշտպանվում է նաև Վենետիկի հանձնաժողովի փորձագետների կողմից):

Սահմանադրության 100 հոդվածի լրացումների ու փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները պետք է ստեղծեն անհրաժեշտ ու բավարար լիազորությունների համակարգ՝ արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար:

2. Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների հարցում միջազգային պրակտիկայում ընդունված է այն սկզբունքային նոտեցումը, որ դրանք պետք է ապահովեն դատարանի սահմանադրական վերահսկողության լիազորությունների ամբողջական եւ արդյունավետ կատարումը: Դայաստանը եղակի բացառություն է, որտեղ սահմանադրական դատարանն աշխարհում գործող 108 սահմանադրական դատարանների համեմատությամբ դիմող սուբյեկտների ամենասեղմ շրջանակն ունի եւ դրանց թվով ու ընդգրկումով գտնվում է վերջին տեղում: Այս ցավակի իրողությունը լրջորեն ազդում է սահմանադրական արդարադատության արդյունավետության վրա:

Յաշվի առնելով, որ դատարան դիմող սուբյեկտների համակարգը պետք է ներդաշնակ լինի իրավասությունների համակարգին, ինչպես նաեւ նկատի ունենալով այս հարցում Գերմանիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Պորտուգալիայի, Խաղանիայի եւ մի շարք այլ երկրների փորձը, ինչպես նաեւ հատուկ այս նպատակով 1998թ. Դայաստանում Վենետիկի հանձնաժողովի փորձագետների մասնակցությամբ հրավիրված սեմինարի ու հետազա մի շարք այլ քննարկումների արդյունքները, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածն ամբողջական վերափոխման անհրաժեշտություն ունի:

3. ՀՀ գործող Սահմանադրությամբ սահմանվել են սահմանադրական դատավարության այնպիսի նորմեր, որոնք բացակայում են աշխարհի մնացած բոլոր 107 սահմանադրական դատարաններում: Մասնավորապես, ամրագրված է, որ սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ ու եղրակացություններ՝ դիմումն ստանալուց ոչ ոչ, քան երեսուն օր հետո: Նման նորմ գոյություն ունի միայն նախնական նորմատիվ վերահսկողություն իրականացնող ֆրանսիական սահմանադրական խորհրդի գործունեության առնչությամբ: Որեւէ սահմանադրական դատարան, որն իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի հետագա վերացական վերահսկողություն, կաշկանդված չէ նման սահմանադրական սահմանափակմամբ:

Ներկայում միջազգային տարբեր ատյաններում լուրջ քննարկման հարցեր են նաեւ սահմանադրական դատարանների որոշումների բնույթին, դրանց կենսագործման հիմնախնդիրներին, որոշումների սահմանադրական հետեւանքներին առնչվող հարցերը: Նկատի ունենալով, որ դատական սահմանադրական վերահսկողության լուրջ փորձ ուներ Լեհաստանը, որտեղ դեռեւ 1972 թվականից բանավեճեր էին գնում այս համակարգի բարեփոխումների ուղղությամբ, ինչպես նաեւ այն հանգանակքը, որ Լեհաստանը Արեւելյան Եվրոպայի երկրներից համեմատաբար ավելի ուշ ընդունեց նոր Սահմանադրությունը՝ հաշվի առնելով սահմանադրական զարգացումների հարուստ փորձը, ուշադրության արժանի լուծում գտավ նաեւ այս հարցի առնչությամբ (վերը հիշատակված 190 հոդվածում):

Սահմանադրական դատարանի կողմից իր որոշումների գործնականում ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանելու քայլին գնաց նաեւ Ռուսաստանի սահմանադրական դատարանը, քանի որ մի շարք գործերով որոշումների անմիջական ուժի մեջ մտնելը կարող էր առաջ բերել ածանցյալ լուրջ ոչ

սահմանադրական հետեւանքներ: Դա, մասնավորապես, վերաբերում է ՈՒՍԱՍՏԱՆԻ Դաշնության սահմանադրական դատարանի 18.02.1997թ. ընդունած որոշմանը՝ կառավարության թիվ 197 որոշման առնչությամբ:

Նման իրավասություն ունի նաեւ Գերմանիայի սահմանադրական դատարանը, որը կոնկրետացված է դատարանի մասին սահմանադրական օրենքի 31 եւ 79 պարագրաֆներում:

Նման սահմանադրական նորմի ամրագրման անհրաժեշտությունը ՀՀ Սահմանադրությամբ դրական է գնահատվում նաեւ միջազգային փորձագետների կողմից:

4. Բացառիկ կարեւոր հարց է նաեւ սահմանադրական դատարանի եզրակացությունների իրավական բնույթի հարցը: Դա ոչ թե օրենքի, այն էլ ոչ սահմանադրական կամ օրգանական, այլ սահմանադրական մակարդակում լուծվելիք խնդիր է: Եթե սահմանադրական դատարանում նրա անդամների կեսով ընդունված որոշումները վերջնական են եւ վերանայման ենթակա չեն, ապա երկու երրորդորդ ընդունված եզրակացությունները չեն կարող պարտադիր իրավական հետեւանքներ չունենալ: Դակառակ պարագայում իրավական գործընթացը ոչ թե ծառայում է քաղաքական վեճերն իրավական դաշտում լուծելուն, այլ ճիշտ հակառակը՝ իրավական խնդիրը տեղափոխվում է քաղաքական դաշտ, որն անհարի է իրավական պետության եւ իրավունքի գերակայության սկզբունքներին: Դայաստանի Հանրապետության իրավական պրակտիկայում ճիշտ մոտեցում է ծեւավորվել, մասնավորապես, Ազգային ժողովի կանոնակարգի 81 հոդվածի հիմքով, ըստ որի՝ եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահին պաշտոնական անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է քննարկումից: Նույն մոտեցումն ամրագրված է նաեւ 83 հոդվածում: Սակայն սովորական օրենքներով ննան սկզբունքային հարցի լուծումը ոչ միայն կարող է բուլացնել քաղաքական վեճերի իրավական հաղթահարման սկզբունքների հետեւողական գործադրումը, այլեւ կարող է քաղաքական շահարկումների պատճառ դառնալ՝ դրանում ներքաշելով նաեւ դատական համակարգը:

5. Միջազգային փորձը միանշանակ վկայում է, որ սահմանադրական դատարանի ակտերի իրավական բնույթը պետք է հստակ ամրագրվի Սահմանադրության մեջ: Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի լիազորություններն սպառիչ ամրագրվում են Սահմանադրությամբ, վերջինս պետք է ամրագի նաեւ դատարանի անկախության չորս հիմնական խումբ երաշխիքները (գործառնական, կառուցակարգային, նյութական եւ սոցիալական):

Եվրոպական երկրների փորձը վկայում է նաեւ, որ շատ երկրներում համանան խնդիրները լուծվել են տարիների ընթացքում, աստիճանաբար, քայլ առ քայլ բարեփոխելով սահմանադրական արդարադատության ամբողջ համակարգը: Այս առումով հատկապես հատկանշական է Ֆրանսիայի եւ Գերմանիայի փորձը: Առաջինում համանան խնդիրները լուծվեցին սահմանադրական խորհրդուն ստեղծելուց հետո շուրջ 15 տարիների ընթացքում, իսկ Գերմանիայում կազմավորման եւ ամբողջականացման այդ փուլը տեսեց մոտ 18 տարի: Սակայն մեծ վտանգ է պարունակում նաեւ հապաղումը, քանի որ բավարար հիմքերի վրա չի դրվում հասարակական խունոհանակարգը, եւ նշանակած թերությունների հետեւանքով առաջացած բացասական երեւությները կանոնական արմատակալել, մտնել իրացիոնալ վերարտադրության փուլ, վերածվել մետաստագի, որի հաղթահարումն անսաելի դժվար կլինի:

### ***6.3. Սահմանադրական արդարադատության մարմինների միջազգային համագործակցությունը<sup>27</sup>***

Սահմանադրական արդարադատության ակտիվ միջազգային համագործակցությունը բացառիկ կարեւոր նշանակություն ունի մի շարք պատճառներով.

1. Այս համակարգերը, որպես նոր երեւույթ, գտնվում են ակտիվ զարգացման փուլում եւ ունեն բազմաթիվ տեսական ու գործնական խնդիրներ, որոնք համատեղ ջանքերով ու տարբեր երկրների փորձի համադրմամբ լուծում պետք է ստանան:

2. Իրավական գլոբալիզացման ներկա միտումները խնդիր են առաջադրում գտնել Սահմանադրության գերակայության երաշխավորման այնպիսի լուծումներ, որոնք համահունչ կլինեն նաեւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

3. Հասարակական համակարգերի սահմանադրականացման ներկա ընթացքը եւ համակարգային վերափոխումների գործընթացներն առաջին ալան են մղում հասարակական անվտանգության երաշխավորման ու զարգացմանը կայուն դիմամիզմ հաղորդելու խնդիրների համագործակցաբար լուծման անհրաժեշտությունը:

Սահմանադրական արդարադատության մարմինների ակտիվ համագործակցության առաջին անկախ կառույցը «Եվրոպական երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության հիմնադրումն էր 1972թ. նախկին Հարավսլավիայի Դուբրովնիկ քաղաքում: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն այդ կազմակերպության դիտորդ անդամ է դարձել 1997 թվականին, իսկ հիմնական անդամ՝ 2000թ. մայիսին: Այս կազմակերպության հիմնական անդամների թիվը ներկայումս անցնում է 40-ից: Կոնֆերանսի հիմնական նիստերը հրավիրվում են տվյալ ժամանակահատվածում նախագահող երկրում՝ երկու տարին մեկ անգամ:

Սահմանադրական դատարանների միջազգային համագործակցության գործում առանձնահատուկ կարեւոր դեր ունի Եվրախորհրիդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), որը հիմնադրվել է 1990 թվականին՝ Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ երկրների ժողովրդավարական վերափոխումներին աջակցելու նպատակով: Հանձնաժողովը կազմված է անկախ մասնագետ-փորձագետներից եւ տալիս է իրավական եզրակացություններ սահմանադրությունների, օրենսդրական դաշտի մշակումների ու փոփոխությունների, ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորման եւ բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Սահմանադրական դատարանների համար կազմակերպվում են նաև միջազգային սեմինարներ, տարբեր հիմնահարցերի համատեղ քննարկումներ: Սկսած 1996 թվականից, Վենետիկի հանձնաժողովի եւ ՀՀ սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ Երեւանում հանատեղ հրավիրվում են ամենամյա միջազգային սեմինարներ՝ սահմանադրական արդարադատության ամենահրատաք թեմաներով: Վենետիկի հանձնաժողովը հրատարակում է սահմանադրական դատարանների դրոշումների համառոտագրերի միջազգային եռամսյակային ժողովածու եւ կազմում է տեղեկատվական CODICES էլեկտրոնային համակարգը: 1999 թվականից Վենետիկի հանձնաժողովի անդամ է ընտրվել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը:

Նորանկախ երկրների համար մեծ դեր ունեցավ 1997թ. հոկտեմբերին Երեւանում Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանների նախաձեռնությամբ «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս» միջազգային կազմակերպության հիմնումը: Ներկայումս այդ կազմակերպության անդամ են ԱՊՀ բոլոր երկրների սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինները: Երեւանում է հրատարակվում Կոնֆերանսի տեղեկագիրը՝ «Կոնստիտուցիոն պարագաներ» միջազգային հանդեսը, որն ուղարկվում է աշխարհի 38 երկիր եւ 8 միջազգային կազմակերպություններ: Կազմակորման օրվանից Կոնֆերանսի աշխատանքների համակարգումը վստահվել է ՀՀ սահմանադրական դատարանին:

Այս ոլորտում միջազգային ակտիվ համագործակցության իմաստություններից է նաև «Ֆրանսակեզու երկրների սահմանադրական արդարադատության մարմինների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որն ստեղծվել է 1997 թվականին: Այս կազմակերպության անդամ են նաև աֆրիկյան շատ երկրների նորաստեղծ սահմանադրական դատարաններ:

1992 թվականին հիմնադրվել է նաև «Հարավամերիկյան սահմանադրական վերահսկողության մարմինների խումբ» կազմակերպությունը, որին անդամակցում է 10 երկիր:


Առանձնահատուկ կարեւոր դեր է կատարում այս ոլորտում նաև Սահմանադրական իրավունքի միջազգային ասոցիացիան, որի հիմնական անդամ է նաև ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնը:

- 1.** Արտակ Մովսիսյան. «Դնագույն պետությունը Հայաստանում», Երեւան, 1992 , էջ 53:
- 2.** Խաչիկ Սամուելյան. «Դին հայ իրավունքի պատմություն», հատոր 1, Երեւան, 1939, էջ 26:
- 3.** Խաչիկ Սամուելյան. «Դին հայ իրավունքի պատմություն», հատոր 1, Երեւան, 1939, էջ 34-35:
- 4.** Չափազանց հետաքրքիր է, որ, բացի Շահապիվանի ժողովի կանոնախմբից, հայ միջնադարյան մյուս կանոնախմբերը, որպես կանոն, մարմնական պատիմներ չեն նախատեսում (տես. «Կանոնագիրը Հայոց». Վազգեն Տակորյան, 1964թ. գիրը Ա, էջ XI): Կանոնագրում պատիմը գերազանցապես կապվում է ապաշխարության կրոնական գաղափարի հետ (սա, ըստ Էռլիքյան, Նարեկյան փիլիսոփայություն է եւ, առավելապես, ոչ միայն քրիստոնեական, այլև ազգային բնութագրիչ): Հայ միջնադարյան կանոնակարգային օլիխավոր սկզբունքն է եղել խրատի, բարոյական դատապարտնան եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները: Դրան հակառակ, Դատաստանագրքերում ապաշխարության պահը նվազ նշանակություն ունի: Այստեղ հանդես է գալիս քրեական պատասխանատվության եւ պատժի հարցը՝ այս տերմինների արդի ընթանամբ (նույն տեղում՝ էջ VII):
- 5.** Մասնավորապես տես. Կ. Ղահրամանյան, Վ. Շովիաննիսյան, 1500-ամյա հայկական Սահմանադրությունը, Երեւան, 1999թ.:
- 6.** Զետքը է կարծել, թե 1988 -1991 թվականներին ԽՍՀՄ հավանական ու հնարավոր փլուզումը կանխատեսելի չէր: Շատերի կողմից նման միտումները նկատվել էին դեռեւս ավելի վաղ, կամ դրան էին հանգել տրամաբանական հետեւությամբ: Հայաստանում շատերի համար արդեն իսկ 1989թ. կեսերից միարձեք պարզ էր, որ փլուզումն անխուսափելի է դառնում: Անկախ դրանից, 1990 թվականի օգոստոսի 23-ի Շոշակագրով Հայաստանն ազդարարեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, որը ենթադրում էր նաեւ նախապատրաստական տեսական աշխատանք: Սակայն որեւէ հանրապետություն, առանձին վերցրած, էական քիչ բան կարող էր անել: Իրադարձությունները թե ԽՍՀՄ-ում եւ թե Արեւելյան Եվրոպայում դուրս էին եկել կառավարելի հունից, թելադրում էին իրենց տրամաբանությունը եւ ընթացան փլուզման ճանապարհով:
- 7.** Ամերամեջտ է հատկապես նշել 1990-1991 թվականներին Գերագույն խորհրդի կողմից ընդունված մի շարք օրենքներն ու որոշումները, որոնք թե քաղաքական եւ թե տնտեսական կյանքի արմատական վերափոխումների գործում կողմնորոշիչ ու հիմնարար նշանակություն ունեցան:
- 8.** Մասնավորապես տես. «Սահմանադրական վերահսկողությունը եւ ժողովրդավարական գործընթացները նորանկախ երկրներում»: Միջազգային սեմինարի նյութերի ժողովածու, Երեւան, 16-18 հոկտեմբերի 1996թ., էջ 41-47:
- 9.** John E. Nowak, Ronald D. Rotunda, **Constitutional Law**, Fifth edition. West Publishing Co.1995, էջ 4:
- 10.** Այդ մասին մանրամասն տես.Sylvia Snowiss, **Judicial Review and the Law of the Constitution**. Yale University Press, 1990, էջ 108-174:
- 11.** Մասնավորապես տես. Защита основных прав Конституционным судом. Европейская Комиссия за демократию через право. Издание Совета Европы, 1995, էջեր 40-41:
- 12.** Առանձին երկրներում (օր. Իտալիան) սահմանադրական դատարանը չի դիտարկվում որպես դատական իշխանության մարմին եւ Սահմանադրության մեջ ներկայացվում է ինքնուրույն բաժնով:
- 13.** Հետաքրքիր է նաեւ Խսպանիայի օրինակը, որտեղ 1980թ. հուլիսի 15-ից մինչեւ 1994թ. դեկտեմբերի 31-ը սահմանադրական դատարանում գրանցվել է 29814 գործ, որից 28106-ը կամ 94,3 տոկոսը եղել են անհատական դիմումների հիման վրա (տես. Защита основных прав Конституционным судом. Европейская Комиссия за демократию через право. Издание Совета Европы, 1995, 1995, էջ 5):
- 14.** Մասնավորապես տես. Защита основных прав Конституционным судом. Европейская Комиссия за демократию через право. Издание Совета Европы, 1995, էջ 52-54:
- 15.**Տես. Юридический вестник, 1997, թիվ 1, էջ 4 :

- 16.** Թերեւս պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջիններից իտալիան (1948թ.) ու Երմանիան (1949թ.) էին, որ նոր Սահմանադրությամբ հաստատագրեցին սահմանադրական վերահսկողության մասմագիտացված ինստիտուտների՝ դատարանների, ստեղծման հանգամանքը:
- 17.** Ор. Шулиженко Ю. Л. Конституционный контроли в России. М. 1995, էջ 1516
- 18.** Մասմավորապես տես, Բօբոտօվ Ս. Վ. Конституционная юстиция. М. 1994, էջ 64:
- 19.** Այդ մասին մանրանասն տես. թ. Արդյունյան, Կոնստիտուցիոննայ Սուդ և համարակալության համար առաջնային առողջության մասին մասմագիտացված ինստիտուտների դատարանների ստեղծման հանգամանքը:
- 20.** Այս մասին մանրանասն տես. Գ.Գ. Դարությունյան: Իրավունք եւ երաշխիք, Երեւան, 1999թ.:
- 21.** Օրինակ, Երմանիայում Դաշնային սահմանադրական դատարան մուտք եղած միջին տարեկան հինգ հազար բողոքների 98 տոկոսը գտվում է եւ միայն 2 տոկոսն է լուրջ սահմանադրականության խնդիր պարունակում ( տես. Օբщая теория прав человека. М., Норма, 1996, էջ 339 ):
- 22.** Տես. КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО : ВОСТОЧНОЕВРОПЙСКОЕ ОБОЗРЕНИЕ, 1996, համար 2, էջ 2
- 23.** \* Տես. Экономика и жизнь, 1997, թիվ 9, զ 17:
- 24.** Այդ խնդրին է ամբողջությամբ նվիրված Զոյլ Շալմանի Կոնституции и экономическая реформа в переходный период վերտառությամբ ուշադրության արժանի հոդվածը՝ տպագրված ԿОНСТИТУЦИОННОЕ ПРАВО : ВОСТОЧНОЕВРОПЙСКОЕ ОБОЗРЕНИЕ ամսագրի 1996 թ. Երկրորդ համարում:
- 25.** Տես. «Սահմանադրական վերահսկողությունը եւ ժողովրդավարական գործընթացները նորանկախ Երկրներում». Միջազգային սեմինարի նյութերի ժողովածու (Երեւան, 16-18 հոկտեմբերի 1996թ.), էջ 32:
- 26.** Այդ մասին մասմավորապես տես. Основы применения кибернетики в правоведении, М., Юридическая литература, 1977г., Правовая кибернетика. Учебное пособие под ред. Н. С. Полевого, М., Юридическая литература, 1987г.
- 27** Այս մասին տես. Արդյունյան Գ. Գ. Կոնստիտուցիոննայ Սուդ և համարակալության համար առաջնային առողջության մասմագիտացված ինստիտուտների դատարանների ստեղծման հանգամանքը:


**Սխեմա 1.**

**ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՄՓԻ ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**




**Սխեմա 2.**

## ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՅԱՇԽԱՏԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ




Սխեմա 3.

## ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԲԵՐԸ



#### Սխեմա 4.

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՔՆԱՏՐԱԿ ՊԵՏՈՒԹ-ՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱՀՐԱՄԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱԳՐԻՉՆԵՐԸ**




#### Սխեմա 5.

**ՍԵՎՈՇՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՍՄԱԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՀԱՄԱԿԱՆ ԲՆՈԼԻԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ**




**Սխեմա 6.**

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԿՄՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԵ




Սխեմա 7.

## ՄԱՀՍՏԱԳՐԱԿԱՆ ՀՆԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՎԱՑՈՂ ՄԱՐՄԻՆԵՐԻ ՀԱՍՏԿԱԳԸ




**Սխեմա 8.**

**ՍԱՀՄԱՆՎԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԳԱՏԱԿԱՆ ԽԸՆՈՒԹՅՅԱՆ  
ԱՅԼ ՄԱՐՍԻՆԵՐԻ ԳՈՐԾՎԿՑՈՒԹՅՈՒՆԸ**




**Սխեմա 9.**

## ՀԱՍՏԱՏՈՒՅՑԻՆ ԹՆԱԼԹԱԳՐԻՉՆԵՐ




**Սխեմա 10.**

## ՀՀ ԿՈՐՈՆԱԻ ԻՐԱՎՈՒՅՑԻ ԱԿՏԵՐԻ ՍԱՀՄԱՆԸԳՐՈՒՅՆ ԱՌԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




Սխեմա 11.

## ՄԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՅՆ ԸՆԴԾԱԿԱԿԱՐ



Սխեմա 12.



$V_i$  - իշխանության  $i$ -րդ ճյուղն է,

$f(t)$  - առելուկան իշխանության գործառույթն է՝ ժամանակի եղողվարություն,

$F_i$  - իշխանության  $i$ -րդ ճյուղի գործառույթների ամբողջությունն է,

$A_i$  - իշխանության  $i$ -րդ ճյուղի լիազորությունների ամբողջությունն է.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Арутюнян Г., Конституционный Суд в системе государственной власти /Сравнительный анализ/. Ереван, "Нжар", 1999
2. Арутюнян Г., Конституционный контроль: характер функционирования и развития системы. М., 1997
3. Баглай М., Конституционное право Российской Федерации. Учебник для вузов. М., 2000
4. Боботов С. В., Конституционная юстиция. М., 1994
5. Баренбойм П., 3000 лет доктрины разделения властей. Суд Сьютера: Учебное пособие - М., Белые альвы, 1996
6. Витрук Н. В., Конституционное правосудие. М., 1998
7. Витрук Н. В., Конституционное правосудие в России (1991-2001гг.). М., 2001
8. В. С. Нерсесянц, Теория права и государства, М., "НОРМА", 2001
9. Давид Рене; Жоффре-Синози К. Основные правовые системы современности. - М., Международные отношения, 1996
10. Европейская Конвенция о защите прав человека и основных свобод и дополнительные протоколы. - М., НОРМА, 1996
11. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, «Մխիթար Գոշ», Երևան, 1996
12. Գ. Հարությունյան. Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն): Երևան, «Նժար», 1997
13. Գ. Հարությունյան. Իրավունք եւ երաշխիք: Երևան, «Նժար», 1999
14. Գ. Հարությունյան. Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, «Նժար», 2000
15. Գ. Հարությունյան, Վ. Ստեփանյան, Վ. Շովիաննիսյան. Սահմանադրական վերահսկողություն (ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար): Երևան, 1997
16. Սահմանադրական վերահսկողությունը եւ ժողովրդավարական գործընթացները նորանկախ երկրներում: Միջազգային սեմինարի նյութերի ժողովածու (Երևան, 16-18 հոկտեմբերի 1996թ.)
17. Յ. Խաչատրյան. Սահմանադրական վերահսկողություն եւ սահմանադրական դատարան: Երևան, «Արեգ», 1993
18. Յ. Խաչատրյան. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Երևան, 1997
19. Защита основных прав Конституционным судом. Европейская Комиссия за демократию через право. Издание Совета Европы, 1995
20. Иностранные Конституционное право (под редакцией Маклакова В. В.). - М., Юристъ, 1996
21. Конституционное правосудие в странах СНГ и Балтии. Сборник нормативных актов. М., 1998

22. Конституционное правосудие /Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии/, Ереван, 1998, выпуск 1
23. Кряжков В., Лазарев Л., Конституционная юстиция в Российской Федерации. Учебное пособие. М., 1998
24. Конституционное правосудие в субъектах Российской Федерации. Сборник нормативных актов. М., 1997
25. Конституции зарубежных государств. Учебное пособие. М., 1996
26. Конституционное (государственное) право зарубежных стран. Учебник. М., 1996
27. Конституционное (государственное) право зарубежных стран: Учебное пособие, том 1-2 (ред. Страшун Б. А.). - М., БЕК, 1996
28. Конституции государств Восточной Европы: Учебное и справочное пособие (под редакцией Ковачева Д. А.). - М., изд. группа ИНФРА. М-НОРМА, 1996
29. Мишин А. А., Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник - М.: Белые альвы, 1996
30. Овсепян Ж. И., Становление конституционных и уставных судов в субъектах Российской Федерации (1990-2000гг.). М., 2001
31. Современные зарубежные конституции. Под ред. В.В. Маклакова. М., 1992
32. Современные зарубежные Конституции: Сборник документов по конституционному праву зарубежных стран.- М., 1996
33. Сравнительное конституционное право. Издат. Рос.АН. М., 1996
34. Теория права: новые идеи. Выпуск 4. Авторская монография. М. 1995
35. Туманов В.А., Судебный контроль за конституционностью нормативных актов. Ж. „Сов. Государство и право,, З. М. 1988
36. Тихомиров Ю. А., Курс сравнительного правоведения. - М.; НОРМА, 1996.
37. Шульженко Ю. Л., Конституционный контроль в России. - М.; 1995
38. Штайнбергер, Гельмут, Модели конституционной юрисдикции. - Страсбург.: Изд. Совета Европы, 1994
39. Эбзеев Б., Конституция. Правовое государство. Конституционный суд: Учебное пособие. - М.: Закон и Право, ЮНИТИ, 1996
40. Энтин Л. М., Разделение властей: опыт современных государств. - М.: Юрид, Лит., 1995
41. G. Harutyunyan, A. Mavčić, THE CONSTITUTIONAL REVIEW AND ITS DEVELOPMENT IN THE MODERN WORLD (A COMPARATIVE CONSTITUTIONAL ANALYSIS), Yerevan - Ljubljana, 1999, 463 p.